

**ՀՀ ՎՃՈՎԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾ ԹԻՎ
ՍՆԴ/0555/04/20 ՄԱՍԻՆ**

Գլխավոր տեղեկություն

Տիպ Որոշում

Ակտի տիպ Հիմնական ակտ (23.01.2023-մինչ օրս)

Կարգավիճակ Գործում է

Սկզբնաղբյուր Միասնական կայք 2023.11.27-2023.12.10
Պաշտոնական հրապարակման օրը 28.11.2023

Ընդունող մարմին Վճռաբեկ դատարան

Ընդունման ամսաթիվ 23.01.2023

Ստորագրող մարմին Նախագահող

Ստորագրման ամսաթիվ 23.01.2023

Ուժի մեջ մտնելու ամսաթիվ 23.01.2023

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում
Մանկության գործ թիվ ՍՆԴ/0555/04/20
Նախագահող դատավոր՝ Հ. Ենոքյան
Դատավորներ՝ Ն. Բարսեղյան
Տ. Նազարյան

2023 թ.
Մանկության գործ թիվ ՍՆԴ/0555/04/20

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒԼԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը
(այսուհետ՝ վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

**Նախագահող
գեկուցող**

**Մ. Դրմեյան
Ս. Անտոնյոն
Ա. Բարսեղյան
Գ. Հակոբյան
Ա. Մկրտչյան
Տ. Պետրոսյան
Է. Սեդրակյան**

2023 թվականի հունվարի 23-ին
գրավոր ընթացակարգով քննելով «Բեյզ Մեթրյու» ՓԲԸ-ի և «Քեյ Էս Էմ Էյ» ՓԲԸ-ի վճռաբեկ
բողոքները ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.03.2021 թվականի որոշման դեմ՝
ըստ դիմումի «Արցախտրանս» ՍՊԸ-ի՝ «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ին սնանկ
ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ «Արցախտրանս» ՍՊԸ-ն պահանջել է «Արմենիան Քափըր Փրոգրամ»
ՓԲԸ-ին ճանաչել սնանկ:

ՀՀ սնանկության դատարանի (դատավոր՝ Գ. Ավագյան) (այսուհետ՝ Դատարան) 30.04.2020
թվականի վճռով դիմումը բավարարվել է:

Դատարանի 20.11.2020 թվականի որոշմամբ հաստատվել է պահանջների վերջնական
ցուցակը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան)
04.03.2021 թվականի որոշմամբ «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի, «ՎՏԲ Բանկ» ՀԲԸ-ի,
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի, «Նաիրի Ինֆրասթրաքչր Բեփիթել Լիմիթեդ» ՓԲԸ-ի և
«Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի վերաքննիչ բողոքները բավարարվել են Դատարանի
«Պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին» 20.11.2020 թվականի որոշումը՝
«ՎՏԲ Բանկ» ՀԲԸ-ի՝ 331.798.991,17 ԱՄՆ դոլարի չափով պահանջի քննությունը կասեցնելու,
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի՝ 73.787.914,27 ԱՄՆ դոլարի չափով պահանջի քննությունը
վերադարձնելու, «Նաիրի Ինֆրասթրաքչր Բեփիթել Լիմիթեդ» ՓԲԸ-ի՝ 38.500.000 ԱՄՆ դոլարի չափով
պահանջի գրանցումը մերժելու և «Քեյ Էս Էմ Էյ» ՓԲԸ-ի՝ 451.644,41 ֆունտ ստերլինգի չափով
պահանջը գրանցելու մասերով վերացվել և այդ մասերով հարցն ուղարկվել է նույն դատարան՝
նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոքներ են ներկայացրել «Բեյզ Մեթրյու» ՓԲԸ-ն և «Քեյ Էս Էմ Էյ»
ՓԲԸ-ն (ներկայացուցիչներ Գևորգ Պողոսյան, Նարինե Բաբայան):

Վճռաբեկ բողոքի պատասխաններ են ներկայացրել «ՎՏԲ Բանկ» ՀԲԸ-ն, «ՎՏԲ-Հայաստան
Բանկ» ՓԲԸ-ն, «Նաիրի Ինֆրասթրաքչր Բեփիթել Լիմիթեդ» ՓԲԸ-ն (ներկայացուցիչ Վահագն
Դավաթյան):

2. «Բեյզ Մեթրյու» ՓԲԸ-ի վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

«Բեյզ Մեթրյու» ՓԲԸ-ի վճռաբեկ բողոքը «Նաիրի Ինֆրասթրաքչր Բեփիթել Լիմիթեդ» ՍՊԸ-ի
բավարարված վերաքննիչ բողոքի մասի վերաբերյալ.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ
հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 9-րդ
հոդվածի 1-ին մասը, 380-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, կիրառել է ՀՀ քաղաքացիական
դատավարության օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասը, որը չպետք է կիրառել, չի կիրառել

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասը, որը պետք է կիրառել:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն իր կողմից կայացված որոշմամբ, ըստ էության հաստատված է համարել այն հանգամանքը, որ Դատարանն իրավաչափ եզրահանգման է եկել, որ «Նաիրի Ինֆրասթրաքչր Զեփիթել Լիմիթեդ» ՍՊԸ-ի կողմից դատարան ներկայացված փաստաթուղթը ենթակա չէ ընդունման և հետազոտման՝ որպես փորձագետի եզրակացություն, քանի որ այն չի համապատասխանում ապացույցի նման տեսակին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով առաջադրվող պայմաններին ու պահանջներին:

Վերաքննիչ դատարանը «Նաիրի Ինֆրասթրաքչր Զեփիթել Լիմիթեդ» ՍՊԸ-ի կողմից վերաքննիչ բողոքում վկայակոչված թիվ ԵՄԴ/0341/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 10.04.2020 թվականի որոշումը պարզապես մեջ է բերել նույն ծավալով և բովանդակությամբ, ինչ ծավալով և բովանդակությամբ այն նշված է համապատասխան վերաքննիչ բողոքում, հաշվի չառնելով այն հանգամանքը, որ դրանից արված մեջբերումը կտրված է համապատասխան որոշման կոնտեքստից, և դրա կիրառումը սույն սևանկության գործով քննության առարկա իրավահարաբերությունների կարգավորման նպատակով ակնհայտորեն հանգեցրել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորումների սխալ կիրառման, ինչպես նաև նույն օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորումների չկիրառման, որոնք ազդել են գործի ելքի վրա:

ՀՀ վճռաբեկ դատարանի որոշման կիրառումը տեղի է ունեցել համատեքստից կտրված ու սահմանափակ եղանակով՝ հանգեցնելով գործի ելքի վրա էական ազդեցություն ունեցող, ըստ էության սխալ եզրահանգումների: Միաժամանակ համապատասխան փաստաթուղթը չէր կարող դիտարկվել որպես հասարակ գրավոր ապացույց երկու հիմնական պատճառաբանության հաշվառմամբ.

Նախ, Վերաքննիչ բողոք ներկայացրած անձը նման միջնորդություն չի ներկայացրել և չի նշել այն հանգամանքները, որոնք պետք է ապացուցվեին համապատասխան գրավոր ապացույցի հիման վրա, բացի այս, որոշակի հատուկ գիտելիքների օգտագործում պահանջող հարցերի բացահայտման և պարզաբանման նպատակով կիրառելի ապացույց է հանդիսանում փորձագետի եզրակացությունը, իսկ փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Վերագրյալ հանգամանքներին, ինչպես նաև գրավոր ապացույցի՝ որպես ապացույցի տեսակի ընդունելիության չափանիշների և դրանց առանձնահատկությունների վերաբերյալ իր նախադեպային դիրքորոշումն է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանը, սահմանելով որ.

«(...) դատարանը յուրաքանչյուր ապացույց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է այդ ապացույցը վերաբերելի և թույլատրելի տվյալ փաստական հանգամանքը հաստատելու կամ մերժելու համար *(տե՛ս, Ավետիսյան Ժուլիկյանն ընդդեմ Անահիտ Խաչատրյանի թիվ ԵՄԴ/0232/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը)*»:

«... Յուրաքանչյուր դեպքում որևէ ապացույցի թույլատրելիության հարցը լուծելիս դատարանները պետք է ղեկավարվեն հետևյալ կանոններով.

1) գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը կարող է հաստատվել բացառապես օրենքով նախատեսված ապացույցներով.

Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի իրավակարգավորումից, որով սպառնիչ սահմանված է ապացուցման միջոցների շրջանակը:

2) օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցներն իրավաբանական ուժ չունեն և չեն կարող դրվել դատարանի վճռի հիմքում. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված թույլատրելիության նշված կանոնը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ենթադրում է ապացույցի դատավարական ձևի համապատասխանությունն օրենքի պահանջներին՝ աղբյուրի, ստացման եղանակի, պայմանների, ինչպես նաև ապացույցի ձևակերպման տեսանկյունից *(տե՛ս, թիվ ԵԿԴ/2593/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը)*»:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ.

«... ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի հիմքով գրավոր ապացույց համարվելու համար անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան ապացույցը պարունակի գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին տեղեկություններ, այսինքն՝ իր բովանդակությամբ հնարավորություն տա դատարանին պարզելու գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այլ կերպ ասած՝ գրավոր ապացույցները դատարանի համար էական նշանակություն ունեն իրենց բովանդակության տեսակետից, գրավոր ապացույցներում ապացուցողական նշանակություն ունի որոշակի նյութական կրիչներում արտացոլված միտքը, որն ընկալվում է ընթերցման միջոցով *(տե՛ս Հրանտ Ավետիսյանն ընդդեմ «ՏՐԱՆՍՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/4542/02/14 քաղաքացիական գործով ՀՀ*

վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը)»:

Սույն դեպքում, «Նաիրի Ինֆրասթրաքչր Զեփիթել Լիմիթեդ» ՍՊ ընկերության կողմից դատարան ներկայացված 20.09.2019 թվականի Թիմոթի Ջ Ալլենի և Անաստասիյա Մայուզինայի փորձագիտական եզրակացությունը և 23.09.2020 թվականին տրված փորձագետ Անաստասիյա Մայուզինայի եզրակացությունը չեն կարող համարվել թույլատրելի ապացույցներ, քանի որ սույն գործով չի պահպանվել եզրակացություններ տրված փորձագետների կողմից դատական նիստի ընթացքում դատարանի առջև ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար քրեական պատասխանատվության մասին նախազգուշացված լինելու և դրանք հաստատելու դատավարական կարգը, ուստի դրանք սույն սնանկության գործով որևէ փաստ ապացուցելու հիմքում չեն կարող դրվել: Ընդ որում, դատական նիստի ընթացքում, դատավարության մասնակիցների ներկայությամբ քննարկվել է վերորոյալ եզրակացությունը տված փորձագետների ներկայությունը դատական նիստում ապահովելու հարցը, մինչդեռ եզրակացություն ներկայացրած Վահագն Դալլաքյանը որևէ գործողություն չի իրականացրել փորձագիտական եզրակացություն տված փորձագետի ներկայությունը դատական նիստում ապահովելու ուղղությամբ:

Բացի այդ, «ՎՏԲ Բանկ» ՀԲ ընկերությունը 2018 թվականի եռամսյակային տարեկան իր պաշտոնական կոնսոլիդացված հաշվետվությամբ հրապարակել է «Թեղուտ Ինվեստմենտս Լիմիթեդ» ընկերության 100 տոկոս բաժնետոմսերի նկատմամբ իր միանձնյա սեփականության իրավունքը՝ սահմանելով դրանց արժեքը 22 միլիարդ ռուբլի: Այսինքն՝ վերը նշված կոնսոլիդացված հաշվետվությամբ արտացոլված տվյալներն ինքնին հակասության մեջ են գտնվում 20.09.2019 թվականին Թիմոթի Ջ Ալլենի և Անաստասիյա Մայուզինայի փորձագիտական եզրակացությամբ և 23.09.2020 թվականին տրված փորձագետ Անաստասիյա Մայուզինայի եզրակացությամբ արտացոլված տվյալների հետ, մասնավորապես՝ «Թեղուտ Ինվեստմենտս Լիմիթեդ» ընկերության բաժնետոմսերի արժեքը պաշտոնական կոնսոլիդացված հաշվետվությամբ այլ է, իսկ եզրակացություններով՝ այլ, որպիսի փաստի ուժով 20.09.2019 թվականին Թիմոթի Ջ. Ալլենի և Անաստասիյա Մայուզինայի փորձագիտական եզրակացությամբ և 23.09.2020 թվականին տրված փորձագետ Անաստասիյա Մայուզինայի եզրակացությամբ արտացոլված բաժնետոմսերի արժեքը չի կարող դիտվել որպես արժանահավատ տեղեկատվություն:

Սնանկության գործին կից ներկայացված Օպցիոն համաձայնագրով և դրա փոփոխություններով վերաքննիչ բողոք ներկայացրած անձի պահանջի հիմքում դրված օպցիոնի պայմանների կիրառման պարտապանի պարտավորությունը ամենևին միակողմ չէ, քանի որ ներկայացված պահանջը բխում է ոչ թե Պարտապանի միակողմ պարտավորությունից, այլ Պարտապանին փոխանցման ենթակա՝ TEGHOUT INVESTMENTS LIMITED ընկերության կանոնադրական կապիտալի բաժնետոմսերի 49.95%-ի հետ կապված իրավահարաբերություններից: Ի մասնավորի՝ ենթադրյալ պարտատերը իր պահանջի դիմաց պետք է կատարեր հետևյալ երկու պարտադիր գործողությունները.

- 1 ԱՄՆ դոլար անվանական արժեքով Պարտապանին պետք է փոխանցեր TEGHOUT INVESTMENTS LIMITED ընկերության կանոնադրական կապիտալի բաժնետոմսերի 25% + 1 ձայնը,

- Պարտապանին՝ հիշյալ արժեքով պետք է փոխանցեր նույն ընկերության կանոնադրական կապիտալի բաժնետոմսերի 24.95%-ը, ինչը ևս մինչ օրս կատարված չէ և փաստացի չի նախատեսվում կատարել:

Վերոգրյալ հանգամանքների վերաբերյալ Վերաքննիչ դատարանն իր կողմից կայացված որոշմամբ պարզապես ենթադրել է, որ ըստ պարտատիրոջ վկայակոչման՝ վնասը ծագել է կողմերի միջև կնքված Օպցիոն պայմանագրի չկատարման հետևանքով, մասնավորապես՝ բաժնետոմսերը պայմանագրով սահմանված արժեքով գնելու պարտականությունը չկատարելու հետևանքով: Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավակարգավորումը: Սահմանելով, որ ենթադրյալ գրավոր ապացույցը սնանկության գործի նյութերում առկա այլ ապացույցների հետ համադրման և բազմակողմանի գնահատման արդյունքում պետք է առանձին որակման արժանանա՝ Վերաքննիչ դատարանը, գործի ելքի վրա դրա ազդեցության տեսանկյունից, փաստել է, որ համապատասխան ենթադրյալ ապացույցը դեռ պատշաճ ուսումնասիրված չէ և դեռ պետք է համարժեք գնահատականի արժանանա նոր քննության ընթացքում, այնուամենայնիվ, դրանից բխող ենթադրություններ է կատարել, սահմանելով դրանց հիման վրա վերաքննիչ բողոք ներկայացրած անձի անհիմն փաստարկների անվիճելիությունը և չի անդրադարձել համապատասխան վերաքննիչ բողոքի պատասխանում ներկայացված հակափաստարկներին՝ խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասով, 380-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված կարգավորումները, այսինքն՝ ինքն իսկ իր ենթադրություններով հակասել է իր կողմից կայացված որոշման բովանդակությանը:

Վերաքննիչ դատարանը պարտավոր էր, սակայն չի իրականացրել վերաքննիչ բողոքի պատասխանի պատշաճ գնահատում, ինչի արդյունքում միակողմ ուսումնասիրության հետևանքով, նախ, որոշել է գրավոր ապացույց չհանդիսացող, ինչպես նաև գործի ելքի վրա ազդեցություն չունեցող փաստաթուղթը գնահատել որպես գրավոր ապացույց և դրա հետազոտման համար գործն ուղարկել Դատարան նոր քննության: Այնուհետ, հակասելով ինքն իր ենթադրություններին և որևէ կերպ գնահատական չտալով վերաքննիչ բողոքի պատասխանում նշված հիմքերին ու հիմնավորումներին, միակողմ և կողմնակալ

ենթադրություններ է կատարել հոգևոր վերաքննիչ բողոք ներկայացրած անձի՝ խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորումները:

Վերաքննիչ դատարանը դուրս է եկել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված վերաքննության սահմաններից, որոնք կարգավորվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասով, չնայած, որ իր որոշմամբ Վերաքննիչ դատարանը քանիցս նշել է, որ.

«Վերաքննիչ դատարանն անհրաժեշտ է համարում հիշատակել, որ վերաքննիչ բողոքը քննվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում»:

Հատկանշական է, որ թեպետ Վերաքննիչ դատարանը նշել է որոշակի հանգամանքների նոր քննության անհրաժեշտությունը, փաստելով այն, որ դրանք չեն հետազոտվել Դատարանում իրականացված քննության ընթացքում, հակասելով ինքն իրեն, ինչպես նաև խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգավորումները, կատարել է եզրահանգումներ ոչ թե վերաքննիչ բողոքի, այլ Դատարանի կողմից կայացված ակտի վերաբերյալ առհասարակ՝ կատարելով անհասկանալի և չպատճառաբանված ենթադրություններ:

Այս մասով ևս, ՀՀ վճռաբեկ դատարանը կատարել է անհրաժեշտ վերլուծություններ, որոնցով փաստել է այն հանգամանքը, որ

«(...) ոչ լրիվ վերաքննության պարագայում վերաքննիչ դատարանը վերանայում է առաջին ատյանի դատական ակտը, այլ ոչ թե՝ գործն ընդհանրապես (տե՛ս, օրինակ, թիվ ԵԿԴ/2680/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը)»:

Վերաքննիչ դատարանը, սակայն, հարկ չի համարել հետևել ՀՀ վճռաբեկ դատարանի նման եզրահանգումներին, և դուրս գալով վերաքննության սահմաններից՝ կատարել է վերաքննիչ բողոքի հիմքերում ու հիմնավորումներում տեղ չգտած փաստերի վրա ենթադրություններ՝ նշելով նաև, որ դրանք վերաքննիչ բողոք ներկայացրած անձի պնդումներն են:

«Բեյզ Մեթրյս» ՓԲԸ-ի վճռաբեկ բողոքը «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության և «ՎՏԲ Բանկ» հանրային բաժնետիրական ընկերության բավարարված վերաքննիչ բողոքի մասի վերաբերյալ.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 9-րդ, 66-րդ, 157-րդ հոդվածները, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20.1-րդ հոդվածը, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 430-րդ հոդվածը:

Վերաքննիչ դատարանը, խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածով սահմանված պահանջները, կայացրել է միակողմ և չպատճառաբանված դատական ակտ, որում պարզապես առանց բավարար հիմնավորումների ու փաստարկների հաստատված է համարել Վերաքննիչ բողոք ներկայացրած անձի՝ որևէ ապացույցի վրա չհիմնված ենթադրությունները:

Ընդ որում, ինչպես երևում է սույն վճռաբեկ բողոքի կետերում նշված պնդումներից, Վերաքննիչ դատարանը չի ուսումնասիրել իր կողմից քննվող հանգամանքի՝ պարտավորությունը նորացմամբ դադարած լինելու վերաբերյալ առկա մի շարք դատական գործերի առկայությունն ու համապատասխան փաստի քննարկումը և դրա վերաբերյալ եզրակացությունների առկայությունը համապատասխան դատական գործերով, այլ, խախտելով «իրավական որոշակիության» հիմնարար սկզբունքի պայմանները՝ առանձին եզրահանգում է կատարել համապատասխան հանգամանքի առկայության կամ բացակայության վերաբերյալ:

Վերոգրյալ դատավարական խախտումների արդյունքում Վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 430-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումները. իրավական որոշակիության սկզբունքի պահանջների խախտմամբ վերացական եզրահանգումներ է կատարել հիմնական պարտավորությունների դադարած լինելու վերաբերյալ՝ անտեսելով նույն հանգամանքի առկայության/բացակայության վերաբերյալ այլ դատական ակտերի սահմանումները, ինչպես նաև այն հանգամանքը, որ թեպետ սնանկության վարույթում հաստատված հանգամանքները նախադատելի համարվել չեն կարող՝ հաշվի առնելով սնանկության գործընթացի առանձնահատկությունները և այն, որ պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշումն ինքնին չի հանդիսանում վերջնական դատական ակտ, դրանով հաստատված հանգամանքները նախադատելի չեն կարող հանդիսանալ այլ վարույթների ընթացքում, մինչդեռ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացված վերջնական դատական ակտերով հաստատված փաստական հանգամանքները սնանկության գործընթացում հանդիսանում են նախադատելի փաստեր:

Հատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ սույն իրավահարաբերություններում պարտավորության նորացման հանգամանքի առկայության վերաբերյալ եզրահանգումները նույնն են վերաքննիչ բողոք բերած անձի կողմից սնանկության գործի վարույթում ներկայացված պահանջների հիմքում ընկած իրավահարաբերությունների առկայության/բացակայության փաստի քննության արդյունքում Երևան քաղաքի առաջին

ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԴ/27276/02/19 քաղաքացիական գործով կայացված դատական ակտում պարունակվող վերլուծության և եզրահանգումների լույսի ներքո, ինչպես նաև համապատասխան գործով 05.05.2020 թվականին կայացված վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի հիման վրա իրականացված քննությամբ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից 03.08.2020 թվականին կայացված որոշմամբ կատարված վերլուծությունների և եզրահանգումների լույսի ներքո և այս մասով վերաքննիչ բողոքի պատասխանին Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատական չի տվել՝ խախտելով վճռաբեկ դատարանի նախադեպային որոշմամբ սահմանված պահանջները:

Այսինքն՝ երեք դատական կազմի կողմից միևնույն եզրակացություն և արվել քննարկվող իրավահարաբերությունների վերաբերյալ՝ սահմանելով քննարկվող իրավահարաբերություններում նորացման առկայությունը, իսկ Վերաքննիչ դատարանն անհիմն կերպով, հիմնվելով բացառապես վերաքննիչ բողոք բերած անձի անապացույց փաստարկների վրա, առանց որևէ պատճառաբանության, խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածով սահմանված պահանջները, պարզապես ամրագրել է, որ նորացում քննարկվող իրավահարաբերություններում առկա չէ:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախադեպային բազմաթիվ որոշումներում անդրադարձել է դատական ակտերի հիմնավորվածության և պատճառաբանվածության հարցին՝ այդ կապակցությամբ նշելով, որ.

«... յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի թե՛ փաստական և թե՛ իրավական հիմնավորումը: Վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին: Վճռում ոչ միայն պետք է ցույց տրվի նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլև պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը: Վճռի իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա վճռի իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական վճռի օրինականությունը (տե՛ս, *Ռազմիկ Մարությանի ընդդեմ Ստեփան և Անահիտ Մարությանների, ՀՀ Կենտրոն նոտարական գրասենյակի թիվ 3-54(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի որոշում*)»:

Երաշխավորության դադարման հիմքերի առկայությամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ դիրքորոշումը՝

«(...) բացի պարտավորությունների դադարման ընդհանուր հիմքերից, երաշխավորությունը դադարում է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 382-րդ հոդվածով նախատեսված հիմքերի առկայության դեպքում: Նման հիմքերից մեկն էլ հիմնական պարտավորության դադարումն է, որպիսի հիմքի առկայությունը պայմանավորված է երաշխավորության լրացուցիչ բնույթով, այն է՝ առանց հիմնական պարտավորության երաշխավորությունը գոյություն ունենալ չի կարող (տե՛ս, *ՄԲԿ/ՄԴԿ/0591/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշում*)»:

Վերոգրյալի հաշվառմամբ, բողոքաբերը գտնում է, որ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության, «ՎԱԼԼԵԹՍ ԷՖ.Էմ. Էստ.» ՍՊ ընկերության և «Թեդուտ» ՓԲ ընկերության միջև 16.01.2012 թվականին կնքված թիվ 201 Օ երաշխավորության պայմանագրով սահմանված երաշխավորությունը դադարել է, քանի որ նորացումը դադարեցնում է սկզբնական պարտավորության հետ կապված լրացուցիչ պարտավորությունները, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, իսկ կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված լինելու փաստը սույն գործում առկա որևէ ապացույցով չի հիմնավորվում, ուստի Վերաքննիչ դատարանը որևէ կերպ չէր կարող, այդ թվում՝ խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումները, հանգել այն եզրակացության, որ սույն իրավահարաբերություններում նորացում տեղի չի ունեցել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սկզբնական պարտավորության դադարած լինելու/չլինելու վերաբերյալ հարցը քննարկվել և քննարկվում է այս պահին ՀՀ իրավասու դատարանների վարույթում գտնվող առնվազն ներքոգրյալ քաղաքացիական գործերի շրջանակներում.

թիվ ԵԴ/31505/02/19 քաղաքացիական գործով, որով գործի լուծման համար Էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա հանգամանքների ցանկում է սկզբնական պարտավորության դադարած լինելու/չլինելու հանգամանքը,

թիվ ԵԴ/27276/02/19 քաղաքացիական գործով, որով Երևանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը եզրակացրել են, որ առկա է իրավահարաբերության նորացում:

Արդյունքում, Վերաքննիչ դատարանի՝ պատճառաբանություն չունեցող և ըստ էության անհիմն ենթադրությունը՝ սկզբնական պարտավորություններում նորացման փաստի բացակայության վերաբերյալ, բացի այն, որ հանդիսանալով նյութաիրավական վեճի առարկա, դուրս է սնանկության վարույթի, ուստի և՛ սնանկության վարույթով քննություն իրականացնող դատարանի հետազոտման սահմաններից, նաև խախտում է «իրավական որոշակիության» վերաբերյալ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության

մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ) սկզբունքը, որը կիրառելի է նաև դատական ակտերի միատեսակության ապահովման տեսանկյունից:

Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանը բազմիցս իր որոշումներում անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին (ՄԴՈ-630, ՄԴՈ-753, ՄԴՈ-1176, ՄԴՈ-1213, ՄԴՈ-1270, ՄԴՈ-1322 և այլն): Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանը կարևորել է իր ՄԴՈ-1270 որոշման մեջ արտահայտած դիրքորոշումներն առ այն, որ «... իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է նաև դատարանների որոշումների հստակություն և կանխատեսելիություն, ինչը թույլ է տալիս իրավահարաբերությունների մասնակիցներին համապատասխան պատկերացում կազմել իրենց վարքագծի հնարավոր հետևանքների մասին»:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այսուհետ (այսուհետ՝ ՄԻԵԿ) իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «... արդար դատաքննության իրավունքը պահպանված է այն դեպքում, երբ անձը հնարավորություն ունի ստանալու որոշակի, հաստատուն որոշում՝ կապված իր իրավունքների և պարտականությունների հետ, ու կարող է համոզված լինել, որ որոշ ժամանակ անց այդ որոշումը չի վերացվի (տե՛ս, *օրինակ թիվ ԵԱԴԴ/0913/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից 2015 թվականի դեկտեմբերի 28-ին կայացված որոշումը*)»:

Դատական ակտերի միասնականության ապահովման կարևորությանը իրավական որոշակիության հիմնարար սկզբունքի համատեքստում անդրադարձել է նաև ՄԻԵԿ-ն իր նախադեպային որոշումներում: Այսպես ՄԻԵԿ-ը նշել է, որ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը պետք է մեկնաբանվի ՄԻԵԿ-ի նախաբանի լույսի ներքո, որի համաձայն՝ պայմանավորվող կողմերի ընդհանուր ժառանգության մասն է իրավունքի գերակայությունը, որի հիմնարար հայեցակետերից է իրավական որոշակիության սկզբունքը, որն *inter alia* պահանջում է, որ դատարանի կողմից որևէ հարցի կապակցությամբ կայացված վերջնական դատական ակտը կասկած չհարուցի (տե՛ս, *օրինակ, Բրումարտեսկուն ընդդեմ Ռումինիայի գործով Եվրոպական դատարանի կողմից 28.10.1999 թվականին կայացված վճիռը, § 61*), միաժամանակ նշել է, որ իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է *res judicata* սկզբունքի, այն է՝ դատական ակտերի վերջնական լինելու սկզբունքի պահպանում: Այդ սկզբունքը պահանջում է, որ հարցի առնչությամբ երկու կարծիքի առկայության հնարավորությունը չպետք է հիմք հանդիսանա կրկնակի քննության համար: Նահանջն այդ սկզբունքից արդարացված է միայն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է եական և անհերքելի բնույթ ունեցող հանգամանքներում:

ՄԻԵԿ-ն ընդգծել է նաև իրավունքների դատական պաշտպանության մատչելիության իրավունքի և արդար դատաքննության իրավունքի մասը կազմող իրավական որոշակիության սկզբունքի միջև համաչափության ապահովման անհրաժեշտությունը, երբ առկա է վեճերի քննության արդյունքում կայացված ու օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի անհամապատասխանություն (inconsistent adjudication of claims), որը հետևանք է անձանց կողմից իրենց միջև առկա վեճի կապակցությամբ նույնաբնույթ կամ փոխկապակցված պահանջների ներկայացման (տե՛ս, *օրինակ, Նեժդետ Շահինը և Պերիիան Շահինը ընդդեմ Թուրքիայի գործով ՄԻԵԿ-ի կողմից 2011 թվականի հոկտեմբերի 20-ին կայացված վճիռը, §§ 81-83 և 86*):

Այս պարագայում ՄԻԵԿ-ը կարևորում է ազգային օրենսդրությամբ սահմանված այն արդյունավետ գործիքակազմը, որը հնարավորություն կստեղծի բացառելու կամ գոնե խուսափելու միևնույն հարցի կապակցությամբ երկու կամ ավելի օրինական ուժի մեջ մտած դատական ակտ ունենալու իրադրությունից: Ընդ որում, նման որոշումներ կարող են կայացվել ինչպես միևնույն (տե՛ս, *օրինակ, Թյուրդոր Թյուրդորն ընդդեմ Ռումինիայի գործով ՄԻԵԿ-ի կողմից 2009 թվականի մարտի 24-ին կայացված վճիռը*), այնպես էլ՝ տարբեր դատական աստիճանների, այդ թվում՝ օտարերկրյա, կողմից (տե՛ս, *օրինակ, Ստեֆանիկան և մյուսները ընդդեմ Ռումինիայի գործով ՄԻԵԿ-ի կողմից 2010 թվականի նոյեմբերի 02-ին կայացված վճիռը*):

ՄԻԵԿ-ը կարևորվում է ՄԻԵԿ անդամ երկրների կողմից այնպիսի օրենսդրության մշակումը, որը թույլ չի տա միևնույն հացի վերաբերյալ ընդունել միմյանց հակասող դատական ակտեր (տե՛ս, *օրինակ, Մուլլաին և մյուսները ընդդեմ Ալբանիայի գործով ՄԻԵԿ-ի կողմից 2010 թվականի մարտի 23-ին կայացված վճիռը*): Արդյունքում ակնհայտ է, որ Վերաքննիչ դատարանը չունենալով բավարար հիմքեր և հիմնավորումներ, ինչպես նաև կիրառելի ապացույցներ, խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորումը, հաշվի չառնելով ՀՀ այլ իրավասու դատարանների քննության առարկա հանդիսացող համանման հանգամանքն ու դրա վերաբերյալ համապատասխան դատարանների կողմից արտահայտված դիրքորոշումը, պարզապես ղեկարատիվ բնույթի ենթադրություն է արել առ այն, որ սկզբնական պարտավորության մասով նորացում առկա չէ, մինչդեռ նման եզրահանգման Վերաքննիչ դատարանը չէր կարող գալ, այդ թվում՝ վտանգելով իրավական որոշակիության սկզբունքի կիրառելիությունը և հավանականություն ստեղծելով առ այն, որ նույն հանգամանքը՝ սկզբնական պարտավորության առկայությունը/բացակայությունը, որ օբյեկտիվ իրականության մեջ կարող է միայն այս կամ այն կերպ լինել, կարող է և՛ այդ, և՛ այն կերպ սահմանվել:

Վերաքննիչ դատարանը թույլ է տվել «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 20.1-րդ հոդվածով

սահմանված իրավակարգավորումների, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 157-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտում, ինչն ազդել է գործի լուծման վրա: Այսպես՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում, դատավոր Նաիրա Հովսեփյանի վարույթում քննվող թիվ ԵԴ/31505/02/19 քաղաքացիական գործով պարտատերը կողմ չի հանդիսանում, ուստի վերջինիս կողմից համապատասխան գործով որոշման ենթակա հանգամանքների մեջբերումը՝ որպես վերաքննիչ բողոք ներկայացրած անձի կողմից ներկայացված պահանջի հաստատման կամ մերժման համար Էական հանդիսացող հանգամանք, կիրառելի և իրավաչափ չի հանդիսանում, անգամ եթե համապատասխան հանգամանքները քննարկվող հարցի լուծման համար Էական նշանակություն ունեն:

Չնայած այն հանգամանքին, որ վերոգրյալ քաղաքացիական գործի շրջանակներում, ի թիվս այլևի, ուսումնասիրվում է և կայացման ենթակա՝ գործն ըստ Էության լուծող դատական ակտով հաստատվելու կամ մերժվելու է վերաքննիչ բողոք ներկայացրած անձի կողմից սնանկության գործով ներկայացված պահանջի հիմքում ընկած պայմանագրի գործող կամ կատարման ուժով դադարած լինելու հանգամանքը, այսինքն՝ ըստ Էության, համապատասխան քաղաքացիական գործի ելքով է պայմանավորված այդ պահանջի իրավունքի առկայությունը կամ դրա բացակայությունը, Վերաքննիչ դատարանն, այնուամենայնիվ, անհասկանալի դեկլարատիվ պնդումների հիման վրա, Էական չի համարել հիշյալ գործի ելքն ու դրա նշանակությունը ներկայացված պահանջի քննության հարցում:

Ըստ Վերաքննիչ դատարանի՝ վերաքննիչ բողոք ներկայացրած անձի քննարկվող իրավահարաբերություններում պահանջի քննությունը ենթակա չէր կասեցման, քանի որ. «Վերաքննիչ դատարանն ուսումնասիրելով երկու գործերով քննության ենթակա պահանջները, արձանագրում է, որ թիվ ԵԴ/31505/02/19 քաղաքացիական գործով հայցի առարկան բաժնետոմսերի հաջորդող գրավի պայմանագիրը դադարած համարելու և գրավի իրավունքի դադարումը գրանցելուն պարտավորեցնելու պահանջն է, որը որևէ անհնարինություն չի կարող առաջացնել սույն գործով պահանջի քննության համար»: Հատկանշական է հենց այն հանգամանքը, որ Վերաքննիչ դատարանը անհասկանալի պատճառաբանությամբ համարել է, որ միայն երկու գործով պահանջների նույնականության դեպքում այլ քաղաքացիական գործով իրականացվող վարույթի ելքը կարող է նշանակություն ունենալ և/կամ ազդել սնանկության գործի վարույթով պահանջի հաստատման կամ մերժման համար: Մինչդեռ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 157-րդ հոդվածով նման սահմանափակող պահանջ առաջադրված չէ: Համարժեքորեն նման պահանջ առկա չէ նաև «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20.1-րդ հոդվածով: Կարծում ենք կասկածից վեր է այն հանգամանքը, որ բացառապես պահանջով չի կարող սահմանափակվել մեկ գործի քննության արդյունքում հաստատման ենթակա հանգամանքների ազդեցությունը մեկ այլ գործով քննվող հանգամանքների առկայությունը/բացակայությունը սահմանելու համար:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը պնդել է, որ միայն այն հանգամանքը, որ թիվ ԵԴ/31505/02/19 քաղաքացիական գործով «պարտապանը չի վիճարկում պարտավորության բացակայությունն, այլ ընդամենը վիճարկում է տվյալ պարտավորության ապահովման միջոցներից մեկի դադարած լինելու հանգամանքը, ուստի գործի վարույթը պահանջի քննության մասով, ենթակա չէր կասեցման»: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը, անտեսելով վերաքննիչ բողոքի հիմքում ընկած հանգամանքների բազմակողմանի ուսումնասիրության պահանջը, անհասկանալի եզրահանգման է եկել առ այն, որ Պարտապանը կարող է վիճարկել պարտավորության ապահովման միջոցներից մեկի դադարած լինելու հանգամանքը՝ դրա հիմքում դնելով պարտավորության դադարած լինելու հանգամանքը, սակայն չվիճարկել պարտավորության բացակայությունը: Ընդ որում, հստակ է նաև այն հանգամանքը, որ ինչպես սույն գործով, այնպես էլ թիվ ԵԴ/27276/02/19 քաղաքացիական գործով, ի թիվս այլ հանգամանքների, քննարկվում է նաև համապատասխան պարտավորության բացակայության հանգամանքը, որը չի կարող դատական գործից դուրս փոփոխվել, քանի որ համապատասխան հանգամանքը կա՛մ առկա է, կա՛մ բացակա:

Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-723, ՍԴՈ-741, ՍԴՈ-881 որոշումներում փաստել է սեփականության իրավունք ձեռք բերելու նկատմամբ լեգիտիմ ակնկալիքների հիմքով սեփականության իրավունքի պաշտպանության հնարավորությունը: Ավելին, 18.03.2008 թվականի թիվ ՍԴՈ-741 որոշման 8-րդ կետում Սահմանադրական դատարանն արձանագրել է. «ՀՀ Սահմանադրության 31 հոդվածով երաշխավորված՝ սեփականության իրավունքի պաշտպանությունը տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է, կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք»: Հավասարաբարժեք իրավաչափ ակնկալիք է հանդիսանում իր պահանջի իրավունքի իրացման արդյունքում՝ պարտատիրոջ պահանջի բավարարումը:

Նման պայմաններում ակնհայտ է, որ պարտատերն իրական հնարավորություն պետք է ունենա պահանջելու դատարանից այլ ենթադրյալ պարտատերերի պահանջները գրանցել բացառապես այն դեպքում, եթե նման պահանջներն իրական են, հիմնավոր և անվիճելի: Համանման պահանջ է առաջադրված նաև «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 8-րդ մասով, որի համաձայն առարկությունների քննարկման արդյունքում դատարանը որոշում է պահանջի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը, ապահովվածությունը և որոշում է կայացնում պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին:

Արդյունքում հարց է առաջանում, ինչպե՞ս է հնարավոր որոշել վերաքննիչ բողոք ներկայացրած անձի կողմից առաջադրված պահանջի օրինականությունը, չափը, առաջնահերթությունն ու ապահովվածությունն այն դեպքում, երբ համապատասխան պահանջի առկայության կամ բացակայության համար հիմք հանդիսացող գործարքը վեճի առարկա է հանդիսանում և թիվ ԵԴ/31505/02/19 քաղաքացիական գործի շրջանակներում պարտավորության առկայությունը հերքվելու դեպքում, ինչը պարզ կդառնա համապատասխան քաղաքացիական գործով կայացման ենթակա՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի ուսումնասիրությամբ, վերաքննիչ բողոք բերած անձի պահանջը հիմնված կլինի դադարած պարտավորության վրա, այսինքն՝ չի լինի օրինաչափ, իսկ պարտապանի գույքը կծանրաբեռնվի անհիմն պարտավորությամբ, որը էականորեն կնվազեցնի պարտատիրոջ կողմից իր պահանջների բավարարումը ստանալու հնարավորությունը:

Ներկայացվածի համատեքստում ակնհայտ է, որ Դատարանի կողմից պահանջի քննությունը կատարելուց բացի այլ որոշում կայացնելը էականորեն և անհիմն կերպով խաթարելու էր վերաքննիչ բողոք բերած անձի և սնանկության վարույթի մասնակիցների միջև արդար հավասարակշռությունը, քանի որ, եթե քննարկվող քաղաքացիական գործով կայացման ենթակա՝ վեճն ըստ էության լուծող դատական ակտով վերաքննիչ բողոք բերած անձի պահանջի հիմնավորվածությունը հաստատվելու դեպքում վերջինս էական և իրական իրավական հնարավորություն ունի վերադառնալու սնանկության վարույթ և ստանալու իր պահանջների բավարարում, ապա հակառակ դեպքում պարտատերը նման իրական երաշխիք չունի:

Միևնույն ժամանակ սնանկության վարույթի առանձնահատկությունների հաշվառմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն իր կողմից կայացված նախադեպային որոշմամբ սահմանել է.

«(...) որ նախադատելիության ինստիտուտը կարևոր նշանակություն ունի դատական խնայողության սկզբունքի ապահովման և դատական ակտերի միջև անհաղթահարելի հակասությունների կանխարգելման առումով: Մասնավորապես՝ այն մի կողմից կոչված է պարզեցնելու խախտված իրավունքները վերականգնելու դատավարական կարգը՝ ազատելով կողմերին նույն փաստը կրկին ապացուցելու պարտականությունից, մյուս կողմից, կոչված է բացառելու միևնույն փաստերի տարբեր, հակասական գնահատումը, որը կարող է հանգեցնել իրավական որոշակիության սկզբունքի խախտման (տե՛ս Մանյա Մանուկյանն ընդդեմ Աշտարակի քաղաքապետարանի թիվ ԱԲԱԴ/0209/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը)»:

ՄԻԵԴ-ը արձանագրել է, որ բոլոր պարագաներում պետք է ապահովվի յուրաքանչյուրի՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացումը նվազագույնը հայցը քննության ընդունելու միջոցով, սակայն միաժամանակ պետք է ապահովվի նույնանման պահանջով միայն մեկ դատական ակտի առկայությունը, որը պետք է կազմակերպվի անդամ պետության այդ թվում համապատասխան օրենսդրության մշակման միջոցով:

Նման իրավիճակում դատարանում կապահովվի անձի պահանջը քննարկելու սկզբնական հնարավորությունը, սակայն վերջնական դատական ակտ կկայացվի միայն այն պարագայում, երբ նույն պահանջի կապակցությամբ այլ դատարանում որևէ նույնական կամ փոխկապակցված ընթացիկ գործ առկա չի լինի կամ այդ գործի քննությունը ավարտված կլինի:

Դատարանի մատչելիության իրավունքը իրացվում է ոչ միայն կիրառելի օրենսդրության հասանելիությամբ, հստակությամբ և կանխատեսելիությամբ, այլ նաև՝ համապատասխան դատական պրակտիկայի միասնականության ապահովմամբ: Ընդ որում, նման դատական պրակտիկան և դրա զարգացումը ևս պետք է լինեն կանխատեսելի (տե՛ս, օրինակ, Պետկո Պետկովն ընդդեմ Բուլղարիայի գործով ՄԻԵԴ-ի կողմից 2009 թվականի հունիսի 11-ին կայացված վճիռը):

Վերոգրյալից հնարավոր է եզրակացնել, որ թեև վերաքննիչ բողոք ներկայացնող անձն իրավունք ուներ սնանկության գործի վարույթում ներկայացնելու իր պահանջը, սակայն քանի դեռ համապատասխան պահանջի հիմքում ընկած հանգամանքները վիճելի են, իսկ այդ հանգամանքների վիճելիությունն ի վնաս համապատասխան անձի հանգուցալուծվելու դեպքում պահանջն օրինական չի լինի և ենթակա չի լինի ընդգրկման պահանջների վերջնական ցուցակում, այդ թվում՝ ապահովելով դատական պրակտիկայի միասնականությունն ու մեկ հարցի վերաբերյալ միայն մեկ դատարանի վերջնական եզրահանգման առկայությունը, որպիսի դատարան Դատարանը հանդիսանալ չի կարող, քանի որ խոսքը գնում է նյութաիրավական վեճի մասին, որը քննվում է այլ դատարանի վարույթում գտնվող քաղաքացիական գործի շրջանակներում:

Քննարկվող իրավահարաբերությունների ծագման պահին գործող իրավակարգավորումների տեսանկյունից, մասնավորապես, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի մինչ 03.03.2020 թվականը գործող խմբագրությամբ 46-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանվում էր Դատարանի կողմից ներկայացված պահանջների օրինականության, չափի, առաջնահերթության և ապահովվածության հարցի լուծման անհրաժեշտությունը, որպիսի իրավակարգավորման բնույթին ու բովանդակությանն անդրադարձ է կատարել նաև ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախադեպային որոշումներում:

Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը իրավական դիրքորոշում է արտահայտել նշելով.

««Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ առարկությունների քննարկման արդյունքում դատարանը որոշում է պահանջի

օրինականությունը, չափը, առաջնահերթությունը, ապահովվածությունը և որոշում է կայացնում պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին: Պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշումը կարող է բողոքարկվել:

Վկայակոչված հողվածների վերլուծությունից հետևում է, որ սնանկության վարույթում օրենսդիրը, նպատակ ունենալով ապահովելու ինչպես պարտատերերի շահերի պաշտպանությունը, այնպես էլ՝ ելնելով սնանկ ճանաչված պարտապանի շահերից, այն է՝ հնարավորություն տալ բարեխիղճ և պարտաճանաչ պարտապանին վերականգնելու իր բնականոն գործունեությունը, հաղթահարելու ֆինանսական դժվարությունները, վերականգնելու նրա կենսունակությունը, սահմանել է պարտատերերի կողմից պահանջների ներկայացման և դրանց հիմնավորվածության ստուգման որոշակի կառուցակարգ:

Մասնավորապես՝ օրենսդրորեն ամրագրվել է, որ սնանկության մասին հայտարարությունից հետո մեկամյա ժամկետում պարտատերերն իրենց պահանջները դատարան ներկայացնելիս պարտավոր են նշել այն պարտավորության մասին, որից բխում է պահանջը, դրա կատարման ժամկետը, ինչպես նաև պահանջը հիմնավորող հանգամանքները: Միաժամանակ օրենսդիրը պարտավորեցրել է դատարանին անկախ պահանջի (պահանջների) նկատմամբ առարկության ներկայացումից քննության առնել դատարան ներկայացրած յուրաքանչյուր պահանջի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը, ապահովվածությունը, որից հետո միայն որոշում կայացնել պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին:

Նման օրենսդրական կարգավորումն ինքնանպատակ չէ և նպատակ ունի բացառելու սնանկության վարույթում չհիմնավորված պահանջների ընդգրկումը, քանի որ այդպիսի պահանջների ընդգրկումը կհանգեցնի ինչպես այն պարտատերերի իրավունքների և օրինական շահերի խախտմանը, որոնց պահանջները հիմնավորված են, այնպես էլ՝ պարտապանի և նրա հիմնադիրների (մասնակիցների) իրավունքների և օրինական շահերի խախտմանը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ներկայացված պահանջների վերջնական ցուցակը հաստատելիս դատարանները պետք է առաջին հերթին հաշվի առնեն այն հանգամանքը, որ հաստատման են ենթակա միայն այն պահանջները, որոնց առկայության և չափի վերաբերյալ ներկայացված են բավարար ապացույցներ, ընդ որում, ապացույցների բավարար լինելը գնահատողական կատեգորիա է և յուրաքանչյուր գործով այն ենթակա է գնահատման՝ ելնելով կոնկրետ գործի հանգամանքներից (*տե՛ս Սարգիս Գասպարյանի ներկայացուցիչ Գոռ Մաթևոսյանի վճռաբեկ բողոքի հիման վրա թիվ ԿԴ/0033/04/13 սնանկության գործով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից 2016 թվականի դեկտեմբերի 02-ին կայացված որոշումը*)»:

Այսպես, Երևանի քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Նաիրա Հովսեփյանի վարույթում գտնվող թիվ ԵԴ/31505/02/19 քաղաքացիական գործով ներկայացված հայցադիմումում (հայցադիմումն առկա է Սնանկության գործի նյութերում), ի թիվս այլի քննարկվում են պարտապանի բաժնետոմսերի բռնագանձման արդյունքում նրա պարտավորությունների դադարման հետ կապված իրավահարաբերությունները, ինչպես նաև համապատասխան բաժնետոմսերի իրացման (բռնագանձման) իրական արժեքը, որի հիման վրա քննարկվում է Պարտապանի հանդեպ հնարավոր գերակատարման հիմքով առաջացած պարտավորությունները: Նույն քաղաքացիական գործով պարտապանը ներգրավված է որպես երրորդ անձ: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ «ՎՏԲ Բանկ» հանրային բաժնետիրական ընկերության պահանջն, ինքնին, հիմնված է վերոգրյալ պարտավորությունների առկայության վերաբերյալ վերջինիս պնդման վրա, իսկ նման պարտավորությունների առկայության կամ բացակայության հարցը հանդիսանում է քննարկվող քաղաքացիական գործով քննության առարկա, կարծում ենք, մինչ համապատասխան հարցի վերջնական լուծումը Դատարանը չի կարող որակում տալ ո՛չ համապատասխան պարտավորության օրինականության, ո՛չ չափի, համապատասխանաբար նաև՝ առաջնահերթության վերաբերյալ: Համարժեքորեն նման եզրակացություն չէր կարող անել նաև Վերաքննիչ դատարանը, քանի որ այս դեպքում խոսքը գնում է նյութաիրավական պահանջի մասին, որը վերջինս չի քննում:

Վերոգրյալի համատեքստում ակնհայտ է, որ Վերաքննիչ դատարանը, ըստ էության, ընդունելի է համարել վիճելի իրավահարաբերության վրա հիմնված պահանջի ընդգրկումը պահանջների վերջնական ցուցակում, ինչն ուղղակիորեն հակասում է սնանկության գործով ինչպես մյուս բոլոր պարտատերերի, այնպես էլ հենց պարտապանի իրավունքներին ու օրինական շահերին: Նման փաստարկում կարող է անել ոչ միայն պարտապանը, այլև սնանկության վարույթում ընդգրկված ցանկացած պարտատեր:

Վերոգրյալ նախադեպային որոշումների և դրանց վերլուծության արդյունքում հնարավոր է պնդել, որ Դատարանն այլ կերպ չէր կարող վարվել, քան կասեցնել «ՎՏԲ Բանկ» հանրային բաժնետիրական ընկերության կողմից սնանկության վարույթում ներկայացված բողոքի քննությունը՝ մինչ դրա հիմքում ընկած իրավահարաբերությունների առկայության կամ բացակայության, այսինքն՝ պահանջի օրինականության վերաբերյալ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում քննվող թիվ ԵԴ/31505/02/19 քաղաքացիական գործի քննության ավարտը:

Նման եզրահանգման հնարավոր է գալ նաև, դիտարկելով ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները՝ կապված գործի քննության կասեցման հիմքերի, դրանց բովանդակության ու կիրառելիության վերաբերյալ: Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախադեպային որոշումներից մեկում մասնավորեցրել է.

«ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ գործի

վարույթի կասեցումը գործի քննության ընթացքում այնպիսի հանգամանքի ի հայտ գալն է, որն ըստ էության արգելափակում է գործի հետագա ընթացքը: Օրենսդիրը, հաշվի առնելով սնանկության վարույթի առանձնահատկությունը (սնանկության վարույթը բաղկացած է որոշակի փուլերից և ընթանում է յուրաքանչյուր փուլին համապատասխան օրենքով սահմանված ընթացակարգով), այդ վարույթի արդյունավետությունն ապահովելու նկատառումով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20.1-րդ հոդվածով կարգավորել է կասեցման ընթացակարգի կիրառման հնարավորությունը:

Օրենսդիրը վարույթի կասեցման կարգ նախատեսել է առանձին պարտատերերի պահանջների մասով և այն պայմանով, որ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կասեցման հիմքը (հիմքերը) կիրառելի լինի այդ իրավահարաբերության նկատմամբ: Ընդ որում, առանձին պահանջների մասով վարույթի կասեցումը չի ընդհատում սնանկության վարույթի ընթացքը, ինչը նշանակում է, որ օրենքով սահմանված կարգով առանձին պարտատերերի պահանջների մասով սնանկության գործի վարույթի կասեցման դեպքում սնանկության վարույթի մյուս փուլերը պետք է ընթանան օրենքով նախատեսված ընթացակարգով: Այսպիսով օրենսդիրը սնանկության վարույթում կասեցման հնարավորություն նախատեսել է միայն առանձին պարտատերերի պահանջների մասով (*տե՛ս, ըստ «Հինգերորդ աստղ» ՄՊԸ-ի դիմումի՝ թիվ ԱՐԱԴ/0043/04/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2017 թվականի որոշումը*):

Չարգացնելով վերը նշված դիրքորոշումը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը հավելել է, որ «... առանձին պարտատերերի պահանջների մասով սնանկության գործի վարույթի կասեցումն ինքնակապտակ չէ, այն նպատակ ունի ապահովելու «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածով կանոնակարգված՝ պարտատերերի պահանջների դատական կարգով հաստատման գործընթացը, այդ թվում՝ պարտատիրոջ (պարտատերերի) պահանջների վերջնական ցուցակը հաստատելիս բավարար երաշխիքներ ստեղծել պարտապանի, պարտատիրոջ իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար: Ընդ որում, օրենսդիրն առանձին պարտատերերի պահանջների մասով սնանկության գործի վարույթի կասեցումը պայմանավորել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ամրագրված քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու հիմքերի հետ»:

Վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ «... ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված՝ քաղաքացիական գործի վարույթի կասեցման հիմքերն օբյեկտիվորեն պետք է խոչընդոտեն ներկայացված պահանջի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը, ապահովվածությունը քննության առնելու և տվյալ պահանջով պարտատերերի վերջնական ցուցակը հաստատելու գործընթացին: Այլ կերպ ասած՝ առանձին պահանջի (պահանջների) մասով սնանկության գործի վարույթը ենթակա է կասեցման, եթե ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված և ի հայտ եկած քաղաքացիական գործի կասեցման հիմքերն այնպիսին են, որ հնարավորություն չեն տալիս սնանկության գործընթացի այդ փուլում կայացնել օրենքով սահմանված, այն է՝ պարտատերերի կամ առանձին պարտատիրոջ պահանջի (պահանջների) մասով վերջնական ցուցակը հաստատելու մասին համապատասխան որոշում»:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ

«(...) առանձին պարտատերերի պահանջների մասով սնանկության գործի վարույթի կասեցման համար պետք է ներկայացվի պատճառաբանված միջնորդություն, որը դատարանի կողմից քննարկվելու արդյունքում ենթակա է բավարարման կամ մերժման: Ըստ այդմ էլ՝ դատարանը վերը նշված հարցով կայացնում է կամ առանձին պարտատերերի պահանջների մասով սնանկության գործի վարույթը կասեցնելու, կամ առանձին պարտատերերի պահանջների մասով սնանկության գործի վարույթը կասեցնելը մերժելու մասին որոշում (*տե՛ս, «Մանչո Գրուպ» ՄՊԸ-ի ներկայացուցիչ Վահրամ Մարտիրոսյանի վճռաբեկ բողոքի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից թիվ ԿԴ1/0261/04/16 սնանկության գործով 2018 թվականի հունիսի 10-ին կայացված որոշումը*):»:

2018 թվականի օգոստոսի 23-ի դրությամբ, երբ Վերաքննիչ բողոք ներկայացրած անձը, առանց նախնական տեղեկացման, արտադատական կարգով իրացրել է Պարտապանին պատկանող TEGHOUT INVESTMENTS LIMITED ընկերության բաժնետոմսերի գրավի իրավունքը և TEGHOUT INVESTMENTS LIMITED ընկերության կանոնադրական կապիտալի 50.05%-ը կազմող թվով 1001 հատ «Ա» կարգի բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցել է իր հետ փոխկապակցված իրավաբանական անձանց, դառնալով TEGHOUT INVESTMENTS LIMITED ընկերության կանոնադրական կապիտալի 100 տոկոսը կազմող բաժնետոմսերի միջնորդավորված տիրապետող, Վերաքննիչ բողոք ներկայացրած անձի հանդեպ «Թեղուտ» ՓԲ ընկերության պարտավորության ընդհանուր գումարը կազմել է շուրջ 314 մլն ԱՄՆ դոլար:

Միաժամանակ, վերաքննիչ բողոք ներկայացրած անձի, որպես տարբեր միջազգային բորսաներում ցուցակված ֆինանսական հաստատության, 2018 թվականի համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ որպես 2018 թվականի ընթացքում ձեռք բերված և հետագա օտարման ենթակա գույք, 22 միլիարդ ռուբլի ընդհանուր արժեքով արտացոլվել են TEGHOUT INVESTMENTS LIMITED ընկերության կանոնադրական կապիտալի 100 տոկոսը կազմող բաժնետոմսերը: Հարկ է նշել, որ հիշյալ հաշվետվությունում արտացոլված այդ արժեքը 2018 թվականի օգոստոսի 23-ի դրությամբ կազմել է շուրջ 325 մլն ԱՄՆ դոլար, ինչը ավելի քան 10 մլն ԱՄՆ դոլարով գերազանցել է Վերաքննիչ բողոք ներկայացրած անձի հանդեպ

«Թեղուտ» ՓԲ ընկերության պարտավորության ընդհանուր գումարը:

Այսինքն, Վերաքննիչ բողոք ներկայացրած անձի կողմից կատարված՝ գրավի իրավունքի իրացման արդյունքում Վերաքննիչ բողոք ներկայացրած անձը ստացել և իր հաշվապահական հաշվառման փաստաթղթերում արտացոլել է համապատասխան ակտիվը, որի արդարացի (իրական) արժեքը (հաշվարկվում է շուկայական արժեք հանած իրացման գծով ծախսեր բանաձևով) գերազանցում է իր հանդեպ եղած պարտավորության չափը: Այսպիսով, Վերաքննիչ բողոք ներկայացրած անձի հիշյալ գործողության կատարմամբ փաստացի ամբողջությամբ մարվել (դադարել) է 30.09.2016 թվականին կնքված Գլխավոր փոխատվության պայմանագրով վերաքննիչ բողոք ներկայացրած անձի հանդեպ «Թեղուտ» ՓԲ ընկերության պարտավորությունը, հետևաբար, որպես հետևանք, դադարել են նաև այդ նույն պայմանագրով Պարտապանի (որպես Երաշխավորի) ստանձնած բոլոր պարտավորությունները: Այս պնդումը հիմնականում հիմնված է այն իրողության վրա, որ հիշյալ պարտավորությունների կատարման նպատակով իրականացված վերագրյալ բռնագանձումը և այն, որ բռնագանձված ակտիվի արժեքը գերազանցել է կուտակված պարտավորությունների մնացորդը, ակնհայտ է, որ համապատասխան պայմանագրային պարտավորությունները դադարել են, ուստի համապատասխան պայմանագրի գործողությունը ևս դադարել է:

Վերագրյալը հնարավոր է պնդել, հաշվի առնելով, որ 30.09.2016 թվականին կնքված անշարժ գույքի հաջորդող գրավի պայմանագրով և 30.09.2016 թվականին կնքված շարժական գույքի հաջորդող գրավի պայմանագրով պարտապանի (որպես Գրավատուի) պարտավորությունները ևս պայմանավորված են եղել 30.09.2016 թվականին կնքված Գլխավոր փոխատվության պայմանագրով և հանդիսացել են լրացուցիչ (ակցեսոր) պարտավորություններ, ուստի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 382-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով՝ հիմնական պարտավորության դադարման հիմքով դադարել են նաև այդ լրացուցիչ (ակցեսոր) պարտավորությունները:

Վերագրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 04.03.2021 թվականի որոշումը և 11.11.2020 թվականին Դատարանի կողմից կայացված որոշումը՝ բողոքարկված մասերով թողնել օրինական ուժի մեջ:

2.1 «Քեյ Էս Էյ» ՓԲԸ-ի վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով սնանկության վարույթների առանձնահատկություններին և ընդգծելով դրանց ինքնուրույն բնույթը, նախկինում կայացրած նախադեպային որոշմամբ արձանագրել է, որ «... սնանկության վարույթի նկատմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերը կիրառվում են այնքանով, որքանով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի նորմերով այլ կանոններ նախատեսված չեն: Այսինքն՝ այն պարագայում, երբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերով նախատեսված է այլ կանոն, սակայն «Սնանկության մասին» ՀՀ օրենքի նորմերը նշված հանգամանքի նկատմամբ սահմանել են այլ մոտեցումներ, հապա պետք է կիրառվի «Սնանկության մասին» ՀՀ օրենքի դրույթը (տե՛ս, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի *ընդդեմ Ամայյա Բեգլարյանի թիվ ՍՆԴ/0104/04/19 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 15.05.2020 թվականի որոշումը*)»:

Չուզահեռ, անդրադառնալով գործերի վերանայման և քննության կապակցությամբ Դատավարության Օրենսգրքով վերաքննիչ դատարանների համար սահմանված լիազորություններին՝ ՀՀ վճռաբեկ դատարանը իր մի շարք նախադեպային որոշումներում արձանագրել է, որ «... [ի] տարբերություն առաջին ատյանի դատարանի, որը կաշկանդված է հայցապահանջով և պարտավոր է գործը քննել ու լուծել ներկայացված պահանջի շրջանակներում, վերաքննիչ դատարանը, կաշկանդված լինելով բողոքի հիմքերով, քննության է առնում դրանից յուրաքանչյուրի հիմնավորվածության հարցը՝ համապատասխանաբար կիրառելով օրենսդրի կողմից իրեն վերապահված լիազորություններից որևէ մեկը (տե՛ս, *օրինակ, «ԱՐՄԵՆ-ՕՍՍ» ՍՊԸ-ն ընդդեմ «ՄԱՎԱ ԻՄՊՈՒՄ» ՍՊԸ-ի թիվ ԵՄԴԴ/1617/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2014 թվականի որոշումը*)»:

ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«1. յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները ..., ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և իրապարակային դատաքննության իրավունք»:

Դատարան դիմելու իրավունքը պետք է լինի պրակտիկ և արդյունավետ: Նման իրավունքի «արդյունավետ» համարվելու համար հարկավոր է, որպեսզի անձը ունենա հստակ և պրակտիկ հնարավորություն վիճարկելու այն ակտը, այդ թվում՝ գործողությունը կամ անգործությունը, որը խախտել է կամ անմիջականորեն կարող է խախտել վերջինիս իրավունքները և օրինական շահերը (տե՛ս, *օրինակ, Բելեթն ընդդեմ Ֆրանսիայի թիվ 23805/94 գործով Եվրոպական Դատարանի կողմից կայացված վճիռը*):

Իր մեկ այլ նախադեպային որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «... փորձաքննություն նշանակելը գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների վերաբերյալ ապացույցներ ձեռք բերելու դատավարական միջոց է (տե՛ս «Ֆիլիքս» ՍՊԸ-ն ընդդեմ «Մետաքս» ԲԲԸ-ի թիվ ԵՄԴ/0492/02/14 քաղաքացիական գործով ՀՀ

վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):

Սակայն նաև Դատարանի օրինաչափ արձանագրմամբ ո'չ պարտապանի և ո'չ ՎՏԲ Բանկի կողմից բացարձակապես չեն ներկայացվել բավարար ապացույցներ, որոնք կվերաբերեին պարտավորության հիմքերին, պահանջն արդեն կատարված լինելուն, պահանջի չափին և այլն:

Ավելին, Վերաքննիչ դատարանի ընկալմամբ պարտապանի և ՎՏԲ Բանկի կողմից պահանջված փորձաքննությունը պետք է ապահովեր քննարկվող վճարային պարտավորության վիճելի կամ անվիճելի լինելու փաստի հաստատումը, և սա այն պարագայում, երբ նման փորձաքննությամբ պարզապես բացահայտվելու էր՝ արդյո՞ք համապատասխան լիազորագիրը ստորագրվել և/կամ կնքվել է պայմանագրի ստորագրումից առաջ, թե՛ հետո: Այսինքն, նման փաստի պարզումը որևէ կերպ չէր անդրադառնալու և չէր բացառելու պարտատիրոջ պահանջի հիմնավորվածությունը, նման պահանջի հիմքը, որը մատուցված իրավաբանական ծառայություններն էին, և/կամ չափը, որը հաստատված էր Հաշիվ-ապրանքագիր 1-ով և Հաշիվ-ապրանքագիր 2-ով:

Այլ կերպ ասած՝ նման փորձաքննության արդյունքները չէին ծառայելու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների վերաբերյալ ապացույցներ ձեռք բերելուն, որոնք ուղղված կլինեին պարտատիրոջ դրամային պահանջի հիմնավորվածության բացառմանը կամ այն վիճարկելի դարձնելուն:

Ավելին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն.

«Օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ»:

Նույն օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

«2. Գործարքի անվավերության դեպքում կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը, իսկ ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում (ներառյալ, երբ ստացածն արտահայտվում է գույքից օգտվելու, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության մեջ)՝ հատուցել դրա արժեքը դրամով, եթե գործարքի անվավերության այլ հետևանքներ նախատեսված չեն օրենքով»:

Նույն օրենսգրքի 1092-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«1. Անձը, ով առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի ուրիշ անձի (տուժողի) հաշվին ձեռք է բերել գույք կամ խնայել է այն (ձեռք բերողը), պարտավոր է տուժողին վերադարձնել անհիմն ձեռք բերած կամ խնայած գույքը (անհիմն հարստացումը), բացառությամբ սույն օրենսգրքի 1099 հոդվածով նախատեսված դեպքերի»:

ՀՀ վճռաբեկ դատարանը, իր նախադեպային որոշումներում անդրադառնալով անհիմն հարստացման ինստիտուտին, փաստել է, որ « ... ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածից հետևում է, որ անհիմն հարստացման առկայության համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը.

1. անձը (ձեռք բերողը) այլ անձի (տուժողի) հաշվին պետք է ձեռք բերի կամ խնայի գույք, այսինքն՝ ձեռք բերողի մոտ գույքի ավելացումը պետք է պայմանավորված լինի տուժողի մոտ գույքի պակասեցմամբ,

2. գույքը պետք է ձեռք բերվի կամ խնայվի առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի, այսինքն՝ հարստացումն անօրինական ձևով (*տե՛ս Անժելիկա Գասպարյանն ընդդեմ Չելիմ Սիմոնյանի թիվ ԵԱԲԴ/0455/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1093-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն.

«Եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով, այլ օրենքներով կամ այլ իրավական ակտերով և չի բխում համապատասխան հարաբերությունների էությունից, սույն գլխում նախատեսված կանոնները ենթակա են կիրառման նաև՝

1) անվավեր գործարքով կատարվածը վերադարձնելու պահանջների նկատմամբ»:

Այսինքն, նման պարագայում, երբ անգամ կնքված պայմանագիրը վիճարկելի դառնար պայմանագիրն այն իրավունք չունեցող անձի կողմից ստորագրած լինելու հիմքով, բոլոր պարագաներում կիրառվելու էր եկկողմանի ռեստիտուցիա, որը նման իրավահարաբերությունների առանձնահատկության պայմաններում, երբ այնուամենայնիվ առկա էին պատշաճ մատուցված ծառայություններ, հանգեցնելու էր պարտապանի կողմից համապատասխան գումարի վճարմանը անհիմն հարստացման հիմքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն.

«Գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

«1. Գործարքները կարող են լինել երկկողմ կամ բազմակողմ (պայմանագիր), ինչպես նաև՝ միակողմ:

2. Պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է երկու կողմի (երկկողմ գործարք) կամ երեք ու ավելի կողմերի (բազմակողմ գործարք) համաձայնեցված կամքի արտահայտությունը»:

Նույն օրենսգրքի 777-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

«1. Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով՝ կատարողը պարտավորվում է պատվիրատուի առաջադրանքով ծառայություններ մատուցել (կատարել որոշակի

գործողություններ կամ իրականացնել որոշակի գործունեություն), իսկ պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

2. Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը կնքվում է գրավոր»:

Այսինքն՝ պատվիրատուի վճարման պարտականությունը ծագում է միայն ծառայությունը պատշաճ մատուցված լինելու պարագայում: Եվ հետևաբար կողմերի միջև վեճ առաջանալիս անհրաժեշտություն է առաջանում ապացուցել ծառայությունները մատուցված լինելու փաստը, որպեսզի դրա հիման վրա կատարվի վճարում:

Վերոնշյալ հոդվածների կիրառման կապակցությամբ ՀՀ վճարեկ դատարանն արձանագրել է, որ «... ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը՝ որպես այն կնքող անձանց համաձայնեցված կամքի արտահայտություն, ուղղված է որոշակի գործողություններ կատարելու կամ որոշակի գործունեություն իրականացնելու արդյունքում քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն: Նկատի ունենալով, որ օրենսդիրն այս պայմանագրի համար սահմանել է գրավոր ձևով կնքելու պահանջ, ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը պետք է կնքվի գրավոր գործարքին ներկայացվող պահանջներին համապատասխան: Այն դեպքերում, երբ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի գրավոր ձևը չի պահպանվում, ապա կիրառման է ենթակա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված կանոնը, այն է՝ կողմերը զրկվում են ի հաստատումն գործարքի ու նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու իրավունքից՝ այդուհանդերձ պահպանելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ... սահմանված այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքը (տե՛ս, *Չարուհի Հայրապետյան և Գայանե Ղազարյան ընդդեմ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/0556/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճարեկ դատարանի կողմից 07.04.2017 թվականին կայացված որոշումը*)»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 779-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«1. Պատվիրատուն պարտավոր է իրեն մատուցված ծառայությունների համար վճարել ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրում նշված ժամկետներում և կարգով»:

Նույն օրենսգրքի 781-րդ հոդվածի համաձայն՝

«Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի նկատմամբ կիրառվում են կապալի մասին ընդհանուր դրույթները (հոդվածներ 700-727) և կենցաղային կապալի մասին դրույթները (հոդվածներ 728-737), եթե դա չի հակասում սույն օրենսգրքի 777-780 հոդվածներին, ինչպես նաև ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի առանձնահատկություններին»:

Նույն օրենսգրքի 718-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝

«1. Պատվիրատուն պարտավոր է կապալի պայմանագրով նախատեսված ժամկետներում ու կարգով կապալառուի մասնակցությամբ գնել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքում՝ այդ մասին անհապաղ հայտնել կապալառուին:

2. Աշխատանքն ընդունելիս թերություններ հայտնաբերած պատվիրատուն իրավունք ունի դրանք վկայակոչել այն դեպքերում, եթե ընդունումը հաստատող ակտում կամ այլ փաստաթղթում նախատեսվել է այդ թերությունները կամ հետագայում դրանց վերացման պահանջ ներկայացնելու հնարավորությունը:

3. Պատվիրատուն, որն աշխատանքն ընդունել է առանց ստուգման, զրկվում է աշխատանքի այն թերությունները վկայակոչելու իրավունքից, որոնք կարող էին հայտնաբերվել սովորական եղանակով ընդունելու ժամանակ (բացահայտ թերություններ), եթե այլ բան նախատեսված չէ կապալի պայմանագրով»:

ՀՀ վճարեկ դատարանը, անդրադառնալով ծառայությունները մատուցված լինելու փաստն ապացուցելու պարտականություն կրող կողմի հարցին, դեռևս 2007 թվականին նշել է՝ «... սույն վեճի հիմքում ընկած պայմանագրերի համաձայն՝ պատվիրատուն պարտավորվել է ընդունել կատարված աշխատանքը և վճարել դրա դիմաց՝ ներկայացված կատարողական ակտերի համաձայն: Այսինքն որպես նշված աշխատանքների դիմաց վճարման հիմք՝ կողմերը փոխադարձ համաձայնությամբ համարել են կատարողական ակտերը (տե՛ս, «Զլիք Սիթի» ՍՊԸ-ն ընդդեմ Երևանի Արաբկիր թաղապետարանի թիվ 3-299(ՏԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճարեկ դատարանի կողմից 01.06.2007 թվականին կայացված որոշումը)»:

ՀՀ վճարեկ դատարանը նախկինում կայացրած իր նախադեպային որոշումներում անդրադարձել է նաև «ծառայությունների մատուցման հաշիվ»-ների՝ որպես ծառայություններ մատուցած անձի հայցը հիմնավորող ապացույցի վերաբերելիության և թույլատրելիության հարցին և արձանագրել, որ «... հայցը հիմնավորող միակ թույլատրելի ապացույցը [ծառայություններ մատուցած անձի] կողմից ներկայացված ծառայությունների մատուցման փաստի և ծավալների վերաբերյալ հաշիվն է (տե՛ս, «ԱրմենՏել» ՓԲԸ-ն ընդդեմ «Էյ Ար-Այ Սի Թի» ՍՊԸ-ի թիվ ԱԿԴ1/0009/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճարեկ դատարանի կողմից պայատի 29.07.2011 թվականին կայացված որոշումը)»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«1. Գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պարտավոր է ապացուցել իր պահանջների և առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով կամ այլ օրենքներով»:

Սույն սնանկության գործի շրջանակում պարտապանը և ՎՏԲ Բանկը պետք է ապացուցեն իրենց կողմից վկայակոչված այն հանգամանքները, որ պայմանագրում և Հաշիվ-

ապրանքագիր 1-ում և Հաշիվ-ապրանքագիր 2-ում մատնանշված ծառայությունները ամբողջությամբ կամ մասամբ չեն մատուցվել: Հատկապես այն պարագայում, երբ քննարկվող հաշիվ-ապրանքագրերում միանշանակ սահմանվել են նման ծառայությունների մատուցման ընդունման կամ համապատասխան առարկությունների ներկայացման երկուստեք համաձայնեցված պայմանները և կարգը: Ավելին, կողմերի պայմանագրային իրավահարաբերությունների առկայության փաստը չի վիճարկվել որևէ իրավասու դատական ատյանում:

Այնինչ, պարտապանը և ՎՏԲ Բանկը պարզապես բավարարվել են առանց որևէ բավարար ապացույցի, առարկություններ ներկայացնելով, ինչը դարձյալ իրավաչափորեն արձանագրվել է Դատարանի կողմից:

Իսկ Վերաքննիչ դատարանը վերոնշյալ հարցի կապակցությամբ նշել է, որ թեև ներկայացված հաշիվ-ապրանքագրերով նախատեսված է մատուցված ամբողջ ծառայությունների արժեքը, միևնույն գործի նյութերում և պահանջատիրոջ կողմից ներկայացված ապացույցներով չի հաստատվում, թե փաստացի ինչ ծառայություններ են մատուցվել և արդյոք մատուցված ծառայությունների արժեքն է արտացոլված հաշիվ-ապրանքագրերում միաժամանակ հղում կատարելով ՀՀ հարկային օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ և 8-րդ մասերին, այն պարագայում, երբ նշյալ հոդվածի փոխարեն հարկավոր էր հղում կատարել նույն օրենսգրքի 56-րդ հոդվածի 7-րդ մասին, որի համաձայն.

«7. Այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետությունում իրականացվող՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման գործարքի գծով ավելացված արժեքի հարկի հաշվարկման և վճարման պարտավորությունը, Օրենսգրքի 4-րդ բաժնի համաձայն, կրում են գործարքի կողմ համարվող՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը, նոտարը կամ մշտական հաստատությունը, ապա այդ գործարքի մասով հարկային հաշիվը, իսկ Օրենսգրքով սահմանված դեպքերում նաև՝ ճշգրտող հարկային հաշիվը դուրս է գրվում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի կամ մշտական հաստատության կողմից»:

Այսինքն, միայն պարտապանի, ՎՏԲ Բանկի ներկայացրած առարկությունների հիման վրա Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ քննարկվող իրավահարաբերությունների առկայությունը վիճարկելի է, երբ չեն պահպանվել նման վիճարկելիության հիմնավորվածությանը ներկայացվող օրենսդրական պահանջները՝ միաժամանակ, դուրս գալով վերաքննիչ բողոքի քննության սահմաններից, քանզի ստորադաս ատյանում, բնականաբար նման հնարավորության բացակայության պայմաններում, ամենևին էլ քննարկվող պայմանագրային իրավահարաբերությունների կապակցությամբ նյութաիրավական վեճ չի քննվել:

Ավելին, Վերաքննիչ դատարանը անտեսել է այն հանգամանքը, որ նախ նշյալ իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի է անգլիական իրավունքը, ինչը հստակ սահմանված է պայմանագրով՝ միաժամանակ կատարելով սույն վեճի լուծման համար որևէ նշանակություն չունեցող եզրահանգում, և այն էլ՝ սխալ:

Մասնավորապես, քննարկվող հաշիվ-ապրանքագրերը դուրս են գրվել Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից, ով դրանք դուրս գրելիս ամենևին էլ պարտավոր չէր հետևել ՀՀ հարկային օրենսգրքով նման փաստաթղթերի բովանդակությանը ներկայացվող պահանջներին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«1. Պարտատիրոջը պարտավորության հիման վրա պատկանող իրավունքը (պահանջը) կարող է նրա կողմից այլ անձի փոխանցվել գործարքով (պահանջի զիջում) կամ անցնել այլ անձի՝ օրենքի հիման վրա»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 399-րդ հոդվածի համաձայն.

«Սկզբնական պարտատիրոջ իրավունքը նոր պարտատիրոջն է անցնում իրավունքի անցման պահին գոյություն ունեցող ծավալով և պայմաններով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Մասնավորապես, նոր պարտատիրոջն են անցնում պարտավորության կատարումն ապահովող, ինչպես նաև պահանջի հետ կապված այլ իրավունքները՝ ներառյալ չվճարված տոկոսների նկատմամբ իրավունքը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 403-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«1. Պարտատիրոջ պահանջի զիջումն այլ անձի թույլատրվում է, եթե դա չի հակասում օրենքին, այլ իրավական ակտերին կամ պայմանագրին»:

Նույն օրենսգրքի 404-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«1. Հասարակ գրավոր կամ նոտարական ձևով կնքված գործարքի վրա հիմնված պահանջը պետք է զիջվի նույն ձևով»:

Սույն Սնանկության Գործով Պարտատիրոջ կողմից ներկայացված Համաձայնագրով միանշանակ ցույց էր տրվել, որ պայմանագրով և Հաշիվ-ապրանքագիր 1-ով ու Հաշիվ-ապրանքագիր 2-ով պարտապանի նկատմամբ «ՍԻԳՆԻՉԸՐ ԼԻԹԻԳԵՅՇՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ունեցած պահանջի իրավունքը պատշաճ ձևակերպմամբ անցել է պարտատիրոջը, իսկ ի հաստատումն գոյություն ունեցող պարտավորությունների և դրանց հստակ ծավալի՝ ներկայացվել են Պայմանագիրը և Հաշիվ-ապրանքագիր 1-ը ու Հաշիվ-ապրանքագիր 2-ը, որոնք վիճարկելու կապակցությամբ ո՛չ պարտապանի և ո՛չ ՎՏ Բանկի կողմից որևէ վերաբերելի և բավարար ապացույց չի

ներկայացվել հնչեցված առարկություններից գատ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 04.03.2021 թվականի որոշումը և 11.11.2020 թվականին Դատարանի կողմից կայացված որոշումը՝ բողոքարկված մասերով թողնել օրինական ուժի մեջ:

2.2 «Բեյզ Սեթըլս» ՓԲԸ-ի վճարել բողոքի դեմ «ՎՏԲ Բանկ» ՀԲԸ-ի, «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի, «Նաիրի Ինֆրասթրաքչը Զեփիթել Լիմիթեդ» ՓԲԸ-ի կողմից բերված պատասխանի հիմնավորումները

«Բեյզ Սեթըլս» ՓԲԸ-ի վճարել բողոքի «Նաիրի Ինֆրասթրաքչը Զեփիթել Լիմիթեդ» ՓԲԸ-ին վերաբերող մասի վերաբերյալ.

«Նաիրի Ինֆրասթրաքչը Զեփիթել Լիմիթեդ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փորձագետի եզրակացությունները, չհամապատասխանելով ապացույցի նման տեսակին ներկայացվող պահանջներին, չէին կարող համարվել նաև սովորական գրավոր ապացույց: Մասնավորապես, Դատարանը «Նաիրի Ինֆրասթրաքչը Զեփիթել Լիմիթեդ» ՓԲԸ-ի ներկայացրած փորձագետի եզրակացությունները որակել էր որպես անթույլատրելի ապացույցներ: Մինչդեռ, ապացույցների թույլատրելիության կանոնները սահմանված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածով, և այդ կանոններից որևէ մեկի կիրառմամբ արտադատական փորձաքննության եզրակացությունը չի կարող համարվել անթույլատրելի: Բողոքաբերը փորձել է հիմնավորել, որ տվյալ դեպքում առկա է ապացույցի անթույլատրելիության դեպքը, որը սահմանված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասով, սակայն չի նշել, թե որ օրենքի կամ նորմատիվ իրավական ակտի համաձայն վնասի չափը չի կարող հաստատվել փորձագետի եզրակացությունից բացի այլ ապացույցով: Տվյալ դեպքում գործին մասնակցող անձի իրավունքն է փաստի հաստատման համար տարբեր ապացույցների շարքում ներկայացնել նաև հատուկ գիտելիքներ ունեցող անձի՝ փորձագետի եզրակացություն, սակայն փորձագետի եզրակացություն ներկայացնելու հնարավորությունն ինքնին այլ ապացույցներն անթույլատրելի չի դարձնում:

«Բեյզ Սեթըլս» ՓԲԸ-ի վճարել բողոքի «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ պահանջի և «ՎՏԲ Բանկ» ՀԲԸ պահանջի քննության կասեցման մասի վերաբերյալ.

Այս մասերով բճռաբեկ բողոքի հիմքերն ու հիմնավորումներն ըստ էության ամբողջությամբ կրկնում են բողոք բերողի այն դիրքորոշումները, որոնք ներկայացվել են սևանկության դատարանում պահանջների քննության ժամանակ և վերաքննիչ վարույթում: Ուստի, սույն վճռաբեկ բողոքի պատասխանն ավելորդ չձանրաբեռնելու նպատակով այս մասով ևս հղում են արել «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի անունից և «ՎՏԲ Բանկ» ՀԲԸ-ի անունից պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշման դեմ ներկայացված վերաքննիչ բողոքներին և Վճռաբեկ դատարանին խնդրել են լրացուցիչ ուսումնասիրել դրանք:

2.3 «Թեյ Էս Էմ Էյ» ՓԲԸ-ի վճարել բողոքի դեմ «ՎՏԲ Բանկ» ՀԲԸ-ի, «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի, «Նաիրի Ինֆրասթրաքչը Զեփիթել Լիմիթեդ» ՓԲԸ-ի կողմից բերված պատասխանի հիմնավորումները

Դատարանը մերժել էր դատափաստաթղթաբանական փորձաքննություն նշանակելու մասին որոշումը և հաստատել էր «Թեյ-Էս-Էմ-Էյ» ՓԲԸ-ի պահանջը: Դատարանը փորձաքննության նշանակումը մերժել էր այն պատճառաբանությամբ, որ ըստ էության վիճարկվել է փաստաթղթի իսկությունը, որի պարագայում փաստաթուղթը ներկայացնող պետք է ապացուցի դրա իսկական լինելը, իսկ գործին մասնակցող մյուս անձինք, չունենալով համապատասխան ապացուցման պարտականություն, չեն կարող այդ փաստը պարզելուն ուղղված փորձաքննություն նշանակելու միջնորդություն ներկայացնել: Վերաքննիչ բողոքարկման արդյունքում Վերաքննիչ դատարանն իրավացիորեն եզրահանգել է, որ «... օրենսդիրը նման միջնորդություն ներկայացնելու իրավունք ունեցող անձանց շրջանակի վերաբերյալ որևէ սահմանափակում չի սահմանել, ուստի, եթե գործին մասնակցող անձանցից որևէ մեկը ներկայացրել է փորձաքննություն նշանակելու միջնորդություն, դատարանը այն չի կարող մերժել այն պատճառաբանությամբ, որ նման միջնորդություն ներկայացնելու իրավասություն ունի միայն փորձաքննությամբ պարզման ենթակա փաստերի ապացուցման պարտականություն կրող կողմը» և որ «... տվյալ դեպքում պահանջի հիմնավորվածությունը պարզելու համար անհրաժեշտ է նշանակել փորձաքննություն»: Քննարկվող փորձաքննությամբ կարող է հաստատվել պարտապանի անունից տրված լիազորագիրը «հետին ամսաթվով» կազմված լինելու, կամ ընդհուպ՝ կեղծ լինելու հանգամանքը: Երկու դեպքն էլ կնշանակեն, որ պայմանագիրը, որի հիման վրա ներկայացված է դրամական պահանջ, կնքված չի եղել պարտապանի կողմից, ուստի չի կարող նրա համար պարտականություններ առաջացնել: Այս առումով հատկանշական է, որ բողոք բերած անձը փորձում է լիազորություն չունեցող անձի կողմից պայմանագիր կնքելու հետևանքը նույնացնել այդ պայմանագրի վիճարկելիության և դրա հետևանքների հետ: Մինչդեռ, լիազորություն չունեցող անձի կողմից գործարք կնքելու հետևանքը ոչ թե նման գործարքի անվավերությունն է, այլ այն, որ այդ գործարքը կնքված չի համարվում այն անձի կողմից, որի անունից գործել է լիազորություն չունեցող անձը, այլ կնքված է համարվում լիազորություն չունեցող անձի անունից և ի շահ նրա: Պարզ ասած՝ եթե որևէ ընկերության կողմից լիազորություն չունեցող անձ գործարք կնքի այդ ընկերության անունից, ապա նման գործարքը ընկերության համար

իրավական հետևանքներ չի առաջացնի: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 319-րդ հոդվածով սահմանված հետևանքը կիրառելի է տվյալ դեպքում հատկապես նաև այն պատճառով, որ ծառայությունների մատուցման պայմանագրով որպես պատվիրատու «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ից բացի (որի անունից հանդես է եկել ենթադրաբար լիազորություն չունեցող Վալերի Մեջլումյանը) նշվել է նաև հենց Վալերի Մեջլումյանը, ուստի պայմանագիրն ամբողջությամբ պետք է համարվի վերջինիս անունից և ի շահ նրա կնքված: Իսկ եթե «Քեյ-Ես-Էմ-Էյ» ՓԲԸ-ի պահանջը դիտարկվի ոչ թե որպես պայմանագրից բխող, այլ որպես անհիմն հարստացման վերադարձման պահանջ, այդ պարագայում պահանջը պետք է հիմնավորվեր բոլորովին այլ փաստակազմով, ներառյալ՝ առանց հանձնարարության, ի շահ ուրիշ գործողությունների բարեխղճության և իրավաչափության վավերապայմաններով: Մինչդեռ նման հիմնավորում «Քեյ-Ես-Էմ-Էյ» ՓԲԸ-ի կողմից երբևէ չի ներկայացնել սույն գործի շրջանակներում:

Հիմք ընդունելով վերը շարադրված հիմնավորումները՝ ինդերել են վճռաբեկ բողոքը մերժել:

3. Վճռաբեկ բողոքների քննության համար եական նշանակություն ունեցող փաստերը.

1. 2016 թվականի սեպտեմբերի 30-ին Банк ВТБ (ПАО) ընկերության (որպես՝ Վարկատու և Գործակալ), VTB Bank (France) SA ընկերության (որպես՝ Երկրորդ Վարկատու), «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության (որպես՝ Հայաստանյան Գործակալ) (մի կողմից) և «Թեդոլտ» ՓԲ ընկերության (որպես՝ Փոխառու), TEGHOUT INVESTMENTS LIMITED ընկերության, «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերության, «Վալլեքս ԷՖ.Էմ. Էստ.» ՍՊ ընկերություն (ООО «Валлек Ф.М.Эст.») և «Բեյզ Մեթրլս» ՓԲ ընկերության (որպես՝ Երաշխավորներ) (մյուս կողմից) միջև կնքվել է միջև 300.000.000 ԱՄՆ դոլար գումարով Գլխավոր փոխատվության պայմանագիր (այսուհետ՝ 30.09.2016 թվականին կնքված Գլխավոր փոխատվության պայմանագիր):

2. ՎՏԲ Բանկ ՀԲԸ (Банк ВТБ (ПАО) ընկերության և «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերության միջև 30.09.2016 թվականին կնքվել է անշարժ գույքի հաջորդող գրավի պայմանագիր (այսուհետ՝ 30.09.2016 թվականին կնքված անշարժ գույքի հաջորդող գրավի պայմանագիր):

3. «ՎՏԲ Բանկ ՀԲԸ (Банк ВТБ (ПАО) ընկերության և «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերության միջև 30.09.2016 թվականին կնքվել է շարժական գույքի հաջորդող գրավի պայմանագիր (այսուհետ՝ 30.09.2016 թվականին կնքված շարժական գույքի հաջորդող գրավի պայմանագիր):

4. Թիվ ԵԴ/31505/02/19 քաղաքացիական գործի շրջանակներում քննվում է Վալերի Ջանիբեկի Մեջլումյանի հայցադիմումն ընդդեմ «ՎՏԲ Բանկ» ՀԲԸ-ի, «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի, Երրորդ անձինք՝ «Թեդոլտ» ՓԲԸ-ի, «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի, «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի՝ բաժնետոմսերի հաջորդող գրավի պայմանագիրը դադարած համարելու և գրավի իրավունքի դադարումը գրանցելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

5. Թիվ ԵԴ/27276/02/19 քաղաքացիական գործով, ըստ հայցի «Վալլեքս ԷՖ.Էմ.Էստ.» ՍՊԸ-ի ընդդեմ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի՝ Բանկի, Ընկերության և «Թեդոլտ» ՓԲԸ-ի միջև 16.01.2012 թվականին կնքված թիվ «201 Օ» երաշխավորության պայմանագրով սահմանված երաշխավորությունը դադարած համարելու պահանջի մասին, Վճռաբեկ դատարանի 09.12.2020 թվականի որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

6. 2018 թվականի հոկտեմբերի 16-ի նամակ-համաձայնագրի համաձայն՝ «Սիգնիչըր Լիթիգեյշըն» ՍՊ գործընկերությունը պարտավորվել է հանդես գալ «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերության և Վալերի Մեջլումյանի անունից Լոնդոնի միջազգային արբիտրաժային դատարանում, որը ներառում է արբիտրաժային հայցի նախապատրաստում և ներկայացում Լոնդոնի միջազգային արբիտրաժային դատարան՝ արբիտրաժային գործընթացը սկսելու համար: Նշված նամակ-համաձայնագիրը կնքվել է «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերության անունից տնօրեն Վալերի Մեջլումյանի, Վալերի Մեջլումյանի և «Սիգնիչըր Լիթիգեյշըն» ՍՊ գործընկերության անունից Ջոշ Վոնգի կողմից:

7. 31.08.2019թ. թիվ 007018 հաշիվ-ապրանքագրի համաձայն՝ վճարման ենթակա գումարի ընդհանուր թիվը կազմում է 231.558,23 \$-ում ստերլինգ:

8. 30.09.2019թ. թիվ 007046 հաշիվ-ապրանքագրի համաձայն՝ վճարման ենթակա գումարի ընդհանուր թիվը կազմում է 220.085,91 \$-ում ստերլինգ:

9. «Քեյ-Ես-Էմ-Էյ» ՓԲ ընկերության և «Սիգնիչըր Լիթիգեյշըն» ՍՊ գործընկերության միջև 2020 թվականի հունվարի 13-ին կնքվել է «Հիջման մասին» համաձայնագիր, համաձայն որի «Սիգնիչըր Լիթիգեյշըն» ՍՊ գործընկերությունը 13.01.2020թ. դրությամբ ունի պահանջներ «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերության նկատմամբ՝ համաձայն «Սիգնիչըր Լիթիգեյշըն» ՍՊ գործընկերության և «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերության միջև 16.10.2018թ. 451.644,14 \$-ում ստերլինգ գումարի չափով պարտավորագրի: Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Սիգնիչըր Լիթիգեյշըն» ՍՊ գործընկերությունը զիջել է «Քեյ-Ես-Էմ-Էյ» ՓԲ ընկերությանը 451.644,14 \$-ում ստերլինգ գումարի չափով պահանջի նկատմամբ իր բոլոր իրավունքները և սեփականության իրավունքը:

10. 19.09.2018թ. լիազորագրի համաձայն՝ «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերության տնօրեն Լուսինե Մեջլումյանը լիազորել է Վալերի Մեջլումյանին, Ընկերության անունից և փոխարեն հանդես գալ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության, մասնավորապես՝ Անգլիայի պետական մարմինների, իրավաբանական և

Ֆիզիկական անձանց առջև և Ընկերության շահերը ներկայացնելու ու պաշտպանելու նպատակով, ի թիվս այլնի, ստորագրել իրավական օգնություն ստանալու և /կամ/ Լոնդոնի Միջազգային Արբիտրաժային դատարանում Ընկերության շահերը ներկայացնելու վերաբերյալ պայմանագրեր, համաձայնագրեր կամ այլ համարժեք փաստաթղթեր «Սիզնիչըր Լիթիգեյշըն» ՍՊ գործընկերության, «Բոյես Շիլլեր Ֆլեքսներ» ընկերության, ինչպես նաև Մեծ Բրիտանիայի և /կամ/ Անգլիական իրավունքին համապատասխան գործունեության ծավալող մասնագիտացված այլ կազմակերպությունների հետ, նրանց տալ համապատասխան ծառայությունների մատուցման հանձնարարականներ, պարտադիր կատարման ցուցումներ, վերահսկել ծառայությունների մատուցման ընթացքը (հատոր 35-րդ, գ.թ.127):

11. Դատարանը մերժել է «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի փորձաքննությունն նշանակելու մասին միջնորդությունը, որին միացել է նաև «ՎՏԲ Բանկ» ՀԲԸ-ն:

12. 2018 թվականի հոկտեմբերի 16-ի նամակ-համաձայնագրի համաձայն՝ «Սիզնիչըր Լիթիգեյշըն» ՍՊ գործընկերությունը պարտավորվել է հանդես գալ «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերության և Վալերի Մեջլումյանի անունից Լոնդոնի միջազգային արբիտրաժային դատարանում, որը ներառում է արբիտրաժային հայցի նախապատրաստում և ներկայացում Լոնդոնի միջազգային արբիտրաժային դատարան՝ արբիտրաժային գործընթացը սկսելու համար: Նշված նամակ-համաձայնագիրը կնքվել է «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերության անունից տնօրեն Վալերի Մեջլումյանի, Վալերի Մեջլումյանի և «Սիզնիչըր Լիթիգեյշըն» ՍՊ գործընկերության անունից Ջոշ Վոնգի կողմից:

13. 31.08.2019թ. թիվ 007018 հաշիվ-սպրանքագրի համաձայն՝ վճարման ենթակա գումարի ընդհանուր թիվը կազմում է 231.558,23 Ֆունտ ստերլինգ:

14. 30.09.2019թ. թիվ 007046 հաշիվ-սպրանքագրի համաձայն՝ վճարման ենթակա գումարի ընդհանուր թիվը կազմում է 220.085,91 Ֆունտ ստերլինգ:

15. «Քեյ-Էս-Էմ-Էյ» ՓԲ ընկերության և «Սիզնիչըր Լիթիգեյշըն» ՍՊ գործընկերության միջև 2020 թվականի հունվարի 13-ին կնքվել է «Չիջման մասին» համաձայնագիր, համաձայն որի «Սիզնիչըր Լիթիգեյշըն» ՍՊ գործընկերությունը 13.01.2020թ. դրությամբ ունի պահանջներ «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերության նկատմամբ՝ համաձայն «Սիզնիչըր Լիթիգեյշըն» ՍՊ գործընկերության և «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերության միջև 16.10.2018թ. 451.644,14 Ֆունտ ստերլինգ գումարի չափով պարտավորագրի: Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Սիզնիչըր Լիթիգեյշըն» ՍՊ գործընկերությունը զիջել է «Քեյ-Էս-Էմ-Էյ» ՓԲ ընկերությանը 451.644,14 Ֆունտ ստերլինգ գումարի չափով պահանջի նկատմամբ իր բոլոր իրավունքները և սեփականության իրավունքը:

16. 19.09.2018թ. լիազորագրի համաձայն՝ «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերության տնօրեն Լուսինե Մեջլումյանը լիազորել է Վալերի Մեջլումյանին, Ընկերության անունից և փոխարեն հանդես գալ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության, մասնավորապես՝ Անգլիայի պետական մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց առջև և Ընկերության շահերը ներկայացնելու ու պաշտպանելու նպատակով, ի թիվս այլնի, ստորագրել իրավական օգնություն ստանալու և /կամ/ Լոնդոնի Միջազգային Արբիտրաժային դատարանում Ընկերության շահերը ներկայացնելու վերաբերյալ պայմանագրեր, համաձայնագրեր կամ այլ համարժեք փաստաթղթեր «Սիզնիչըր Լիթիգեյշըն» ՍՊ գործընկերության, «Բոյես Շիլլեր Ֆլեքսներ» ընկերության, ինչպես նաև Մեծ Բրիտանիայի և /կամ/ Անգլիական իրավունքին համապատասխան գործունեության ծավալող մասնագիտացված այլ կազմակերպությունների հետ, նրանց տալ համապատասխան ծառայությունների մատուցման հանձնարարականներ, պարտադիր կատարման ցուցումներ, վերահսկել ծառայությունների մատուցման ընթացքը (հատոր 35-րդ, գ.թ.127):

17. «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության և «Թեդուտ» ՓԲ ընկերության միջև 22.11.2011թ.-ին կնքվել է թիվ 201 Վարկային համաձայնագիրը:

Համաձայն նշված համաձայնագրի 1.1 կետի՝ սույն Համաձայնագրի նպատակներով ստորև նշված տերմիններն ունեն հետևյալ նշանակությունը՝

Հիմնական պարտք-համաձայնագրի գործողության ցանկացած ամսաթվի դրությամբ տրամադրված և չմարված, այդ թվում՝ պայմանագրով սահմանված ժամկետում չմարված, վարկառուի կողմից վարկի գումարը: Առաջին տոկոսային ժամանակաշրջան - տոկոսների հաշվեգրման ժամանակահատվածն է, որը սկսվում է վարկի տրամադրման պահից և ավարտվում վարկերի տրամադրման ժամկետի ավարտին: Հետագա տոկոսային ժամանակաշրջաններն ավարտվում են նախորդ տոկոսային ժամանակաշրջանի ավարտի ամսաթվից երեք ամիս հետո:

Համաձայն նշված համաձայնագրի 2. կետի՝ վարկատուն պարտավորվում է բացել Վարկային գիծ և Վարկառուին տրամադրել Վարկեր Համաձայնագրում նշված չափով և պայմաններով, իսկ Վարկառուն պարտավորվում է վերադարձնել Վարկերը, վճարել Վարկերի տոկոսները և կատարել Համաձայնագրով նախատեսված այլ պարտավորությունները:

Համաձայնագրի 3.1. կետի համաձայն՝ վարկային գծի տրամադրման սահմանաչափ է սահմանվել 115,852,000.00 ԱՄՆ դոլարը:

Վարկառուի կողմից վարկային գծի օգտագործումը Պայմանագրում նշված այլ նպատակներից բացի չի թույլատրվում: Վարկի հաշվին չի կարող վճարվել տոկոսները, միջնորդավճարները և Վարկառուի ծախսերը, ըստ համաձայնագրի:

18. «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության և «Թեդուտ» ՓԲ ընկերության միջև 22.11.2011թ.-ին կնքվել է թիվ 202 Վարկային համաձայնագիրը:

Համաձայն նշված համաձայնագրի 1.1 կետի՝ սույն Համաձայնագրի նպատակներով ստորև

նշված տերմիններն ունեն հետևյալ նշանակությունը՝

Հիմնական պարտք-համաձայնագրի գործողության ցանկացած ամսաթվի դրությամբ տրամադրված և չմարված, այդ թվում՝ պայմանագրով սահմանված ժամկետում չմարված, վարկառուի կողմից վարկի գումարը:

Առաջին տոկոսային ժամանակաշրջան-տոկոսների հաշվեգրման ժամանակահատվածն է, որը սկսվում է վարկի տրամադրման պահից և ավարտվում վարկերի տրամադրման ժամկետի ավարտին: Հետագա տոկոսային ժամանակաշրջաններն ավարտվում են նախորդ տոկոսային ժամանակաշրջանի ավարտի ամսաթվից երեք ամիս հետո:

Համաձայնագրի 2.1 կետի համաձայն՝ վարկատուն պարտավորվում է բացել Վարկային գիծ և Վարկառուին տրամադրել Վարկեր Համաձայնագրում նշված չափով և պայմաններով, իսկ Վարկառուն պարտավորվում է վերադարձնել Վարկերը, վճարել Վարկերի տոկոսները և կատարել Համաձայնագրի 3.1 կետով սահմանված է վարկային գծի տրամադրման սահմանաչափը՝ 74,700,000.00 ԱՄՆ դոլար:

Վարկառուի կողմից վարկային գծի օգտագործումը Պայմանագրում նշված այլ նպատակներից բացի չի թույլատրվում: Վարկի հաշվին չի կարող վճարվել տոկոսները, միջնորդավճարները և Վարկառուի ծախսերը, ըստ համաձայնագրի:

19. «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության և «Թեդուտ» ՓԲ ընկերության միջև 22.11.2011թ.-ին կնքվել է թիվ 203 Վարկային համաձայնագիր:

Համաձայն նշված համաձայնագրի 1.1 կետի՝ սույն Համաձայնագրի նպատակներով ստորև նշված տերմիններն ունեն հետևյալ նշանակությունը՝

Հիմնական պարտք-համաձայնագրի գործողության ցանկացած ամսաթվի դրությամբ տրամադրված և չմարված, այդ թվում՝ պայմանագրով սահմանված ժամկետում չմարված, վարկառուի կողմից վարկի գումարը:

Առաջին տոկոսային ժամանակաշրջան-տոկոսների հաշվեգրման ժամանակահատվածն է, որը սկսվում է վարկի տրամադրման պահից և ավարտվում վարկերի տրամադրման ժամկետի ավարտին: Հետագա տոկոսային ժամանակաշրջաններն ավարտվում են նախորդ տոկոսային ժամանակաշրջանի ավարտի ամսաթվից երեք ամիս հետո:

Վարկառուի կողմից վարկային գծի օգտագործումը Պայմանագրում նշված այլ նպատակներից բացի չի թույլատրվում: Վարկի հաշվին չի կարող վճարվել տոկոսները, միջնորդավճարները և Վարկառուի ծախսերը, ըստ համաձայնագրի:

20. Վարկառու՝ «Թեդուտ» ՓԲԸ-ի, Երաշխավորներ «Թեդուտ Ինվեսթմենթս Լիմիթիդ»-ի, «Արմենիան Քափրը Փրոգրամ» ՓԲԸ-ի, «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ի, «Վալլեթս ԷՖ. Էմ. Էստ» ՍՊԸ-ի, Ֆինանսավորման Կողմերի վարկային գործակալ «ՎՏԲ Բանկ» ՀԲԸ-ի, Ֆինանսավորման Կողմերի ապահովման գործակալ և Համապարտ Պարտատեր՝ «ՎՏԲ Բանկ» ՀԲԸ-ի և Ֆինանսավորման Կողմերի Հայկական ապահովման գործակալ՝ «ՎՏԲ Բանկ (Հայաստան)» ՓԲԸ-ի միջև 30.09.2016 թվականին կնքվել է 300.000.000 ԱՄՆ դոլար գումարով Վարկային գծի պայմանագիր: Համաձայն պայմանագրի՝

«1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ.

1.1. Սահմանումներ ...

«Ֆինանսավորման Կողմ նշանակում է. Գործակալը, Ապահովման գործակալը, Հայկական Ապահովման գործակալը կամ Վարկատուն: / ... /:

«Վերաֆինանսավորման Վարկային Գծի Պայմանագիր»՝ նշանակում է Վերաֆինանսավորման Վարկային Գծի Պայմանագիր 1-ը, Վերաֆինանսավորման Վարկային Գծի Պայմանագիր 2-ը և Վերաֆինանսավորման Վարկային Գծի Պայմանագիր 3-ը:

«Վերաֆինանսավորման Վարկային Գծի Պայմանագիր 1» նշանակում է՝ Վարկառուի և «ՎՏԲ Բանկ (Հայաստան)» ՓԲ ընկերության միջև 22.11.2011 թվականին կնքված թիվ 201 ժամկետային Վարկառության պայմանագիրը՝ 19.12.2012 թվականի, 29.03.2013 թվականի 28.06.2013 թվականի, 09.07.2013 թվականի, 29.10.2013 թվականի և 21.11.2013 թվականի փոփոխություններով:

«Վերաֆինանսավորման Վարկային Գծի Պայմանագիր 2» նշանակում է՝ Վարկառուի և «ՎՏԲ Բանկ (Հայաստան)» ՓԲ ընկերության միջև 22.11.2011 թվականին կնքված թիվ 202 ժամկետային Վարկառության պայմանագիրը՝ 19.12.2012 թվականի, 29.03.2013 թվականի, 09.07.2013 թվականի, 28.06.2013 թվականի, 29.10.2013 թվականի, 21.11.2013 թվականի և 02.09.2014 թվականի փոփոխություններով:

«Վերաֆինանսավորման Վարկային Գծի Պայմանագիր 3» նշանակում է՝ Վարկառուի և «ՎՏԲ Բանկ (Հայաստան)» ՓԲ ընկերության միջև 22.11.2011 թվականին կնքված թիվ 203 ժամկետային Վարկառության պայմանագիրը՝ 19.12.2012 թվականի, 29.03.2013 թվականի, 28.06.2013 թվականի, 09.07.2013 թվականի, 29.10.2013 թվականի և 21.11.2013 թվականի փոփոխություններով:

2. ՎԱՐԿՎՅՑԻՆ ԳԻԾ

2.1. Համաձայն սույն Պայմանագրի պայմանների, Վարկատունները Վարկառուին տրամադրում են՝

(a) դոլարով ժամկետային վարկային գիծ՝ Ա. Վարկային Գծով Ընդհանուր Պարտավորության ընդհանուր գումարի չափով, և

(b) դոլարով ժամկետային վարկային գիծ, Բ. Վարկային Գծով Ընդհանուր Պարտավորության ընդհանուր գումարի չափով:

3. ՆՊԱՏԱԿԸ

3.1. Նպատակը

(a) Վարկառուն պետք է կիրառի Ա. Վարկային Գծով ստացած բոլոր Վարկառու միջոցները Վերաֆինանսավորման Վարկային Գծի Պայմանագրերով չվճարված բոլոր մայր գումարների մարումը ֆինանսավորելու համար (երկրնթերցումներից խուսափելու համար՝ նման մարումը չի ներառելու Վերաֆինանսավորման Վարկային Գծի Պայմանագրերի առաջին տոկոսային ժամանակահատվածի համար վճարման ենթակա տոկոսները):

(b) Վարկառուն պետք է կիրառի Բ. Վարկային Գծով ստացած բոլոր Վարկառու միջոցները Սուբորդինացված Վարկառության Պայմանագրերով չվճարված բոլոր գումարների մարումը ֆինանսավորելու համար, որպեսզի ԱՓԲ-ն հնարավորություն ունենա մարել ԱՓԲ Վարկային Գծի Պայմանագրեր՝ ՎՏԲ-Ֆրանսիա պայմանագրերով բոլոր չվճարված մայր գումարները:

21. «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության և «Թեդուտ» ՓԲ ընկերության միջև 22.11.2011թ. կնքվել են թիվ 201, 202, 203 վարկային պայմանագրերը, որոնք հետագայում փոփոխվել են լրացուցիչ համաձայնագրերով:

2011թ.-ի Վարկային պայմանագրերի կողմերը 31.10.2016թ.-ին կնքել են համապատասխան պայմանագրերին կից (թվով երեք) լրացուցիչ համաձայնագրեր (այսուհետ՝ Լրացուցիչ համաձայնագրեր), որոնցով կարգավորել են 2016թ.-ի Վարկային գծի պայմանագրի ազդեցությունը 2011թ.-ի Վարկային պայմանագրերի վրա:

Լրացուցիչ համաձայնագրերի նախաբանում սահմանված է, որ Վարկառուն մտադրվում է ՎՏԲ Բանկ ՀԲԸ-ի կողմից տրամադրվող վարկային միջոցների հաշվին մարել պարտավորությունները Հիմնական պարտքի գծով, և «Վարկային համաձայնագրով Հիմնական պարտքի գծով պարտավորությունների վաղաժամկետ լրիվ մարման արդյունքում անհրաժեշտություն կառաջանա կարգավորելու Վարկառուի կողմից Վարկային համաձայնագրով տոկոսների և միջնորդավճարների գծով պարտքի մարման հետագա հարցը»:

5-րդ կետում սահմանված է, որ Վարկառուի պարտքի չափը տոկոսների և միջնորդավճարների գծով կազմում է 37,277,060.23 ԱՄՆ դոլար, 33,615,184.83 ԱՄՆ դոլար և 35,675,784.65 ԱՄՆ դոլար: Ընդ որում՝ սահմանված է, որ այդ գումարները ներառում են հաշվարկված և չվճարված տոկոսները Առաջին տոկոսային ժամանակաշրջանի համար, չվճարված տոկոսները Հաջորդող տոկոսային ժամանակաշրջանի համար:

Լոնդոնի Միջազգային Արբիտրաժային Դատարանի 04.10.2019թ. որոշման համաձայն՝ «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերությունը պարտավորվել է «ՆԱԻՐԻ ԻՆՖՐԱՍՏՐԱԿՏՐԱ ԲԵՓԻԹԵԼ ԼԻՄԻԹԵԴ» ՍՊ ընկերությանը տասնչորս օրվա ընթացքում վճարել 104.978,10 եվրոյի չափով գումար, որպես իրավաբանական ծառայությունների ծախսերի փոխհատուցում:

22. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԴ/0080/16/20 գործով 07.09.2020թ. կայացված որոշմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում ճանաչվել է Լոնդոնի Միջազգային Արբիտրաժային Դատարանի 04.10.2019թ. թիվ 184100 որոշումը: Նշած որոշումը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ, որի վերաբերյալ գործը քննող դատավորի կողմից կատարվել է համապատասխան նշում:

23. «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերության, «ՆԱԻՐԻ ԻՆՖՐԱՍՏՐԱԿՏՐԱ ԲԵՓԻԹԵԼ ԼԻՄԻԹԵԴ» ՍՊ ընկերության և Վալերի Մեջլումյանի միջև 20.07.2011թ. կնքվել է Օպցիոն համաձայնագիր/փոփոխված 01.03.2017թ. համաձայնագրով/, համաձայն որի /2.1 և 2.2 կետեր/ «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերությունը «ՆԱԻՐԻ ԻՆՖՐԱՍՏՐԱԿՏՐԱ ԲԵՓԻԹԵԼ ԼԻՄԻԹԵԴ» ՍՊ ընկերությանը տրամադրել է օպցիոն՝ վերջինիս պահանջի դեպքում ձեռք բերել «Թեդուտ Ինվեսթմենթս Լիմիթեդ» ընկերության Բ դասի 498 բաժնետոմսեր՝ 38.650.000 ԱՄՆ դոլարով /Օպցիոնի գինը՝ սահմանված Օպցիոնի համաձայնագրի 3-րդ կետով /01.03.2017թ. համաձայնագրի փոփոխությամբ//:

24. 20.09.2019թ. Թիմաթի Ջ Ալլենի և Անաստասիա Մայլագինայի փորձագիտական եզրակացության համաձայն՝ «ՆԱԻՐԻ ԻՆՖՐԱՍՏՐԱԿՏՐԱ ԲԵՓԻԹԵԼ ԼԻՄԻԹԵԴ» ՍՊ ընկերության վնասը կազմում է 38.650.000 ԱՄՆ դոլար գումար:

25. Անկախ աուդիտորի աուդիտորական եզրակացությամբ հաստատված 31.12.2018թ. ավարտված տարվա «ՎՏԲ Բանկ» ՀԲԸ համախմբված ֆինանսական հաշվետվության համաձայն՝ «Թեդուտ Ինվեսթմենթս Լիմիթեդ» ընկերության արժեքը նշված է 22 միլիարդ ռուբլի:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել «Սևանկության մասին» ՀՀ օրենքի 20.1-րդ հոդվածի 1-ին մասի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքների քննության ընթացքում վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ.

1. սևանկության վարույթում պարտավորության կետանցով պատճառված վնասի դրամական պահանջի գրանցման իրավական հարցին.

2. լիազորագրի հիման վրա կնքված պայմանագրի իրավական հետևանքների հարցին, եթե լիազորագիրը ստորագրվել է դրա տրման օրվանից տարբերվող ամսաթվով:

3. սնանկության վարույթում պահանջի գրանցման կասեցման իրավական հարցին, եթե վիճարկվում է պարտավորության կատարման ապահովման միջոցներից մեկը:

4. պարտավորությունը դադարելու իրավական հարցին այն դեպքում, երբ այդ պարտավորության կատարման ապահովման երաշխավորությունը դատական կարգով դադարած է ճանաչվել դրա նորացման հիմքով:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի (գործող խմբագրություն առ 03.03.2020 թվական) (այսուհետ՝ «Օրենք») 46-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ եթե իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում հրապարակումից հետո՝ յոթ օրվա ընթացքում, կառավարիչը, պարտապանը և պարտատերերը գրավոր առարկություն են ներկայացնում պահանջների նախնական ցուցակի առաջնահերթության կամ որևէ պարտատիրոջ պահանջի վերաբերյալ, ապա դատավորը առարկությունն ստանալուց հետո՝ 15 օրվա ընթացքում, հրավիրում է դատական նիստ, որի տեղի և ժամանակի մասին կառավարիչին, պարտապանին և պարտատերերին ծանուցում է իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլով՝ նիստից առնվազն երեք օր առաջ տրվող հայտարարությամբ կամ ծանուցագիր ուղարկելու միջոցով:

Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն առարկությունների քննարկման արդյունքում դատարանը որոշում է պահանջի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը, ապահովվածությունը և որոշում է կայացնում պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սնանկության գործի վարույթը առանձին պարտատերերի պահանջների մասով կարող է կասեցվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ կասեցման հիմքերի առկայության դեպքում, եթե այդ իրավակարգավորումները կիրառելի են սնանկության վարույթում առանձին պահանջների քննության նկատմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե՝ անհնարին է տվյալ գործի քննությունը մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ հարցով կամ գործով եզրափակիչ ակտ կայացնելը. (...):

Սույն սնանկության գործով Դատարանի 20.11.2020 թվականի «Պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին» որոշմամբ «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված միջնորդությունը՝ «Քեյ-Էս-Էմ-Էյ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված պահանջի մասով դատաձեռագրաբանական փորձաքննություն նշանակելու վերաբերյալ մերժվել է: «ՎՏԲ Բանկ» ՀԲԸ-ի կողմից ներկայացված պահանջի քննությունը կասեցվել է մինչև թիվ ԵԴ/31505/02/19 քաղաքացիական գործով եզրափակիչ դատական ակտ կայացնելը: Դատարանի որոշմամբ «ՆԱԻՐԻ ԻՆՖՐԱՍՏՐԱԿՏՐԱԿՏՐ ԲԵՓԻԹԵԼ ԼԻՄԻԹԵԴ» ՍՊԸ-ի և «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված պահանջների հաստատումը մերժվել է:

Դատարանի վերոնշյալ որոշման դեմ ի թիվս այլոց վերաքննիչ բողոք են ներկայացրել նաև «ՎՏԲ Բանկ» ՀԲԸ-ն, «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն և «ՆԱԻՐԻ ԻՆՖՐԱՍՏՐԱԿՏՐ ԲԵՓԻԹԵԼ ԼԻՄԻԹԵԴ» ՍՊԸ-ն:

Վերաքննիչ դատարանը 04.03.2021 թվականի որոշմամբ անդրադառնալով «ՎՏԲ Բանկ» ՀԲԸ-ի վերաքննիչ բողոքին՝ արձանագրել է, որ հաշվի առնելով այն, որ սույն գործով քննության են ենթակա այնպիսի պահանջներ, որոնցով պարտապանը հանդիսանում է մեկը, ուստի պարտատերերից յուրաքանչյուրի պահանջի բավարարումը ուղղակիորեն կարող է էական լինել նաև մյուս պարտատերերի համար, ուստի Դատարանը պետք է ամեն կերպ փորձեր պարզել պահանջի հիմնավորվածությունը, առաջնահերթությունը և միայն դրանից հետո այն գրանցեր պահանջների ցուցակում, այդ թվում՝ Դատարանը կարող էր նշված հանգամանքների պարզման համար նշանակել փորձաքննություն, մինչդեռ Դատարանը ներկայացված միջնորդությունը մերժել է, դրանով իսկ կասկածի տակ դնելով «Քեյ-Էս-Էմ-Էյ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված պահանջի անվիճելիությունը և հիմնավորվածությունը, գտել է, որ տվյալ դեպքում պահանջի հիմնավորվածությունը պարզելու համար անհրաժեշտ է նշանակել փորձաքննություն, որից հետո միայն հնարավոր կլինի հանգել հետևության, որ Վալերի Մեջլումյանին տրված լիազորագրով վերջինս իրավաչափորեն ունեցել է իրավունք պարտապանի անունից «Սիգնիչըր Լիթիգեյշըն» ՍՊ գործընկերության հետ ստորագրելու համաձայնագիր՝ դրանով իսկ ընկերության համար մատուցված ծառայությունների դիմաց վարձավճար վճարելու պարտականություն առաջացնել:

Անդրադառնալով «ՎՏԲ Հանրային բանկ» ՓԲԸ-ի վերաքննիչ բողոքին, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ թիվ ԵԴ/31505/02/19 քաղաքացիական գործով հայցի առարկան բաժնետոմսերի հաջորդող գրավի պայմանագիրը դադարած համարելու և գրավի իրավունքի դադարումը գրանցելուն պարտավորեցնելու պահանջն է, որը որևէ անհնարինություն չի կարող առաջացնել սույն գործով պահանջի քննության համար: Ավելին՝ հիմնական պարտավորությունը հանդիսանում է 300.000.000 ԱՄՆ դոլար գումարով Գլխավոր փոխատվության պայմանագրի հիման վրա ծագած պարտավորությունը, իսկ հաջորդող գրավի պայմանագիրը կնքվել է ի ապահովումն նշված պարտավորության, ուստի հիմնական պարտավորության առկայության պայմաններում ապահովում սահմանող պայմանագիրը դադարած համարելը չի կարող խոչընդոտել կամ վերացնել հիմնական պարտավորությունը: Բացի այդ՝ բացի հաջորդող գրավի պայմանագրից, ի ապահովումն Գլխավոր փոխատվության պայմանագրի՝ կնքվել են նաև այլ գրավի և երաշխավորության պայմանագրեր, հետևաբար

սույն պարագայում ապահովման միջոցներից մեկը հանդիսացող պայմանագրի դադարած համարելն անգամ չի հանգեցնում պարտավորության դադարեցման, չի վերացնում մյուս ապահովման միջոցները և չի խոչընդոտում սույն պահանջի քննությանը: Ընդ որում, պարտապանը չի վիճարկում պարտավորության բացակայությունն, այլ ընդամենը վիճարկում է տվյալ պարտավորության ապահովման միջոցներից մեկի դադարած լինելու հանգամանքը, ուստի գործի վարույթը պահանջի քննության մասով, ենթակա չէր կասեցման: Ելնելով վերոգրյալից՝ Վերաքննիչ դատարանը գտել է, որ «ՎՏԲ Հանրային բանկ» ՓԲԸ-ի պահանջի քննությունը կասեցման ենթակա չէր:

Վերաքննիչ դատարանը միաժամանակ անդրադառնալով «ՆԱԻՐԻ ԻՆՖՐԱՍԹՐԱԶՈՐ ԶԵՓԻԹԵԼ ԼԻՄԻԹԵԴ» ՍՊԸ-ի վերաքննիչ բողոքին՝ նշել է, որ արտադատական կարգով ներկայացված փորձագիտական եզրակացությունները պետք է դատարանի կողմից հետազոտվեն որպես գրավոր ապացույցներ՝ մյուս ապացույցների հետ համադրման արդյունքում կատարելով փաստի հաստատման վերաբերյալ դատողություններ և միայն այդ դեպքում հնարավոր կլինի հանգել փաստի հաստատման համար բավարար կամ ոչ բավարար ապացույցներ ներկայացված լինելու վերաբերյալ հետևության:

Տվյալ դեպքում Դատարանը գնահատման առարկա դարձնելով «ՆԱԻՐԻ ԻՆՖՐԱՍԹՐԱԶՈՐ ԶԵՓԻԹԵԼ ԼԻՄԻԹԵԴ» ՍՊԸ-ի կողմից դատարան ներկայացրած 20.09.2019 թվականի Թիմոթի Զ Ալլենի և Անաստասիյա Մայուլզինայի փորձագիտական եզրակացությունը և 23.09.2020 թվականին տրված փորձագետ Անաստասիյա Մայուլզինայի եզրակացությունը, նշել է, որ դրանք չեն կարող համարվել թույլատրելի ապացույցներ, քանի որ սույն գործով չի պահպանվել եզրակացություններ տրված փորձագետների կողմից դատական նիստի ընթացքում դատարանի արջև ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար քրեական պատասխանատվության մասին նախազգուշացված լինելու և դրանք հաստատելու դատավարական կարգը, ուստի դրանք սույն գործով որևէ փաստ ապացուցելու հիմքում չեն կարող դրվել:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը հիմնավոր համարելով Դատարանի այն հետևությունները, որ ներկայացված եզրակացությունները որպես այդպիսին չեն կարող համարվել թույլատրելի ապացույց, միևնույն ժամանակ նշել է, որ այդ եզրակացությունները ենթակա են հետազոտման որպես գրավոր ապացույցներ՝ մյուս ապացույցների հետ համադրման արդյունքում, ինչը, սակայն, Դատարանը չի իրականացրել:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է.

Սույն գործի փաստերի համաձայն՝ ներկայացված պահանջների վերաբերյալ առկա են ինչպես ավարտված, այնպես էլ ընթացքում գտնվող քաղաքացիական գործեր Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության դատարաններում, ինչպես նաև միջազգային առևտրային արբիտրաժում, որպիսի հանգամանքն առկա է եղել ինչպես սնանկության դատարանում պահանջների դեմ ներկայացված առարկության քննության, այնպես էլ վերաքննիչ դատարանում վերաքննիչ բողոքի քննության ընթացքում: Այսպես՝ թիվ ԵԴ/31505/02/19 քաղաքացիական գործն ըստ հայրի Վալերի Զանիբեկի Մեջլումյանի հայցն ընդդեմ «ՎՏԲ բանկ» ՔԲԸ-ի, «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի, երրորդ անձինք՝ «Թեդոս» ՓԲԸ-ի, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի, «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի՝ բաժնետոմսերի հաջորդող գրավի պայմանագիրը դադարած համարելու և գրավի իրավունքի դադարումը գրանցելուն պարտավորեցնելու պահանջների մասին, ԵԴ/34197/02/19 քաղաքացիական գործը գրավի առարկայի իրացմանն ուղղված գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու և «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի 100 տոկոս բաժնետոմսերի նկատմամբ հայցվորի սեփականության իրավունքը գրանցելուն «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ին պարտավորեցնելու պահանջի մասին, թիվ ԵԴ/27276/02/19 քաղաքացիական գործը երաշխավորության պայմանագրով սահմանված երաշխավորության պարտավորություններից երաշխավորին ամբողջությամբ ազատելու պահանջի մասին, Լոնդոնի միջազգային արբիտրաժային դատարանի վարույթում, № 194169 արբիտրաժային գործը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն նախկինում քննված քաղաքացիական, սնանկության կամ վարչական գործով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտով հաստատված գործի քննության համար նշանակություն ունեցող փաստերը գործին մասնակցող նույն անձանց մասնակցությամբ այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում: Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել նշված հոդվածի իրավակարգավորումները սնանկության վարույթում կիրառելու հարցի վերաբերյալ:

Ըստ այդմ էլ սնանկության դատարանը նախադատելի համարելով օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով հաստատված հանգամանքները, իրավական գնահատականներ է տվել ներկայացված պահանջների հիմքերին, իսկ դեռևս չավարտված և ընթացքի մեջ գտնվող գործերով վերլուծելով ներկայացված պահանջները և դրանց հիմքում դրված փաստական և իրավական հիմքերը, կասեցրել է առանձին պահանջների գրանցումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այլ դատարանի վարույթում գտնվող գործի ելքն ուղղակիորեն ազդելու է ներկայացված պահանջի չափի և համապատասխան հերթում գրանցելու հարցի վրա:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ սնանկության վարույթում պահանջ ներկայացրած անձինք ևս պարտապանին համահավասար կարող են ներկայացնել առարկություններ յուրաքանչյուր պահանջի առնչությամբ՝ վկայակոչելով նաև օրինական ուժի

մեջ մտած այնպիսի դատական ակտերով հաստատված հանգամանքներ, որոնցով իրենք տվյալ գործին մասնակցող անձ չեն հանդիսացել, սակայն այդ հանգամանքները էական նշանակություն ունեն ներկայացված պահանջի գրանցման հարցի քննարկման համար:

Տվյալ դեպքում օրինական ուժի մտած ԵՄԴ/2776/02/19 վճռով երաշխավորի պարտավորությունները դադարած են համարվել այն պարտավորության նորացմամբ, որի ապահովման համար կնքվել էր երաշխավորության պայմանագիրը:

Այս համատեքստում Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում բողոք բերած անձանց փաստարկները և վկայակոչած նախադեպային դատական ակտերը՝ դատական նախադատելիության և իրավական որոշակիության վերաբերյալ:

Մասնավորապես ՀՀ վճռաբեկ դատարանն իր կողմից կայացված նախադեպային որոշմամբ սահմանել է, որ նախադատելիության ինստիտուտը կարևոր նշանակություն ունի դատական խնայողության սկզբունքի ապահովման և դատական ակտերի միջև անհաղթահարելի հակասությունների կանխարգելման առումով: Մասնավորապես՝ այն մի կողմից կոչված է պարզեցնելու խախտված իրավունքները վերականգնելու դատավարական կարգը՝ ազատելով կողմերին նույն փաստը կրկին ապացուցելու պարտականությունից, մյուս կողմից, կոչված է բացառելու միևնույն փաստերի տարբեր, հակասական գնահատումը, որը կարող է հանգեցնել իրավական որոշակիության սկզբունքի խախտման (*տե՛ս Մանյա Մանուկյանն ընդդեմ Աշտարակի քաղաքապետարանի թիվ ԱՐԱԴ/0209/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

Տվյալ դեպքում օրինական ուժի մեջ մտած վճռով երաշխավորության դադարման հիմքը եղել է բացառապես պարտավորության դադարելը նորացմամբ:

Փաստաթղթի իսկության վերաբերյալ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ այդ հարցի հետ կապված իրավական գնահատականները և դրա հետևանքները կախված են քաղաքացիաիրավական հետևանքներ առաջացնող փաստաթղթի բնույթից: Այն դեպքում, երբ հարցը վերաբերում է գործարքին, առաջ է գալիս վերջինիս վավերության/անվավերության հարցը, որպիսի հարցադրում կարող է չառաջանալ այլ փաստաթղթերի իսկության վիճարկման դեպքում:

Սույն գործով պահանջի դեմ առարկության հիմքում դրված է եղել գործարքի կնքման համար տրված լիազորագիրը հետին թվով ստորագրված լինելու հանգամանքը, որի իսկությունն է վիճարկել առարկություն ներկայացնողը: Այս դեպքում պետք է նկատել, որ պատշաճ լիազորության չունենալու պայմաններում գործարքը կարող է վիճարկվել դատական կարգով, իսկ լիազորագրի իսկությունն ընդամենը կարող է դրվել գործարքի անվավերության պահանջի հիմքում, քանի որ լիազորագրի իսկությունն այս իրավահարաբերության համար ինքնին չունի այլ իրավական հետևանք: Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է որ Վերաքննիչ դատարանի կողմից Դատարանին վերագրվել է դատավարական խախտում, որն իրականում ձևական է, քանի որ գործարքը վիճարկված չլինելու պայմաններում Վերաքննիչ դատարանի դիտարկումներն ու եզրահանգումները սնանկության դատարանի կողմից թույլ տված դատավարական իրավունքի խախտումների մասին չէին կարող դատական ակտի բեկանման հիմք հանդիսանալ՝ գործի ելքի վրա ազդեցություն չունենալու պատճառով, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ (...) դատարանի ըստ էության ճիշտ դատական ակտը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր ապացույց թույլատրելու մասին միջնորդությունն արվում է ապացույցի ներկայացմամբ և այն փաստի վկայակոչմամբ, որը գործին մասնակցող անձը ցանկանում է ապացուցել:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ դատական փորձաքննության դատավարական ձևի առանձնահատկությունը պայմանավորված է նրանով, որ այն իրականացվում է քաղաքացիադատավարական օրենքով սահմանված կարգով՝ փորձագետի կողմից, ով դատարանի կողմից նախկին օրենսգրքի 60-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն նախազգուշացվում է ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար քրեական պատասխանատվության մասին: Դատարանը փորձագետից ստորագրություն է վերցնում նախազգուշացման մասին, որը կցվում է դատական նիստի արձանագրությանը: Առանց այդ դատավարական ընթացակարգի պահպանման՝ հատուկ մասնագիտական գիտելիքների տիրապետող անձի կողմից տրված մասնագիտական եզրակացությունը չի կարող ընդունվել և գնահատվել որպես փորձագետի եզրակացություն: Ուստի, այդպիսի փորձաքննության արդյունքը դատարանը չի կարող ընդունել որպես փորձագիտական եզրակացություն (*տե՛ս հայցի Աշոտ Բարսեղյանի ընդդեմ Լիլիթ Մնացականյանի, Տիգրան Դողոսյանի թիվ ԵՄԴ/0341/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 10.04.2020 թվականի որոշումը*)»:

Վերաքննիչ դատարանը, կիրառելով ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումը՝ փորձագիտական եզրակացությունը որոշ դեպքերում որպես գրավոր ապացույց դիտելու և գնահատելու հնարավորության հարցում, անտեսել է այն հանգամանքը, որ սույն գործի փաստերից ելնելով, միայն այդ ապացույցը չէր կարող բավարար լինել ներկայացված պահանջը հաստատելու համար, հատկապես այն պայմաններում, երբ օպցիոնի

պայմանագրից երևում է հանդիպակաց պարտավորության առկայությունը և այդ հարցերի վերաբերյալ առկա են դատական վեճեր՝ ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ Լոնդոնի միջազգային արբիտրաժում: Այսինքն՝ այն պայմաններում, երբ պահանջի վերաբերյալ առկա է նյութափրավական վեճ և այն վերաբերում է ոչ թե պահանջի հիմքում դրված պարտավորությանը, այլ դրա կետանցով պայմանավորված գույքի կորստին /վնաս/, պահանջը կարող է գրանցվել համապատասխան վնասի հատուցման վերաբերյալ դատական ակտի ուժի մեջ մտնելուց հետո, կամ վնասի առկայությունը որպես հանրաճանաչ հանգամանք դիտելու և դրա չափի վերաբերյալ պատշաճ, թույլատրելի և վերաբերելի ապացույցի առկայության պայմաններում:

Տվյալ դեպքում դրամական պահանջի հիմքում դրված է օպցիոնի պայմանագրով նախատեսված պայմանի չկատարումը, որի կետանցը դեռևս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ և 1058-րդ հոդվածների իմաստով վնաս դիտելու համար անհրաժեշտ է գույքի կորստի և/կամ բաց թողած օգուտի փաստի առկայությունը, որպիսի հանգամանքը չի հաստատվել ներկայացված պահանջի հիմքում դրված ապացույցներով:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանն իրավացիորեն է մերժել «ՆԱԻՐԻ ԻՆՖՐԱՍԹՐԱԶՉՐ ԶԵՓԻԹԵԼ ԼԻՄԻԹԵԴ» ՍՊԸ-ի և «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված պահանջների հաստատումը, իսկ «ՎՏԲ Բանկ» ՀԲԸ-ի կողմից ներկայացված պահանջի քննությունը իրավացիորեն կասեցրել է՝ մինչև թիվ ԵԴ/31505/02/19 քաղաքացիական գործով եզրափակիչ դատական ակտ կայացնելը:

Վերը նշված պատճառաբանությունների լույսի ներքո ամբողջությամբ հերքվում են վճռաբեկ բողոքների պատասխանների փաստարկները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքների հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ միջանկյալ դատական ակտերի դեմ ներկայացված բողոքներով պետական տուրք չի գանձվում:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Դատարանի «Պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին» 20.11.2020 թվականի որոշումը միջանկյալ դատական ակտ է՝ նկատի ունենալով, որ վերջինս թվարկված չէ եզրափակիչ դատական ակտերի ցանկում: Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածը՝ միջանկյալ դատական ակտ պետք է համարել նաև Վերաքննիչ դատարանի 04.03.2021 թվականի որոշումը: Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ վարույթի հետ կապված պետական տուրք ենթակա չէ վճարման, հետևաբար պետական տուրքի մասով դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.03.2021 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ սնանկության դատարանի 20.11.2020 թվականի «Պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին» որոշմանը:
2. Վճռաբեկ վարույթի հետ կապված դատական ծախսերի հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**Նախագահող
Չեկուցող**

**Մ. Դրմեյան
Ս. Անտոնյոն
Ա. Բարսեղյան
Գ. ՀԱԿՈՔՅԱՆ**

Հատուկ կարծիք

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի կողմից թիվ ՄՆԴ/0555/02/20 քաղաքացիական գործով 23.01.2023 թվականին կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ

23.01.2023 թվական

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 2023 թվականի հունվարի 23-ին գրավոր ընթացակարգով քննելով «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ի և «Քեյ Ես Էմ Էյ» ՓԲԸ-ի վճռաբեկ բողոքները ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.03.2021 թվականի որոշման դեմ՝ ըստ դիմումի «Արցախտրանս» ՍՊԸ-ի՝ «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ին սնանկ ճանաչելու պահանջի մասին, Վճռաբեկ դատարանի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է «վճռաբեկ բողոքները բավարարել, բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.03.2021 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ սնանկության դատարանի 20.11.2020 թվականի «Պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին» որոշմանը»:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավոր Գ. Հակոբյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում էմ հատուկ կարծիքս այդ մասերի վերաբերյալ:

1. Վճռաբեկ դատարանը որպես գործի դատավարական նախապատմություն նշել է հետևյալը.

«Դիմելով դատարան՝ «Արցախտրանս» ՍՊԸ-ն պահանջել է «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ին ճանաչել սնանկ:

ՀՀ սնանկության դատարանի (դատավոր՝ Գ. Ավագյան) (այսուհետ՝ Դատարան) 30.04.2020 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

Դատարանի 20.11.2020 թվականի որոշմամբ հաստատվել է պահանջների վերջնական ցուցակը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 04.03.2021 թվականի որոշմամբ «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի, «ՎՏԲ Բանկ» ՀԲԸ-ի, «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի, «Նաիրի Ինֆրասթրաքչր Քեփիթել Լիմիթեդ» ՓԲԸ-ի և «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի վերաքննիչ բողոքները բավարարվել են Դատարանի «Պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին» 20.11.2020 թվականի որոշումը՝ «ՎՏԲ Բանկ» ՀԲԸ-ի՝ 331.798.991,17 ԱՄՆ դոլարի չափով պահանջի քննությունը կասեցնելու, «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի՝ 73.787.914,27 ԱՄՆ դոլարի չափով պահանջի գրանցումը մերժելու, «Նաիրի Ինֆրասթրաքչր Քեփիթել Լիմիթեդ» ՓԲԸ-ի՝ 38.500.000 ԱՄՆ դոլարի չափով պահանջի գրանցումը մերժելու և «Քեյ Ես Էմ Էյ» ՓԲԸ-ի՝ 451.644,41 Ֆունտ ստերլինգի չափով պահանջը գրանցելու մասերով վերացվել և այդ մասերով հարցն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոքներ են ներկայացրել «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ն և «Քեյ Ես Էմ Էյ» ՓԲԸ-ն (ներկայացուցիչներ Գևորգ Պողոսյան, Նարինե Բաբայան):

Վճռաբեկ բողոքի պատասխաններ են ներկայացրել «ՎՏԲ Բանկ» ՀԲԸ-ն, «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն, «Նաիրի Ինֆրասթրաքչր Քեփիթել Լիմիթեդ» ՓԲԸ-ն (ներկայացուցիչ Վահագն Դալլաքյան):

2. Վճռաբեկ դատարանը որպես «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ի վճռաբեկ բողոքի հիմքեր, հիմնավորումներ և պահանջ նշել է հետևյալը.

««Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ի վճռաբեկ բողոքը «Նաիրի Ինֆրասթրաքչր Քեփիթել Լիմիթեդ» ՍՊԸ-ի բավարարված վերաքննիչ բողոքի մասի վերաբերյալ.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասը, 380-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, կիրառել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասը, որը չպետք է կիրառել, չի կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասը, որը պետք է կիրառել:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն իր կողմից կայացված որոշմամբ, ըստ էության հաստատված է

համարել այն հանգամանքը, որ Դատարանն իրավաչափ եզրահանգման է եկել, որ «Նաիրի Ինֆրասթրաքչր Զեփիթել Լիմիթեդ» ՍՊԸ-ի կողմից դատարան ներկայացված փաստաթուղթը ենթակա չէ ընդունման և հետազոտման՝ որպես փորձագետի եզրակացություն, քանի որ այն չի համապատասխանում ապացույցի նման տեսակին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով առաջադրվող պայմաններին ու պահանջներին:

Վերաքննիչ դատարանը «Նաիրի Ինֆրասթրաքչր Զեփիթել Լիմիթեդ» ՍՊԸ-ի կողմից վերաքննիչ բողոքում վկայակոչված թիվ ԵՄԴ/0341/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 10.04.2020 թվականի որոշումը պարզապես մեջ է բերել նույն ծավալով և բովանդակությամբ, ինչ ծավալով և բովանդակությամբ այն նշված է համապատասխան վերաքննիչ բողոքում, հաշվի չառնելով այն հանգամանքը, որ դրանից արված մեջբերումը կտրված է համապատասխան որոշման կոնտեքստից, և դրա կիրառումը սույն սնանկության գործով քննության առարկա իրավահարաբերությունների կարգավորման նպատակով ակնհայտորեն հանգեցրել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորումների սխալ կիրառման, ինչպես նաև նույն օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորումների չկիրառման, որոնք ազդել են գործի ելքի վրա:

ՀՀ վճռաբեկ դատարանի որոշման կիրառումը տեղի է ունեցել համատեքստից կտրված ու սահմանափակ եղանակով՝ հանգեցնելով գործի ելքի վրա էական ազդեցություն ունեցող, ըստ էության սխալ եզրահանգումների: Միաժամանակ համապատասխան փաստաթուղթը չէր կարող դիտարկվել որպես հասարակ գրավոր ապացույց երկու հիմնական պատճառաբանության հաշվառմամբ.

Նախ, Վերաքննիչ բողոք ներկայացրած անձը նման միջնորդություն չի ներկայացրել և չի նշել այն հանգամանքները, որոնք պետք է ապացուցվեին համապատասխան գրավոր ապացույցի հիման վրա, բացի այս, որոշակի հատուկ գիտելիքների օգտագործում պահանջող հարցերի բացահայտման և պարզաբանման նպատակով կիրառելի ապացույց է հանդիսանում փորձագետի եզրակացությունը, իսկ փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Վերոգրյալ հանգամանքներին, ինչպես նաև գրավոր ապացույցի՝ որպես ապացույցի տեսակի ընդունելիության չափանիշների և դրանց առանձնահատկությունների վերաբերյալ իր նախադեպային դիրքորոշումն է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանը, սահմանելով որ.

«(...) դատարանը յուրաքանչյուր ապացույց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է այդ ապացույցը վերաբերելի և թույլատրելի տվյալ փաստական հանգամանքը հաստատելու կամ մերժելու համար (տե՛ս, Սվետլանա Ժուլիկյանն ընդդեմ Անահիտ Խաչատրյանի թիվ ԵՄԴ/0232/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը):

«... Յուրաքանչյուր դեպքում որևէ ապացույցի թույլատրելիության հարցը լուծելիս դատարանները պետք է ղեկավարվեն հետևյալ կանոններով.

1) գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը կարող է հաստատվել բացառապես օրենքով նախատեսված ապացույցներով.

Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի իրավակարգավորումից, որով սպառիչ սահմանված է ապացուցման միջոցների շրջանակը:

2) օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցներն իրավաբանական ուժ չունեն և չեն կարող դրվել դատարանի վճռի հիմքում. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված թույլատրելիության նշված կանոնը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ենթադրում է ապացույցի դատավարական ձևի համապատասխանությունն օրենքի պահանջներին՝ աղբյուրի, ստացման եղանակի, պայմանների, ինչպես նաև ապացույցի ձևակերպման տեսանկյունից (տե՛ս, թիվ ԵԿԴ/2593/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը)»:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ.

«... ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի հիմքով գրավոր ապացույց համարվելու համար անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան ապացույցը պարունակի գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին տեղեկություններ, այսինքն՝ իր բովանդակությամբ հնարավորություն տա դատարանին պարզելու գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այլ կերպ ասած՝ գրավոր ապացույցները դատարանի համար էական նշանակություն ունեն իրենց բովանդակության տեսակետից, գրավոր ապացույցներում ապացուցողական նշանակություն ունի որոշակի նյութական կրիչներում արտացոլված միտքը, որն ընկալվում է ընթերցման միջոցով (տե՛ս Հրանտ Ավետիսյանն ընդդեմ «ՏՐԱՆՍՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/4542/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը)»:

Սույն դեպքում, «Նաիրի Ինֆրասթրաքչր Զեփիթել Լիմիթեդ» ՍՊ ընկերության կողմից դատարան ներկայացված 20.09.2019 թվականի Թիմոթի Զ Ալլենի և Անաստասիա Մայլոզինայի փորձագիտական եզրակացությունը և 23.09.2020 թվականին տրված

փորձագետ Անաստասիա Մայրուզինայի եզրակացությունը չեն կարող համարվել թույլատրելի ապացույցներ, քանի որ սույն գործով չի պահպանվել եզրակացություններ տրված փորձագետների կողմից դատական նիստի ընթացքում դատարանի առջև ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար քրեական պատասխանատվության մասին նախազգուշացված լինելու և դրանք հաստատելու դատավարական կարգը, ուստի դրանք սույն սնանկության գործով որևէ փաստ ապացուցելու հիմքում չեն կարող դրվել: Ընդ որում, դատական նիստի ընթացքում, դատավարության մասնակիցների ներկայությամբ քննարկվել է վերորոյալ եզրակացությունը տված փորձագետների ներկայությունը դատական նիստում ապահովելու հարցը, մինչդեռ եզրակացություն ներկայացրած Վահագն Դալլաքյանը որևէ գործողություն չի իրականացրել փորձագիտական եզրակացություն տված փորձագետի ներկայությունը դատական նիստում ապահովելու ուղղությամբ:

Բացի այդ, «ՎՏԲ Բանկ» ՀԲ ընկերությունը 2018 թվականի եռամսյակային տարեկան իր պաշտոնական կոնսոլիդացված հաշվետվությամբ հրապարակել է «Թեղուտ Ինվեստմենտս Լիմիթեդ» ընկերության 100 տոկոս բաժնետոմսերի նկատմամբ իր միանձնյա սեփականության իրավունքը՝ սահմանելով դրանց արժեքը 22 միլիարդ ռուբլի: Այսինքն՝ վերը նշված կոնսոլիդացված հաշվետվությամբ արտացոլված տվյալներն ինքնին հակասության մեջ են գտնվում 20.09.2019 թվականին Թիմոթի Ջ Ալլենի և Անաստասիա Մայրուզինայի փորձագիտական եզրակացությամբ և 23.09.2020 թվականին տրված փորձագետ Անաստասիա Մայրուզինայի եզրակացությամբ արտացոլված տվյալների հետ, մասնավորապես՝ «Թեղուտ Ինվեստմենտս Լիմիթեդ» ընկերության բաժնետոմսերի արժեքը պաշտոնական կոնսոլիդացված հաշվետվությամբ այլ է, իսկ եզրակացություններով՝ այլ, որպիսի փաստի ուժով 20.09.2019 թվականին Թիմոթի Ջ. Ալլենի և Անաստասիա Մայրուզինայի փորձագիտական եզրակացությամբ և 23.09.2020 թվականին տրված փորձագետ Անաստասիա Մայրուզինայի եզրակացությամբ արտացոլված բաժնետոմսերի արժեքը չի կարող դիտվել որպես արժանահավատ տեղեկատվություն:

Սնանկության գործին կից ներկայացված Օպցիոն համաձայնագրով և դրա փոփոխություններով վերաքննիչ բողոք ներկայացրած անձի պահանջի հիմքում դրված օպցիոնի պայմանների կիրառման պարտապանի պարտավորությունը ամենևին միակողմ չէ, քանի որ ներկայացված պահանջը բխում է ոչ թե Պարտապանի միակողմ պարտավորությունից, այլ Պարտապանին փոխանցման ենթակա՝ TEGHOUT INVESTMENTS LIMITED ընկերության կանոնադրական կապիտալի բաժնետոմսերի 49.95%-ի հետ կապված իրավահարաբերություններից: Ի մասնավորի՝ ենթադրյալ պարտատերը իր պահանջի դիմաց պետք է կատարեր հետևյալ երկու պարտադիր գործողությունները.

- 1 ԱՄՆ դոլար անվանական արժեքով Պարտապանին պետք է փոխանցեր TEGHOUT INVESTMENTS LIMITED ընկերության կանոնադրական կապիտալի բաժնետոմսերի 25% + 1 ձայնը,

- Պարտապանին՝ հիշյալ արժեքով պետք է փոխանցեր նույն ընկերության կանոնադրական կապիտալի բաժնետոմսերի 24.95%-ը, ինչը ևս մինչ օրս կատարված չէ և փաստացի չի նախատեսվում կատարել:

Վերոգրյալ հանգամանքների վերաբերյալ Վերաքննիչ դատարանն իր կողմից կայացված որոշմամբ պարզապես ենթադրել է, որ ըստ պարտատիրոջ վկայակոչման՝ վնասը ծագել է կողմերի միջև կնքված Օպցիոն պայմանագրի չկատարման հետևանքով, մասնավորապես՝ բաժնետոմսերը պայմանագրով սահմանված արժեքով գնելու պարտականությունը չկատարելու հետևանքով: Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավակարգավորումը: Սահմանելով, որ ենթադրյալ գրավոր ապացույցը սնանկության գործի նյութերում առկա այլ ապացույցների հետ համադրման և բազմակողմանի գնահատման արդյունքում պետք է առանձին որակման արժանանա՝ Վերաքննիչ դատարանը, գործի ելքի վրա դրա ազդեցության տեսանկյունից, փաստել է, որ համապատասխան ենթադրյալ ապացույցը դեռ պատշաճ ուսումնասիրված չէ և դեռ պետք է համարժեք գնահատականի արժանանա նոր քննության ընթացքում, այնուամենայնիվ, դրանից բխող ենթադրություններ է կատարել, սահմանելով դրանց հիման վրա վերաքննիչ բողոք ներկայացրած անձի անհիմն փաստարկների անվիճելիությունը և չի անդրադարձել համապատասխան վերաքննիչ բողոքի պատասխանում ներկայացված հակափաստարկներին՝ խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասով, 380-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված կարգավորումները, այսինքն՝ ինքն իսկ իր ենթադրություններով հակասել է իր կողմից կայացված որոշման բովանդակությանը:

Վերաքննիչ դատարանը պարտավոր էր, սակայն չի իրականացրել վերաքննիչ բողոքի պատասխանի նախաձեռն գնահատում, ինչի արդյունքում միակողմ ուսումնասիրության հետևանքով, կախ, որոշել է գրավոր ապացույց չհանդիսացող, ինչպես նաև գործի ելքի վրա ազդեցություն չունեցող փաստաթուղթը գնահատել որպես գրավոր ապացույց և դրա հետագոտման համար գործն ուղարկել Դատարան նոր քննության: Այնուհետ, հակասելով ինքն իր ենթադրություններին և որևէ կերպ գնահատական չտալով վերաքննիչ բողոքի պատասխանում նշված հիմքերին ու հիմնավորումներին, միակողմ և կողմնակալ ենթադրություններ է կատարել հոգուտ վերաքննիչ բողոք ներկայացրած անձի՝ խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորումները:

Վերաքննիչ դատարանը դուրս է եկել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով

սահմանված վերաքննության սահմաններից, որոնք կարգավորվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասով, չնայած, որ իր որոշմամբ վերաքննիչ դատարանը քանիցս նշել է, որ.

«վերաքննիչ դատարանն անհրաժեշտ է համարում հիշատակել, որ վերաքննիչ բողոքը քննվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում»:
Հատկանշական է, որ թեպետ վերաքննիչ դատարանը նշել է որոշակի հանգամանքների նոր քննության անհրաժեշտությունը, փաստելով այն, որ դրանք չեն հետազոտվել Դատարանում իրականացված քննության ընթացքում, հակասելով ինքն իրեն, ինչպես նաև խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգավորումները, կատարել է եզրահանգումներ ոչ թե վերաքննիչ բողոքի, այլ Դատարանի կողմից կայացված ակտի վերաբերյալ առհասարակ՝ կատարելով անհասկանալի և չպատճառաբանված ենթադրություններ:

Այս մասով ևս, ՀՀ վճռաբեկ դատարանը կատարել է անհրաժեշտ վերլուծություններ, որոնցով փաստել է այն հանգամանքը, որ

«(...) ոչ լրիվ վերաքննության պարագայում վերաքննիչ դատարանը վերանայում է առաջին ատյանի դատական ակտը, այլ ոչ թե՝ գործն ընդհանրապես (տե՛ս, օրինակ, թիվ ԵԿԴ/2680/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը)»:

վերաքննիչ դատարանը, սակայն, հարկ չի համարել հետևել ՀՀ վճռաբեկ դատարանի նման եզրահանգումներին, և դուրս գալով վերաքննության սահմաններից՝ կատարել է վերաքննիչ բողոքի հիմքերում ու հիմնավորումներում տեղ չգտած փաստերի վրա ենթադրություններ՝ նշելով նաև, որ դրանք վերաքննիչ բողոք ներկայացրած անձի պնդումներն են:

«Բեյզ Մեթրլս» ՓԲԸ-ի վճռաբեկ բողոքը «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության և «ՎՏԲ Բանկ» հանրային բաժնետիրական ընկերության բավարարված վերաքննիչ բողոքի մասի վերաբերյալ.

վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 9-րդ, 66-րդ, 157-րդ հոդվածները, «Սևանկության մասին» ՀՀ օրենքի 20.1-րդ հոդվածը, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 430-րդ հոդվածը:

վերաքննիչ դատարանը, խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածով սահմանված պահանջները, կայացրել է միակողմ և չպատճառաբանված դատական ակտ, որում պարզապես առանց բավարար հիմնավորումների ու փաստարկների հաստատված է համարել վերաքննիչ բողոք ներկայացրած անձի՝ որևէ ապացույցի վրա չհիմնված ենթադրությունները:

Ընդ որում, ինչպես երևում է սույն վճռաբեկ բողոքի կետերում նշված պնդումներից, վերաքննիչ դատարանը չի ուսումնասիրել իր կողմից քննվող հանգամանքի՝ պարտավորությունը նորացմամբ դադարած լինելու վերաբերյալ առկա մի շարք դատական գործերի առկայությունն ու համապատասխան փաստի քննարկումը և դրա վերաբերյալ եզրակացությունների առկայությունը համապատասխան դատական գործերով, այլ, խախտելով «իրավական որոշակիության» հիմնարար սկզբունքի պայմանները՝ առանձին եզրահանգում է կատարել համապատասխան հանգամանքի առկայության կամ բացակայության վերաբերյալ:

վերոգրյալ դատավարական խախտումների արդյունքում վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 430-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումները. իրավական որոշակիության սկզբունքի պահանջների խախտմամբ վերացական եզրահանգումներ է կատարել հիմնական պարտավորությունների դադարած լինելու վերաբերյալ՝ անտեսելով նույն հանգամանքի առկայության/բացակայության վերաբերյալ այլ դատական ակտերի սահմանումները, ինչպես նաև այն հանգամանքը, որ թեպետ սևանկության վարույթում հաստատված հանգամանքները նախադատելի համարվել չեն կարող՝ հաշվի առնելով սևանկության գործընթացի առանձնահատկությունները և այն, որ պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշումն ինքնին չի հանդիսանում վերջնական դատական ակտ, դրանով հաստատված հանգամանքները նախադատելի չեն կարող հանդիսանալ այլ վարույթների ընթացքում, մինչդեռ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացված վերջնական դատական ակտերով հաստատված փաստական հանգամանքները սևանկության գործընթացում հանդիսանում են նախադատելի փաստեր:

Հատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ սույն իրավահարաբերություններում պարտավորության նորացման հանգամանքի առկայության վերաբերյալ եզրահանգումները նույնն են վերաքննիչ բողոք բերած անձի կողմից սևանկության գործի վարույթում ներկայացված պահանջների հիմքում ընկած իրավահարաբերությունների առկայության/բացակայության փաստի քննության արդյունքում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԴ/27276/02/19 քաղաքացիական գործով կայացված դատական ակտում պարունակվող վերլուծության և եզրահանգումների լույսի ներքո, ինչպես նաև համապատասխան գործով 05.05.2020 թվականին կայացված վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի հիման վրա

իրականացված քննությանը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից 03.08.2020 թվականին կայացված որոշմամբ կատարված վերլուծությունների և եզրահանգումների լույսի ներքո և այս մասով վերաքննիչ բողոքի պատասխանին Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատական չի տվել՝ խախտելով վճռաբեկ դատարանի նախադեպային որոշմամբ սահմանված պահանջները:

Այսինքն՝ երեք դատական կազմի կողմից միևնույն եզրակացությունն է արվել քննարկվող իրավահարաբերությունների վերաբերյալ՝ սահմանելով քննարկվող իրավահարաբերություններում նորացման ամկայությունը, իսկ Վերաքննիչ դատարանն անհիմն կերպով, հիմնվելով բացառապես վերաքննիչ բողոք բերած անձի անապացույց փաստարկների վրա, առանց որևէ պատճառաբանության, խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածով սահմանված պահանջները, պարզապես ամրագրել է, որ նորացում քննարկվող իրավահարաբերություններում ամկա չէ:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախադեպային բազմաթիվ որոշումներում անդրադարձել է դատական ակտերի հիմնավորվածության և պատճառաբանվածության հարցին՝ այդ կապակցությամբ նշելով, որ.

«... յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի թե՛ փաստական և թե՛ իրավական հիմնավորումը: Վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության ամկայության կամ բացակայության մասին: Վճռում ոչ միայն պետք է ցույց տրվի նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլև պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը: Վճռի իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա վճռի իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական վճռի օրինականությունը (տե՛ս, *Ռազմիկ Մարությանի ընդդեմ Ստեփան և Անահիտ Մարությանների, ՀՀ Կենտրոն նոտարական գրասենյակի թիվ 3-54(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի որոշում*)»:

Երաշխավորության դադարման հիմքերի առնչությամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ դիրքորոշումը՝

«(...) բացի պարտավորությունների դադարման ընդհանուր հիմքերից, երաշխավորությունը դադարում է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 382-րդ հոդվածով նախատեսված հիմքերի ամկայության դեպքում: Նման հիմքերից մեկն էլ հիմնական պարտավորության դադարումն է, որպիսի հիմքի ամկայությունը պայմանավորված է երաշխավորության լրացուցիչ բնույթով, այն է՝ առանց հիմնական պարտավորության երաշխավորությունը գոյություն ունենալ չի կարող (տե՛ս, *թիվ ԱՐԱԴ/0591/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշում*)»:

Վերոգրյալի հաշվառմամբ, բողոքաբերը գտնում է, որ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության, «ՎԱԼԼԵԹՍ ԷՖ.Էմ. Էստ.» ՍՊ ընկերության և «Թեդուտ» ՓԲ ընկերության միջև 16.01.2012 թվականին կնքված թիվ 201 Օ երաշխավորության պայմանագրով սահմանված երաշխավորությունը դադարել է, քանի որ նորացումը դադարեցնում է սկզբնական պարտավորության հետ կապված լրացուցիչ պարտավորությունները, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, իսկ կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված լինելու փաստը սույն գործում ամկա որևէ ապացույցով չի հիմնավորվում, ուստի Վերաքննիչ դատարանը որևէ կերպ չէր կարող, այդ թվում՝ խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումները, հանգել այն եզրակացության, որ սույն իրավահարաբերություններում նորացում տեղի չի ունեցել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սկզբնական պարտավորության դադարած լինելու/չլինելու վերաբերյալ հարցը քննարկվել և քննարկվում է այս պահին ՀՀ իրավասու դատարանների վարույթում գտնվող առնվազն ներքոգրյալ քաղաքացիական գործերի շրջանակներում.

թիվ ԵԴ/31505/02/19 քաղաքացիական գործով, որով գործի լուծման համար Էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա հանգամանքների ցանկում է սկզբնական պարտավորության դադարած լինելու/չլինելու հանգամանքը,

թիվ ԵԴ/27276/02/19 քաղաքացիական գործով, որով Երևանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը եզրակացրել են, որ ամկա է իրավահարաբերության նորացում:

Արդյունքում, Վերաքննիչ դատարանի՝ պատճառաբանություն չունեցող և ըստ էության անհիմն ենթադրությունը՝ սկզբնական պարտավորություններում նորացման փաստի բացակայության վերաբերյալ, բացի այն, որ հանդիսանալով նյութաիրավական վեճի առարկա, դուրս է սնանկության վարույթի, ուստի և՛ սնանկության վարույթով քննություն իրականացնող դատարանի հետազոտման սահմաններից, նաև խախտում է «իրավական որոշակիության» վերաբերյալ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ) սկզբունքը, որը կիրառելի է նաև դատական ակտերի միատեսակության ապահովման տեսանկյունից:

Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանը բազմիցս իր որոշումներում անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին (ՍԴՈ-630, ՍԴՈ-753, ՍԴՈ-1176, ՍԴՈ-1213, ՍԴՈ-1270,

ՄԴՈ-1322 և այլն): Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանը կարևորել է իր ՄԴՈ-1270 որոշման մեջ արտահայտած դիրքորոշումներն առ այն, որ «... իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է նաև դատարանների որոշումների հստակություն և կանխատեսելիություն, ինչը թույլ է տալիս իրավահարաբերությունների մասնակիցներին համապատասխան պատկերացում կազմել իրենց վարքագծի հնարավոր հետևանքների մասին»:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այսուհետ (այսուհետ՝ ՄԻԵԴ) իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «... արդար դատաքննության իրավունքը պահպանված է այն դեպքում, երբ անձը հնարավորություն ունի ստանալու որոշակի, հաստատուն որոշում՝ կապված իր իրավունքների և պարտականությունների հետ, ու կարող է համոզված լինել, որ որոշ ժամանակ անց այդ որոշումը չի վերացվի (*տե՛ս, օրինակ թիվ ԵՄԴԴ/0913/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից 2015 թվականի դեկտեմբերի 28-ին կայացված որոշումը*)»:

Դատական ակտերի միասնականության ապահովման կարևորությանը իրավական որոշակիության հիմնարար սկզբունքի համատեքստում անդրադարձել է նաև ՄԻԵԴ-ն իր նախադեպային որոշումներում: Այսպես ՄԻԵԴ-ը նշել է, որ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը պետք է մեկնաբանվի ՄԻԵԿ-ի նախաբանի լույսի ներքո, որի համաձայն՝ պայմանավորվող կողմերի ընդհանուր ժառանգության մասն է իրավունքի գերակայությունը, որի հիմնարար հայեցակետերից է իրավական որոշակիության սկզբունքը, որն *inter alia* պահանջում է, որ դատարանի կողմից որևէ հարցի կապակցությամբ կայացված վերջնական դատական ակտը կասկած չհարուցի (*տե՛ս, օրինակ, Բրումարտեսկուն ընդդեմ Ռումինիայի գործով Եվրոպական դատարանի կողմից 28.10.1999 թվականին կայացված վճիռը, § 61*), միաժամանակ նշել է, որ իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է *res judicata* սկզբունքի, այն է՝ դատական ակտերի վերջնական լինելու սկզբունքի պահպանում: Այդ սկզբունքը պահանջում է, որ հարցի առնչությամբ երկու կարծիքի առկայության հնարավորությունը չպետք է հիմք հանդիսանա կրկնակի քննության համար: Նահանջն այդ սկզբունքից արդարացված է միայն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է եսկան և անհերքելի բնույթ ունեցող հանգամանքներում:

ՄԻԵԴ-ն ընդգծել է նաև իրավունքների դատական պաշտպանության մատչելիության իրավունքի և արդար դատաքննության իրավունքի մասը կազմող իրավական որոշակիության սկզբունքի միջև համաչափության ապահովման անհրաժեշտությունը, երբ առկա է վեճերի քննության արդյունքում կայացված ու օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի անհամապատասխանություն (inconsistent adjudication of claims), որը հետևանք է անձանց կողմից իրենց միջև առկա վեճի կապակցությամբ նույնաբնույթ կամ փոխկապակցված պահանջների ներկայացման (*տե՛ս, օրինակ, Նեժդետ Շահինը և Պերիհան Շահինը ընդդեմ Թուրքիայի գործով ՄԻԵԴ-ի կողմից 2011 թվականի հոկտեմբերի 20-ին կայացված վճիռը, §§ 81-83 և 86*):

Այս պարագայում ՄԻԵԴ-ը կարևորում է ազգային օրենսդրությամբ սահմանված այն արդյունավետ գործիքակազմը, որը հնարավորություն կստեղծի բացառելու կամ գոնե խուսափելու միևնույն հարցի կապակցությամբ երկու կամ ավելի օրինական ուժի մեջ մտած դատական ակտ ունենալու իրադրությունից: Ընդ որում, նման որոշումներ կարող են կայացվել ինչպես միևնույն (*տե՛ս, օրինակ, Թյուրդոր Թյուրդորն ընդդեմ Ռումինիայի գործով ՄԻԵԴ-ի կողմից 2009 թվականի մարտի 24-ին կայացված վճիռը*), այնպես էլ՝ տարբեր դատական ատյանների, այդ թվում՝ օտարերկրյա, կողմից (*տե՛ս, օրինակ, Ստեֆանիկան և մյուսները ընդդեմ Ռումինիայի գործով ՄԻԵԴ-ի կողմից 2010 թվականի նոյեմբերի 02-ին կայացված վճիռը*):

ՄԻԵԴ-ը կարևորվում է ՄԻԵԿ անդամ երկրների կողմից այնպիսի օրենսդրության մշակումը, որը թույլ չի տա միևնույն հացի վերաբերյալ ընդունել միմյանց հակասող դատական ակտեր (*տե՛ս, օրինակ, Մուլլաին և մյուսները ընդդեմ Ալբանիայի գործով ՄԻԵԴ-ի կողմից 2010 թվականի մարտի 23-ին կայացված վճիռը*): Արդյունքում ակնհայտ է, որ Վերաքննիչ դատարանը չունենալով բավարար հիմքեր և հիմնավորումներ, ինչպես նաև կիրառելի ապացույցներ, խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորումը, հաշվի չառնելով ՀՀ այլ իրավասու դատարանների քննության առարկա հանդիսացող համանման հանգամանքն ու դրա վերաբերյալ համապատասխան դատարանների կողմից արտահայտված դիրքորոշումը, պարզապես դեկլարատիվ բնույթի ենթադրություն է արել առ այն, որ սկզբնական պարտավորության մասով նորացում առկա չէ, մինչդեռ նման եզրահանգման Վերաքննիչ դատարանը չէր կարող գալ, այդ թվում՝ վտանգելով իրավական որոշակիության սկզբունքի կիրառելիությունը և հավանականությունն ստեղծելով առ այն, որ նույն հանգամանքը՝ սկզբնական պարտավորության առկայությունը/բացակայությունը, որ օբյեկտիվ իրականության մեջ կարող է միայն այս կամ այն կերպ լինել, կարող է և՛ այդ, և՛ այն կերպ սահմանվել:

Վերաքննիչ դատարանը թույլ է տվել «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 20.1-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումների, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 157-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտում, ինչն ազդել է գործի լուծման վրա: Այսպես՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում, դատավոր Նաիրա Հովսեփյանի վարույթում քննվող թիվ ԵԴ/31505/02/19

քաղաքացիական գործով պարտատերը կողմ չի հանդիսանում, ուստի վերջինիս կողմից համապատասխան գործով որոշման ենթակա հանգամանքների մեջբերումը՝ որպես վերաքննիչ բողոք ներկայացրած անձի կողմից ներկայացված պահանջի հաստատման կամ մերժման համար էական հանդիսացող հանգամանք, կիրառելի և իրավաչափ չի հանդիսանում, անգամ եթե համապատասխան հանգամանքները քննարկվող հարցի լուծման համար էական նշանակություն ունեն:

Չնայած այն հանգամանքին, որ վերոգրյալ քաղաքացիական գործի շրջանակներում, ի թիվս այլնի, ուսումնասիրվում է և կայացման ենթակա՝ գործն ըստ էության լուծող դատական ակտով հաստատվելու կամ մերժվելու է վերաքննիչ բողոք ներկայացրած անձի կողմից սնանկության գործով ներկայացված պահանջի հիմքում ընկած պայմանագրի գործող կամ կատարման ուժով դադարած լինելու հանգամանքը, այսինքն՝ ըստ էության, համապատասխան քաղաքացիական գործի ելքով է պայմանավորված այդ պահանջի իրավունքի առկայությունը կամ դրա բացակայությունը, Վերաքննիչ դատարանն, այնուամենայնիվ, անհասկանալի դեկլարատիվ պնդումների հիման վրա, էական չի համարել հիշյալ գործի ելքն ու դրա նշանակությունը ներկայացված պահանջի քննության հարցում:

Ըստ Վերաքննիչ դատարանի՝ վերաքննիչ բողոք ներկայացրած անձի քննարկվող իրավահարաբերություններում պահանջի քննությունը ենթակա չէր կասեցման, քանի որ. «Վերաքննիչ դատարանն ուսումնասիրելով երկու գործերով քննության ենթակա պահանջները, արձանագրում է, որ թիվ ԵԴ/31505/02/19 քաղաքացիական գործով հայցի առարկան բաժնետոմսերի հաջորդող գրավի պայմանագիրը դադարած համարելու և գրավի իրավունքի դադարումը գրանցելուն պարտավորեցնելու պահանջն է, որը որևէ անհնարինություն չի կարող առաջացնել սույն գործով պահանջի քննության համար»: Հատկանշական է հենց այն հանգամանքը, որ Վերաքննիչ դատարանը անհասկանալի պատճառաբանությամբ համարել է, որ միայն երկու գործով պահանջների նույնականության դեպքում այլ քաղաքացիական գործով իրականացվող վարույթի ելքը կարող է նշանակություն ունենալ և/կամ ազդել սնանկության գործի վարույթով պահանջի հաստատման կամ մերժման համար: Մինչդեռ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 157-րդ հոդվածով նման սահմանափակող պահանջ առաջադրված չէ: Համարժեքորեն նման պահանջ առկա չէ նաև «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20.1-րդ հոդվածով: Կարծում ենք կասկածից վեր է այն հանգամանքը, որ բացառապես պահանջով չի կարող սահմանափակվել մեկ գործի քննության արդյունքում հաստատման ենթակա հանգամանքների ազդեցությունը մեկ այլ գործով քննվող հանգամանքների առկայությունը/բացակայությունը սահմանելու համար:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը պնդել է, որ միայն այն հանգամանքը, որ թիվ ԵԴ/31505/02/19 քաղաքացիական գործով «պարտապանը չի վիճարկում պարտավորության բացակայությունն, այլ ընդամենը վիճարկում է տվյալ պարտավորության ապահովման միջոցներից մեկի դադարած լինելու հանգամանքը, ուստի գործի վարույթը պահանջի քննության մասով, ենթակա չէր կասեցման»: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը, անտեսելով վերաքննիչ բողոքի հիմքում ընկած հանգամանքների բազմակողմանի ուսումնասիրության պահանջը, անհասկանալի եզրահանգման է եկել առ այն, որ Պարտապանը կարող է վիճարկել պարտավորության ապահովման միջոցներից մեկի դադարած լինելու հանգամանքը՝ դրա հիմքում դնելով պարտավորության դադարած լինելու հանգամանքը, սակայն չվիճարկել պարտավորության բացակայությունը: Ընդ որում, հստակ է նաև այն հանգամանքը, որ ինչպես սույն գործով, այնպես էլ թիվ ԵԴ/27276/02/19 քաղաքացիական գործով, ի թիվս այլ հանգամանքների, քննարկվում է նաև համապատասխան պարտավորության բացակայության հանգամանքը, որը չի կարող դատական գործից դուրս փոփոխվել, քանի որ համապատասխան հանգամանքը կա՛մ առկա է, կա՛մ բացակա:

Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-723, ՍԴՈ-741, ՍԴՈ-881 որոշումներում փաստել է սեփականության իրավունք ձեռք բերելու նկատմամբ լեգիտիմ ակնկալիքների հիմքով սեփականության իրավունքի պաշտպանության հնարավորությունը: Ավելին, 18.03.2008 թվականի թիվ ՍԴՈ-741 որոշման 8-րդ կետում Սահմանադրական դատարանն արձանագրել է. «ՀՀ Սահմանադրության 31 հոդվածով երաշխավորված՝ սեփականության իրավունքի պաշտպանությունը տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է, կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք»: Հավասարաբեռ իրավաչափ ակնկալիք է հանդիսանում իր պահանջի իրավունքի իրացման արդյունքում պարտատիրոջ պահանջի բավարարումը:

Նման պայմաններում ակնհայտ է, որ պարտատերն իրական հնարավորություն պետք է ունենա պահանջելու դատարանից այլ ենթադրյալ պարտատերերի պահանջները գրանցել բացառապես այն դեպքում, եթե նման պահանջներն իրական են, հիմնավոր և անվիճելի: Համանման պահանջ է առաջադրված նաև «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 8-րդ մասով, որի համաձայն առարկությունների քննարկման արդյունքում դատարանը որոշում է պահանջի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը, ապահովվածությունը և որոշում է կայացնում պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին:

Արդյունքում հարց է առաջանում, ինչպե՞ս է հնարավոր որոշել վերաքննիչ բողոք ներկայացրած անձի կողմից առաջադրված պահանջի օրինականությունը, չափը, առաջնահերթությունն ու ապահովվածությունն այն դեպքում, երբ համապատասխան պահանջի առկայության կամ բացակայության համար հիմք հանդիսացող գործարքը վեճի

առարկա է հանդիսանում և թիվ ԵԴ/31505/02/19 քաղաքացիական գործի շրջանակներում պարտավորության առկայությունը հերքվելու դեպքում, ինչը պարզ կդառնա համապատասխան քաղաքացիական գործով կայացման ենթակա՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի ուսումնասիրությամբ, վերաքննիչ բողոք բերած անձի պահանջը հիմնված կլինի դադարած պարտավորության վրա, այսինքն՝ չի լինի օրինաչափ, իսկ պարտապանի գույքը կծանրաբեռնվի անհիմն պարտավորությամբ, որը էականորեն կնվազեցնի պարտատիրոջ կողմից իր պահանջների բավարարումը ստանալու հնարավորությունը:

Ներկայացվածի համատեքստում ակնհայտ է, որ Դատարանի կողմից պահանջի քննությունը կասեցնելուց բացի այլ որոշում կայացնելը էականորեն և անհիմն կերպով խաթարելու էր վերաքննիչ բողոք բերած անձի և սնանկության վարույթի մասնակիցների միջև արդար հավասարակշռությունը, քանի որ, եթե քննարկվող քաղաքացիական գործով կայացման ենթակա՝ վեճն ըստ էության լուծող դատական ակտով վերաքննիչ բողոք բերած անձի պահանջի հիմնավորվածությունը հաստատվելու դեպքում վերջինս էական և իրական իրավական հնարավորություն ունի վերադառնալու սնանկության վարույթ և ստանալու իր պահանջների բավարարում, ապա հակառակ դեպքում պարտատերը նման իրական երաշխիք չունի:

Միևնույն ժամանակ սնանկության վարույթի առանձնահատկությունների հաշվառմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն իր կողմից կայացված նախադեպային որոշմամբ սահմանել է.

«(...) որ նախադատելիության ինստիտուտը կարևոր նշանակություն ունի դատական խնայողության սկզբունքի ապահովման և դատական ակտերի միջև անհաղթահարելի հակասությունների կանխարգելման առումով: Մասնավորապես՝ այն մի կողմից կոչված է պարզեցնելու խախտված իրավունքները վերականգնելու դատավարական կարգը՝ ազատելով կողմերին նույն փաստը կրկին ապացուցելու պարտականությունից, մյուս կողմից, կոչված է բացառելու միևնույն փաստերի տարբեր, հակասական գնահատումը, որը կարող է հանգեցնել իրավական որոշակիության սկզբունքի խախտման *(տե՛ս Մանյա Մանուկյանն ընդդեմ Աշտարակի քաղաքապետարանի թիվ ԱԲԱԴ/0209/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը)*»:

ՄԻԵԴ-ը արձանագրել է, որ բոլոր պարագաներում պետք է ապահովվի յուրաքանչյուրի՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացումը նվազագույնը հայցը քննության ընդունելու միջոցով, սակայն միաժամանակ պետք է ապահովվի նույնանման պահանջով միայն մեկ դատական ակտի առկայությունը, որը պետք է կազմակերպվի անդամ պետության այդ թվում համապատասխան օրենսդրության մշակման միջոցով:

Նման իրավիճակում դատարանում կապահովվի անձի պահանջը քննարկելու սկզբնական հնարավորությունը, սակայն վերջնական դատական ակտ կկայացվի միայն այն պարագայում, երբ նույն պահանջի կապակցությամբ այլ դատարանում որևէ նույնական կամ փոխկապակցված ընթացիկ գործ առկա չի լինի կամ այդ գործի քննությունը ավարտված կլինի:

Դատարանի մատչելիության իրավունքը իրացվում է ոչ միայն կիրառելի օրենսդրության հասանելիությամբ, հստակությամբ և կանխատեսելիությամբ, այլ նաև՝ համապատասխան դատական պրակտիկայի միասնականության ապահովմամբ: Ընդ որում, նման դատական պրակտիկան և դրա զարգացումը ևս պետք է լինեն կանխատեսելի *(տե՛ս, օրինակ, Պետկո Պետկովն ընդդեմ Բուլղարիայի գործով ՄԻԵԴ-ի կողմից 2009 թվականի հունիսի 11-ին կայացված վճիռը)*:

Վերոգրյալից հնարավոր է եզրակացնել, որ թեև վերաքննիչ բողոք ներկայացնող անձն իրավունք ուներ սնանկության գործի վարույթում ներկայացնելու իր պահանջը, սակայն քանի դեռ համապատասխան պահանջի հիմքում ընկած հանգամանքները վիճելի են, իսկ այդ հանգամանքների վիճելիությունն ի վնաս համապատասխան անձի հանգուցալուծվելու դեպքում պահանջն օրինական չի լինի և ենթակա չի լինի ընդգրկման պահանջների վերջնական ցուցակում, այդ թվում՝ ապահովելով դատական պրակտիկայի միասնականությունն ու մեկ հարցի վերաբերյալ միայն մեկ դատարանի վերջնական եզրահանգման առկայությունը, որպիսի դատարան Դատարանը հանդիսանալ չի կարող, քանի որ խոսքը գնում է կյուրախրավական վեճի մասին, որը քննվում է այլ դատարանի վարույթում գտնվող քաղաքացիական գործի շրջանակներում:

Քննարկվող իրավահարաբերությունների ծագման պահին գործող իրավակարգավորումների տեսանկյունից, մասնավորապես, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի մինչ 03.03.2020 թվականը գործող խմբագրությամբ 46-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանվում էր Դատարանի կողմից ներկայացված պահանջների օրինականության, չափի, առաջնահերթության և ապահովվածության հարցի լուծման անհրաժեշտությունը, որպիսի իրավակարգավորման բնույթին ու բովանդակությանն անդրադարձ է կատարել նաև ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախադեպային որոշումներում:

Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը իրավական դիրքորոշում է արտահայտել նշելով.

««Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ առարկությունների քննարկման արդյունքում դատարանը որոշում է պահանջի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը, ապահովվածությունը և որոշում է կայացնում պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին: Պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշումը կարող է բողոքարկվել:

Վկայակոչված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ սնանկության վարույթում

օրենսդիրը, նպատակ ունենալով ապահովելու ինչպես պարտատերերի շահերի պաշտպանությունը, այնպես էլ՝ ելնելով սնանկ ճանաչված պարտապանի շահերից, այն է՝ հնարավորություն տալ բարեխիղճ և պարտաճանաչ պարտապանին վերականգնելու իր բնականոն գործունեությունը, հաղթահարելու ֆինանսական դժվարությունները, վերականգնելու նրա կենսունակությունը, սահմանել է պարտատերերի կողմից պահանջների ներկայացման և դրանց հիմնավորվածության ստուգման որոշակի կառուցակարգ: Մասնավորապես՝ օրենսդրորեն ամրագրվել է, որ սնանկության մասին հայտարարությունից հետո մեկամսյա ժամկետում պարտատերերն իրենց պահանջները դատարան ներկայացնելիս պարտավոր են նշել այն պարտավորության մասին, որից բխում է պահանջը, դրա կատարման ժամկետը, ինչպես նաև պահանջը հիմնավորող հանգամանքները: Միաժամանակ օրենսդիրը պարտավորեցրել է դատարանին անկախ պահանջի (պահանջների) նկատմամբ առարկության ներկայացումից քննության առնել դատարան ներկայացրած յուրաքանչյուր պահանջի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը, ապահովվածությունը, որից հետո միայն որոշում կայացնել պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին:

Նման օրենսդրական կարգավորումն ինքնանպատակ չէ և նպատակ ունի բացառելու սնանկության վարույթում չհիմնավորված պահանջների ընդգրկումը, քանի որ այդպիսի պահանջների ընդգրկումը կհանգեցնի ինչպես այն պարտատերերի իրավունքների և օրինական շահերի խախտմանը, որոնց պահանջները հիմնավորված են, այնպես էլ՝ պարտապանի և նրա հիմնադիրների (մասնակիցների) իրավունքների և օրինական շահերի խախտմանը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ներկայացված պահանջների վերջնական ցուցակը հաստատելիս դատարանները պետք է առաջին հերթին հաշվի առնեն այն հանգամանքը, որ հաստատման են ենթակա միայն այն պահանջները, որոնց առկայության և չափի վերաբերյալ ներկայացված են բավարար ապացույցներ, ընդ որում, ապացույցների բավարար լինելը գնահատողական կատեգորիա է և յուրաքանչյուր գործով այն ենթակա է գնահատման՝ ելնելով կոնկրետ գործի հանգամանքներից (*տե՛ս Սարգիս Գասպարյանի ներկայացուցիչ Գոռ Մաթևոսյանի վճռաբեկ բողոքի հիման վրա թիվ ԿԴ/0033/04/13 սնանկության գործով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից 2016 թվականի դեկտեմբերի 02-ին կայացված որոշումը*)»:

Այսպես, Երևանի քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Նաիրա Հովսեփյանի վարույթում գտնվող թիվ ԵԴ/31505/02/19 քաղաքացիական գործով ներկայացված հայցադիմումում (հայցադիմումն առկա է Սնանկության գործի նյութերում), ի թիվս այլի քննարկվում են պարտապանի բաժնետոմսերի բռնագանձման արդյունքում նրա պարտավորությունների դադարման հետ կապված իրավահարաբերությունները, ինչպես նաև համապատասխան բաժնետոմսերի իրացման (բռնագանձման) իրական արժեքը, որի հիման վրա քննարկվում է Պարտապանի հանդեպ հնարավոր գերակատարման հիմքով առաջացած պարտավորությունները: Նույն քաղաքացիական գործով պարտապանը ներգրավված է որպես երրորդ անձ: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ «ՎՏԲ Բանկ» հանրային բաժնետիրական ընկերության պահանջն, ինքնին, հիմնված է վերոգրյալ պարտավորությունների առկայության վերաբերյալ վերջինիս պնդման վրա, իսկ նման պարտավորությունների առկայության կամ բացակայության հարցը հանդիսանում է քննարկվող քաղաքացիական գործով քննության առարկա, կարծում ենք, մինչ համապատասխան հարցի վերջնական լուծումը Դատարանը չի կարող որակում տալ ո՛չ համապատասխան պարտավորության օրինականության, ո՛չ չափի, համապատասխանաբար նաև՝ առաջնահերթության վերաբերյալ: Համարժեքորեն նման եզրակացություն չէր կարող անել նաև Վերաքննիչ դատարանը, քանի որ այս դեպքում խոսքը գնում է նյութաիրավական պահանջի մասին, որը վերջինս չի քննում:

Վերոգրյալի համատեքստում ակնհայտ է, որ Վերաքննիչ դատարանը, ըստ եռության, ընդունելի է համարել վիճելի իրավահարաբերության վրա հիմնված պահանջի ընդգրկումը պահանջների վերջնական ցուցակում, ինչն ուղղակիորեն հակասում է սնանկության գործով ինչպես մյուս բոլոր պարտատերերի, այնպես էլ հենց պարտապանի իրավունքներին ու օրինական շահերին: Նման փաստարկում կարող է անել ոչ միայն պարտապանը, այլև սնանկության վարույթում ընդգրկված ցանկացած պարտատեր:

Վերոգրյալ նախադեպային որոշումների և դրանց վերլուծության արդյունքում հնարավոր է պնդել, որ Դատարանն այլ կերպ չէր կարող վարվել, քան կասեցնել «ՎՏԲ Բանկ» հանրային բաժնետիրական ընկերության կողմից սնանկության վարույթում ներկայացված բողոքի քննությունը՝ մինչ դրա հիմքում ընկած իրավահարաբերությունների առկայության կամ բացակայության, այսինքն՝ պահանջի օրինականության վերաբերյալ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում քննվող թիվ ԵԴ/31505/02/19 քաղաքացիական գործի քննության ավարտը:

Նման եզրահանգման հնարավոր է գալ նաև, դիտարկելով ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները՝ կապված գործի քննության կասեցման հիմքերի, դրանց բովանդակության ու կիրառելիության վերաբերյալ: Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախադեպային որոշումներից մեկում մասնավորեցրել է.

«ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ գործի վարույթի կասեցումը գործի քննության ընթացքում այնպիսի հանգամանքի ի հայտ գալն է, որն ըստ եռության արգելակում է գործի հետագա ընթացքը: Օրենսդիրը, հաշվի առնելով սնանկության վարույթի առանձնահատկությունը (սնանկության վարույթը բաղկացած է որոշակի փուլերից և ընթանում է յուրաքանչյուր փուլին համապատասխան օրենքով

սահմանված ընթացակարգով), այդ վարույթի արդյունավետությունն ապահովելու նկատառումով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20.1-րդ հոդվածով կարգավորել է կասեցման ընթացակարգի կիրառման հնարավորությունը:

Օրենսդիրը վարույթի կասեցման կարգ նախատեսել է առանձին պարտատերերի պահանջների մասով և այն պայմանով, որ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կասեցման հիմքը (հիմքերը) կիրառելի լինի այդ իրավահարաբերության նկատմամբ: Ընդ որում, առանձին պահանջների մասով վարույթի կասեցումը չի ընդհատում սնանկության վարույթի ընթացքը, ինչը նշանակում է, որ օրենքով սահմանված կարգով առանձին պարտատերերի պահանջների մասով սնանկության գործի վարույթի կասեցման դեպքում սնանկության վարույթի մյուս փուլերը պետք է ընթանան օրենքով նախատեսված ընթացակարգով: Այսպիսով օրենսդիրը սնանկության վարույթում կասեցման հնարավորություն նախատեսել է միայն առանձին պարտատերերի պահանջների մասով (տե՛ս, ըստ «Հինգերորդ աստղ» ՄՊԸ-ի ղիմումի՝ թիվ ԱՐԱԴ/0043/04/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2017 թվականի որոշումը):»:

Չարգացնելով վերը նշված դիրքորոշումը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը հավելել է, որ «... առանձին պարտատերերի պահանջների մասով սնանկության գործի վարույթի կասեցումն ինքնանպատակ չէ, այն նպատակ ունի ապահովելու «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածով կանոնակարգված՝ պարտատերերի պահանջների դատական կարգով հաստատման գործընթացը, այդ թվում՝ պարտատիրոջ (պարտատերերի) պահանջների վերջնական ցուցակը հաստատելիս բավարար երաշխիքներ ստեղծել պարտապանի, պարտատիրոջ իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար: Ընդ որում, օրենսդիրն առանձին պարտատերերի պահանջների մասով սնանկության գործի վարույթի կասեցումը պայմանավորել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ամրագրված քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու հիմքերի հետ»:

Վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ «... ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված՝ քաղաքացիական գործի վարույթի կասեցման հիմքերն օբյեկտիվորեն պետք է խոչընդոտեն ներկայացված պահանջի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը, ապահովվածությունը քննության առնելու և տվյալ պահանջով պարտատերերի վերջնական ցուցակը հաստատելու գործընթացին: Այլ կերպ ասած՝ առանձին պահանջի (պահանջների) մասով սնանկության գործի վարույթը ենթակա է կասեցման, եթե ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված և ի հայտ եկած քաղաքացիական գործի կասեցման հիմքերն այնպիսին են, որ հնարավորություն չեն տալիս սնանկության գործընթացի այդ փուլում կայացնել օրենքով սահմանված, այն է՝ պարտատերերի կամ առանձին պարտատիրոջ պահանջի (պահանջների) մասով վերջնական ցուցակը հաստատելու մասին համապատասխան որոշում»:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ

«(...) առանձին պարտատերերի պահանջների մասով սնանկության գործի վարույթի կասեցման համար պետք է ներկայացվի պատճառաբանված միջնորդություն, որը դատարանի կողմից քննարկվելու արդյունքում ենթակա է բավարարման կամ մերժման: Ըստ այդմ էլ՝ դատարանը վերը նշված հարցով կայացնում է կամ առանձին պարտատերերի պահանջների մասով սնանկության գործի վարույթը կասեցնելու, կամ առանձին պարտատերերի պահանջների մասով սնանկության գործի վարույթը կասեցնելը մերժելու մասին որոշում (տե՛ս, «Մանչո Գրուպ» ՄՊԸ-ի ներկայացուցիչ Վահրամ Մարտիրոսյանի վճռաբեկ բողոքի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից թիվ ԿԴ1/0261/04/16 սնանկության գործով 2018 թվականի հունիսի 10-ին կայացված որոշումը):»:

2018 թվականի օգոստոսի 23-ի դրությամբ, երբ Վերաքննիչ բողոք ներկայացրած անձը, առանց նախնական տեղեկացման, արտադատական կարգով իրացրել է Պարտապանին պատկանող TEGHOUT INVESTMENTS LIMITED ընկերության բաժնետոմսերի գրավի իրավունքը և TEGHOUT INVESTMENTS LIMITED ընկերության կանոնադրական կապիտալի 50.05%-ը կազմող թվով 1001 հատ «Ա» կարգի բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցել է իր հետ փոխկապակցված իրավաբանական անձանց, դառնալով TEGHOUT INVESTMENTS LIMITED ընկերության կանոնադրական կապիտալի 100 տոկոսը կազմող բաժնետոմսերի միջնորդավորված տիրապետող, Վերաքննիչ բողոք ներկայացրած անձի հանդեպ «Թեղուտ» ՓԲ ընկերության պարտավորության ընդհանուր գումարը կազմել է շուրջ 314 մլն ԱՄՆ դոլար:

Միաժամանակ, վերաքննիչ բողոք ներկայացրած անձի, որպես տարբեր միջազգային բորսաներում ցուցակված ֆինանսական հաստատության, 2018 թվականի համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ որպես 2018 թվականի ընթացքում ձեռք բերված և հետագա օտարման ենթակա գույք, 22 միլիարդ ռուբլի ընդհանուր արժեքով արտացոլվել են TEGHOUT INVESTMENTS LIMITED ընկերության կանոնադրական կապիտալի 100 տոկոսը կազմող բաժնետոմսերը: Հարկ է նշել, որ հիշյալ հաշվետվությունում արտացոլված այդ արժեքը 2018 թվականի օգոստոսի 23-ի դրությամբ կազմել է շուրջ 325 մլն ԱՄՆ դոլար, ինչը ավելի քան 10 մլն ԱՄՆ դոլարով գերազանցել է Վերաքննիչ բողոք ներկայացրած անձի հանդեպ «Թեղուտ» ՓԲ ընկերության պարտավորության ընդհանուր գումարը:

Այսինքն, Վերաքննիչ բողոք ներկայացրած անձի կողմից կատարված՝ գրավի իրավունքի իրացման արդյունքում Վերաքննիչ բողոք ներկայացրած անձը ստացել է իր հաշվապահական հաշվառման փաստաթղթերում արտացոլվել է համապատասխան ակտիվը, որի արդարացի

(իրական) արժեքը (հաշվարկվում է շուկայական արժեք հանած իրացման գծով ծախսեր բանաձևով) գերազանցում է իր հանդեպ եղած պարտավորության չափը: Այսպիսով, Վերաքննիչ բողոք ներկայացրած անձի հիշյալ գործողության կատարմամբ փաստացի ամբողջությամբ մարվել (դադարել) է 30.09.2016 թվականին կնքված Գլխավոր փոխառվողության պայմանագրով վերաքննիչ բողոք ներկայացրած անձի հանդեպ «Թեղուտ» ՓԲ ընկերության պարտավորությունը, հետևաբար, որպես հետևանք, դադարել են նաև այդ նույն պայմանագրով Պարտապանի (որպես Երաշխավորի) ստանձնած բոլոր պարտավորությունները: Այս պնդումը հիմնականում հիմնված է այն իրողության վրա, որ հիշյալ պարտավորությունների կատարման նպատակով իրականացված վերոգրյալ բռնագանձումը և այն, որ բռնագանձված ակտիվի արժեքը գերազանցել է կուտակված պարտավորությունների մնացորդը, ակնհայտ է, որ համապատասխան պայմանագրային պարտավորությունները դադարել են, ուստի համապատասխան պայմանագրի գործողությունը ևս դադարել է:

Վերոգրյալը հնարավոր է պնդել, հաշվի առնելով, որ 30.09.2016 թվականին կնքված անշարժ գույքի հաջորդող գրավի պայմանագրով և 30.09.2016 թվականին կնքված շարժական գույքի հաջորդող գրավի պայմանագրով պարտապանի (որպես Գրավատուի) պարտավորությունները ևս պայմանավորված են եղել 30.09.2016 թվականին կնքված Գլխավոր փոխառվողության պայմանագրով և հանդիսացել են լրացուցիչ (ակցեսոր) պարտավորություններ, ուստի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 382-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով՝ հիմնական պարտավորության դադարման հիմքով դադարել են նաև այդ լրացուցիչ (ակցեսոր) պարտավորությունները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 04.03.2021 թվականի որոշումը և 11.11.2020 թվականին Դատարանի կողմից կայացված որոշումը՝ բողոքարկված մասերով թողնել օրինական ուժի մեջ»:

2.1. Վճռաբեկ դատարանը որպես «Քեյ Էս Էյ» ՓԲԸ-ի վճռաբեկ բողոքի հիմքեր, հիմնավորումներ և պահանջ նշել է հետևյալը.

«ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով սնանկության վարույթների առանձնահատկություններին և ընդգծելով դրանց ինքնուրույն բնույթը, նախկինում կայացրած նախադեպային որոշմամբ արձանագրել է, որ «... սնանկության վարույթի նկատմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերը կիրառվում են այնքանով, որքանով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի նորմերով այլ կանոններ նախատեսված չեն: Այսինքն՝ այն պարագայում, երբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերով նախատեսված է այլ կանոն, սակայն «Սնանկության մասին» ՀՀ օրենքի նորմերը նշված հանգամանքի նկատմամբ սահմանել են այլ մոտեցումներ, ապա պետք է կիրառվի «Սնանկության մասին» ՀՀ օրենքի դրույթը (տե՛ս, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ընդդեմ Ամառյա Բեգլարյանի թիվ ՍՆԴ/0104/04/19 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 15.05.2020 թվականի որոշումը)»:

Չուզահեռ, անդրադառնալով գործերի վերանայման և քննության կապակցությամբ Դատավարության Օրենսգրքով վերաքննիչ դատարանների համար սահմանված լիազորություններին՝ ՀՀ վճռաբեկ դատարանը իր մի շարք նախադեպային որոշումներում արձանագրել է, որ «... [ի] տարբերություն առաջին ատյանի դատարանի, որը կաշկանդված է հայցապահանջով և պարտավոր է գործը քննել ու լուծել ներկայացված պահանջի շրջանակներում, վերաքննիչ դատարանը, կաշկանդված լինելով բողոքի հիմքերով, քննության է առնում դրանից յուրաքանչյուրի հիմնավորվածության հարցը՝ համապատասխանաբար կիրառելով օրենսդրի կողմից իրեն վերապահված լիազորություններից որևէ մեկը (տե՛ս, օրինակ, «ԱՐՄԵՆ-ՕՍՍ» ՍՊԸ-ն ընդդեմ «ՄԱՎԱ ԻՄՊՈՒԼՍ» ՍՊԸ-ի թիվ ԵԱԴԴ/1617/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2014 թվականի որոշումը)»:

ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«1. յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները ..., ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

Դատարան դիմելու իրավունքը պետք է լինի պրակտիկ և արդյունավետ: Նման իրավունքի «արդյունավետ» համարվելու համար հարկավոր է, որպեսզի անձը ունենա հստակ և պրակտիկ հնարավորություն վիճարկելու այն ակտը, այդ թվում՝ գործողությունը կամ անգործությունը, որը խախտել է կամ անսմիջականորեն կարող է խախտել վերջինիս իրավունքները և օրինական շահերը (տե՛ս, օրինակ, Բելեթն ընդդեմ Ֆրանսիայի թիվ 23805/94 գործով Եվրոպական Դատարանի կողմից կայացված վճիռը):

Իր մեկ այլ նախադեպային որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «... փորձաքննություն նշանակելը գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների վերաբերյալ ապացույցներ ձեռք բերելու դատավարական միջոց է (տե՛ս «Ֆինլեքս» ՍՊԸ-ն ընդդեմ «Մետաքս» ԲԲԸ-ի թիվ ԵՄԴ/0492/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):

Սակայն նաև Դատարանի օրինաչափ արձանագրմամբ ո'չ պարտապանի և ո'չ ՎՏԲ Բանկի կողմից բացարձակապես չեն ներկայացվել բավարար ապացույցներ, որոնք կվերաբերեին

պարտավորության հիմքերին, պահանջն արդեն կատարված լինելուն, պահանջի չափին և այլն:

Ավելին, Վերաքննիչ դատարանի ընկալմամբ պարտապանի և ՎՏԲ Բանկի կողմից պահանջված փորձաքննությունը պետք է ապահովեր քննարկվող վճարային պարտավորության վիճելի կամ անվիճելի լինելու փաստի հաստատումը, և սա այն պարագայում, երբ նման փորձաքննությամբ պարզապես բացահայտվելու էր՝ արդյո՞ք համապատասխան լիազորագիրը ստորագրվել և/կամ կնքվել է պայմանագրի ստորագրումից առաջ, թե՛ հետո: Այսինքն, նման փաստի պարզումը որևէ կերպ չէր անդրադառնալու և չէր բացառելու պարտատիրոջ պահանջի հիմնավորվածությունը, նման պահանջի հիմքը, որը մատուցված իրավաբանական ծառայություններն էին, և/կամ չափը, որը հաստատված էր Հաշիվ-ապրանքագիր 1-ով և Հաշիվ-ապրանքագիր 2-ով:

Այլ կերպ ասած՝ նման փորձաքննության արդյունքները չէին ծառայելու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների վերաբերյալ ապացույցներ ձեռք բերելուն, որոնք ուղղված կլինեին պարտատիրոջ դրամային պահանջի հիմնավորվածության բացառմանը կամ այն վիճարկելի դարձնելուն:

Ավելին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն.

«Օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առջինն է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ»:

Նույն օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

«2. Գործարքի անվավերության դեպքում կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը, իսկ ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում (ներառյալ, երբ ստացածն արտահայտվում է գույքից օգտվելու, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության մեջ)՝ հատուցել դրա արժեքը դրամով, եթե գործարքի անվավերության այլ հետևանքներ նախատեսված չեն օրենքով»:

Նույն օրենսգրքի 1092-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«1. Անձը, ով առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի ուրիշ անձի (տուժողի) հաշվին ձեռք է բերել գույք կամ խնայել է այն (ձեռք բերողը), պարտավոր է տուժողին վերադարձնել անհիմն ձեռք բերած կամ խնայած գույքը (անհիմն հարստացումը), բացառությամբ սույն օրենսգրքի 1099 հոդվածով նախատեսված դեպքերի»:

ՀՀ վճարբեկ դատարանը, իր նախադեպային որոշումներում անդրադառնալով անհիմն հարստացման ինստիտուտին, փաստել է, որ « ... ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածից հետևում է, որ անհիմն հարստացման առկայության համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը.

1. անձը (ձեռք բերողը) այլ անձի (տուժողի) հաշվին պետք է ձեռք բերի կամ խնայի գույք, այսինքն՝ ձեռք բերողի մոտ գույքի ավելացումը պետք է պայմանավորված լինի տուժողի մոտ գույքի պակասեցմամբ,

2. գույքը պետք է ձեռք բերվի կամ խնայվի առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի, այսինքն՝ հարստացումն անօրինական ձևով (*տե՛ս Անժելիկա Գասպարյանն ընդդեմ Չելիմ Սիմոնյանի թիվ ԵԱԲԴ/0455/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճարբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1093-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն.

«Եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով, այլ օրենքներով կամ այլ իրավական ակտերով և չի բխում համապատասխան հարաբերությունների էությունից, սույն գլխում նախատեսված կանոնները ենթակա են կիրառման նաև՝

1) անվավեր գործարքով կատարվածը վերադարձնելու պահանջների նկատմամբ»:

Այսինքն, նման պարագայում, երբ անգամ կնքված պայմանագիրը վիճարկելի դառնար պայմանագիրն այն իրավունք չունեցող անձի կողմից ստորագրած լինելու հիմքով, բոլոր պարագաներում կիրառվելու էր եկկողմանի ռեստիտուցիա, որը նման իրավահարաբերությունների առանձնահատկության պայմաններում, երբ այնուամենայնիվ առկա էին պատշաճ մատուցված ծառայություններ, հանգեցնելու էր պարտապանի կողմից համապատասխան գումարի վճարմանը անհիմն հարստացման հիմքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն.

«Գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

«1. Գործարքները կարող են լինել երկկողմ կամ բազմակողմ (պայմանագիր), ինչպես նաև՝ միակողմ:

2. Պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է երկու կողմի (երկկողմ գործարք) կամ երեք ու ավելի կողմերի (բազմակողմ գործարք) համաձայնեցված կամքի արտահայտությունը»:

Նույն օրենսգրքի 777-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

«1. Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով՝ կատարողը պարտավորվում է պատվիրատուի առաջադրանքով ծառայություններ մատուցել (կատարել որոշակի գործողություններ կամ իրականացնել որոշակի գործունեություն), իսկ պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

2. Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը կնքվում է գրավոր»:

Այսինքն՝ պատվիրատուի վճարման պարտականությունը ծագում է միայն ծառայությունը պատշաճ մատուցված լինելու պարագայում: Եվ հետևաբար կողմերի միջև վեճ առաջանալիս անհրաժեշտություն է առաջանում ապացուցել ծառայությունները մատուցված լինելու փաստը, որպեսզի դրա հիման վրա կատարվի վճարում:

Վերոնշյալ հոդվածների կիրառման կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «... ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը՝ որպես այն կնքող անձանց համաձայնեցված կամքի արտահայտություն, ուղղված է որոշակի գործողություններ կատարելու կամ որոշակի գործունեություն իրականացնելու արդյունքում քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն: Սկստի ունենալով, որ օրենսդիրն այս պայմանագրի համար սահմանել է գրավոր ձևով կնքելու պահանջ, ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը պետք է կնքվի գրավոր գործարքին ներկայացվող պահանջներին համապատասխան: Այն դեպքերում, երբ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի գրավոր ձևը չի պահպանվում, ապա կիրառման է ենթակա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված կանոնը, այն է՝ կողմերը զրկվում են ի հաստատումն գործարքի ու նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու իրավունքից՝ այդուհանդերձ պահպանելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ... սահմանված այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքը (տե՛ս, *Չարուհի Հայրապետյան և Գայանե Ղազարյան ընդդեմ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/0556/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից 07.04.2017 թվականին կայացված որոշումը*)»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 779-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«1. Պատվիրատուն պարտավոր է իրեն մատուցված ծառայությունների համար վճարել ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրում նշված ժամկետներում և կարգով»:

Նույն օրենսգրքի 781-րդ հոդվածի համաձայն՝

«Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի նկատմամբ կիրառվում են կապալի մասին ընդհանուր դրույթները (հոդվածներ 700-727) և կենցաղային կապալի մասին դրույթները (հոդվածներ 728-737), եթե դա չի հակասում սույն օրենսգրքի 777-780 հոդվածներին, ինչպես նաև ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի առանձնահատկություններին»:

Նույն օրենսգրքի 718-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝

«1. Պատվիրատուն պարտավոր է կապալի պայմանագրով նախատեսված ժամկետներում ու կարգով կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքում՝ այդ մասին անհապաղ հայտնել կապալառուին:

2. Աշխատանքն ընդունելիս թերություններ հայտնաբերած պատվիրատուն իրավունք ունի դրանք վկայակոչել այն դեպքերում, եթե ընդունումը հաստատող ակտում կամ այլ փաստաթղթում նախատեսվել է այդ թերությունները կամ հետագայում դրանց վերացման պահանջ ներկայացնելու հնարավորությունը:

3. Պատվիրատուն, որն աշխատանքն ընդունել է առանց ստուգման, զրկվում է աշխատանքի այն թերությունները վկայակոչելու իրավունքից, որոնք կարող էին հայտնաբերվել սովորական եղանակով ընդունելու ժամանակ (բացահայտ թերություններ), եթե այլ բան նախատեսված չէ կապալի պայմանագրով»:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ծառայությունները մատուցված լինելու փաստն ապացուցելու պարտականություն կրող կողմի հարցին, դեռևս 2007 թվականին նշել է՝ «... սույն վեճի հիմքում ընկած պայմանագրերի համաձայն՝ պատվիրատուն պարտավորվել է ընդունել կատարված աշխատանքը և վճարել դրա դիմաց՝ ներկայացված կատարողական ակտերի համաձայն: Այսինքն որպես նշված աշխատանքների դիմաց վճարման հիմք՝ կողմերը փոխադարձ համաձայնությամբ համարել են կատարողական ակտերը (տե՛ս, «Բլիթ Սիթի» ՍՊԸ-ն ընդդեմ Երևանի Արաբկիր թաղապետարանի թիվ 3-299(ՏԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից 01.06.2007 թվականին կայացված որոշումը)»:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր նախադեպային որոշումներում անդրադարձել է նաև «ծառայությունների մատուցման հաշիվ»-ների՝ որպես ծառայություններ մատուցած անձի հայցը հիմնավորող ապացույցի վերաբերելիության և թույլատրելիության հարցին և արձանագրել, որ «... հայցը հիմնավորող միակ թույլատրելի ապացույցը [ծառայություններ մատուցած անձի] կողմից ներկայացված ծառայությունների մատուցման փաստի և ծավալների վերաբերյալ հաշիվն է (տե՛ս, «ԱրմենՏել» ՓԲԸ-ն ընդդեմ «Էյ Ար-Այ Սի Թի» ՍՊԸ-ի թիվ ԱԿԴ1/0009/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից պայլատի 29.07.2011 թվականին կայացված որոշումը)»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«1. Գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պարտավոր է ապացուցել իր պահանջների և առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով կամ այլ օրենքներով»:

Սույն սնանկության գործի շրջանակում պարտապանը և ՎՏԲ Բանկը պետք է ապացուցեին իրենց կողմից վկայակոչված այն հանգամանքները, որ պայմանագրում և Հաշիվ-ապրանքագիր 1-ում և Հաշիվ-ապրանքագիր 2-ում մատնանշված ծառայությունները ամբողջությամբ կամ մասամբ չեն մատուցվել: Հատկապես այն պարագայում, երբ քննարկվող հաշիվ-ապրանքագրերում միանշանակ սահմանվել են նման ծառայությունների մատուցման

ընդունման կամ համապատասխան առարկությունների ներկայացման երկուստեք համաձայնեցված պայմանները և կարգը: Ավելին, կողմերի պայմանագրային իրավահարաբերությունների առկայության փաստը չի վիճարկվել որևէ իրավասու դատական ատյանում:

Այնինչ, պարտապանը և ՎՏԲ Բանկը պարզապես բավարարվել են առանց որևէ բավարար ապացույցի, առարկություններ ներկայացնելով, ինչը դարձյալ իրավաչափորեն արձանագրվել է Դատարանի կողմից:

Իսկ Վերաքննիչ դատարանը վերոնշյալ հարցի կապակցությամբ նշել է, որ թեև ներկայացված հաշիվ-ապրանքագրերով նախատեսված է մատուցված ամբողջ ծառայությունների արժեքը, միևնույն գործի նյութերում և պահանջատիրոջ կողմից ներկայացված ապացույցներով չի հաստատվում, թե փաստացի ինչ ծառայություններ են մատուցվել և արդյոք մատուցված ծառայությունների արժեքն է արտացոլված հաշիվ-ապրանքագրերում՝ միաժամանակ հղում կատարելով ՀՀ հարկային օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ և 8-րդ մասերին, այն պարագայում, երբ նշյալ հոդվածի փոխարեն հարկավոր էր հղում կատարել նույն օրենսգրքի 56-րդ հոդվածի 7-րդ մասին, որի համաձայն.

«7. Այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետությունում իրականացվող՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման գործարքի գծով ավելացված արժեքի հարկի հաշվարկման և վճարման պարտավորությունը, Օրենսգրքի 4-րդ բաժնի համաձայն, կրում են գործարքի կողմ համարվող՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը, նոտարը կամ մշտական հաստատությունը, ապա այդ գործարքի մասով հարկային հաշիվը, իսկ Օրենսգրքով սահմանված դեպքերում նաև՝ ճշգրտող հարկային հաշիվը դուրս է գրվում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի կամ մշտական հաստատության կողմից»:

Այսինքն, միայն պարտապանի, ՎՏԲ Բանկի ներկայացրած առարկությունների հիման վրա Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ քննարկվող իրավահարաբերությունների առկայությունը վիճարկելի է, երբ չեն պահպանվել նման վիճարկելիության հիմնավորվածությանը ներկայացվող օրենսդրական պահանջները՝ միաժամանակ, դուրս գալով վերաքննիչ բողոքի քննության սահմաններից, քանզի ստորադաս ատյանում, բնականաբար նման հնարավորության բացակայության պայմաններում, ամենևին էլ քննարկվող պայմանագրային իրավահարաբերությունների կապակցությամբ նյութափրավական վեճ չի քննվել:

Ավելին, Վերաքննիչ դատարանը անտեսել է այն հանգամանքը, որ նախ նշյալ իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի է անգլիական իրավունքը, ինչը հստակ սահմանված է պայմանագրով՝ միաժամանակ կատարելով սույն վեճի լուծման համար որևէ նշանակություն չունեցող եզրահանգում, և այն էլ՝ սխալ:

Մասնավորապես, քննարկվող հաշիվ-ապրանքագրերը դուրս են գրվել Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից, ով դրանք դուրս գրելիս ամենևին էլ պարտավոր չէր հետևել ՀՀ հարկային օրենսգրքով նման փաստաթղթերի բովանդակությանը ներկայացվող պահանջներին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«1. Պարտատիրոջը պարտավորության հիման վրա պատկանող իրավունքը (պահանջը) կարող է նրա կողմից այլ անձի փոխանցվել գործարքով (պահանջի գիշում) կամ անցնել այլ անձի՝ օրենքի հիման վրա»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 399-րդ հոդվածի համաձայն.

«Սկզբնական պարտատիրոջ իրավունքը նոր պարտատիրոջն է անցնում իրավունքի անցման պահին գոյություն ունեցող ծավալով և պայմաններով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Մասնավորապես, նոր պարտատիրոջն են անցնում պարտավորության կատարումն ապահովող, ինչպես նաև պահանջի հետ կապված այլ իրավունքները՝ ներառյալ չվճարված տոկոսների նկատմամբ իրավունքը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 403-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«1. Պարտատիրոջ պահանջի գիշումն այլ անձի թույլատրվում է, եթե դա չի հակասում օրենքին, այլ իրավական ակտերին կամ պայմանագրին»:

Նույն օրենսգրքի 404-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«1. Հասարակ գրավոր կամ նոտարական ձևով կնքված գործարքի վրա հիմնված պահանջը պետք է գիշվի նույն ձևով»:

Սույն Սնանկության Գործով Պարտատիրոջ կողմից ներկայացված Համաձայնագրով միանշանակ ցույց էր տրվել, որ պայմանագրով և Հաշիվ-ապրանքագիր 1-ով ու Հաշիվ-ապրանքագիր 2-ով պարտապանի նկատմամբ «ՍԻԳՆԻՉԸՐ ԼԻԹԻԳԵՅՇՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ունեցած պահանջի իրավունքը պատշաճ ձևակերպմամբ անցել է պարտատիրոջը, իսկ ի հաստատումն գոյություն ունեցող պարտավորությունների և դրանց հստակ ծավալի՝ ներկայացվել են Պայմանագիրը և Հաշիվ-ապրանքագիր 1-ը ու Հաշիվ-ապրանքագիր 2-ը, որոնք վիճարկելու կապակցությամբ ո'չ պարտապանի և ո'չ ՎՏ Բանկի կողմից որևէ վերաբերելի և բավարար ապացույց չի ներկայացվել հնչեցված առարկություններից գատ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի

04.03.2021 թվականի որոշումը և 11.11.2020 թվականին Դատարանի կողմից կայացված որոշումը՝ բողոքարկված մասերով թողնել օրինական ուժի մեջ»

2.2. Վճռաբեկ դատարանը որպես «Բեյզ Մեթրյու» ՓԲԸ-ի վճռաբեկ բողոքի դեմ «ՎՏԲ Բանկ» ՀԲԸ-ի, «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի, «Նաիրի Ինֆրասթրաքչը Բեփիթել Լիմիթեդ» ՓԲԸ-ի կողմից բերված պատասխանի հիմնավորումներ նշել է հետևյալը.

«Բեյզ Մեթրյու» ՓԲԸ-ի վճռաբեկ բողոքի «Նաիրի Ինֆրասթրաքչը Բեփիթել Լիմիթեդ» ՓԲԸ-ին վերաբերող մասի վերաբերյալ.

«Նաիրի Ինֆրասթրաքչը Բեփիթել Լիմիթեդ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փորձագետի եզրակացությունները, չհամապատասխանելով ապացույցի նման տեսակին ներկայացվող պահանջներին, չէին կարող համարվել նաև սովորական գրավոր ապացույց: Մասնավորապես, Դատարանը «Նաիրի Ինֆրասթրաքչը Բեփիթել Լիմիթեդ» ՓԲԸ-ի ներկայացրած փորձագետի եզրակացությունները որակել էր որպես անթույլատրելի ապացույցներ: Մինչդեռ, ապացույցների թույլատրելիության կանոնները սահմանված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածով, և այդ կանոններից որևէ մեկի կիրառմամբ արտադատական փորձաքննության եզրակացությունը չի կարող համարվել անթույլատրելի: Բողոքաբերը փորձել է հիմնավորել, որ տվյալ դեպքում առկա է ապացույցի անթույլատրելիության դեպքը, որը սահմանված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասով, սակայն չի նշել, թե որ օրենքի կամ նորմատիվ իրավական ակտի համաձայն վնասի չափը չի կարող հաստատվել փորձագետի եզրակացությունից բացի այլ ապացույցով: Տվյալ դեպքում գործին մասնակցող անձի իրավունքն է փաստի հաստատման համար տարբեր ապացույցների շարքում ներկայացնել նաև հատուկ գիտելիքներ ունեցող անձի՝ փորձագետի եզրակացություն, սակայն փորձագետի եզրակացություն ներկայացնելու հնարավորությունն ինքնին այլ ապացույցներն անթույլատրելի չի դարձնում:

«Բեյզ Մեթրյու» ՓԲԸ-ի վճռաբեկ բողոքի «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ պահանջի և «ՎՏԲ Բանկ» ՀԲԸ պահանջի քննության կասեցման մասի վերաբերյալ.

Այս մասերով բճռաբեկ բողոքի հիմքերն ու հիմնավորումներն ըստ էության ամբողջությամբ կրկնում են բողոք բերողի այն դիրքորոշումները, որոնք ներկայացվել են սնանկության դատարանում պահանջների քննության ժամանակ և վերաքննիչ վարույթում: Ուստի, սույն վճռաբեկ բողոքի պատասխանն ավելորդ չծանրաբեռնելու նպատակով այս մասով ևս հղում են արել «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի անունից և «ՎՏԲ Բանկ» ՀԲԸ-ի անունից պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշման դեմ ներկայացված վերաքննիչ բողոքներին և Վճռաբեկ դատարանին խնդրել են լրացուցիչ ուսումնասիրել դրանք»:

2.3. Վճռաբեկ դատարանը որպես «Բեյ Էս Էմ Էյ» ՓԲԸ-ի վճռաբեկ բողոքի դեմ «ՎՏԲ Բանկ» ՀԲԸ-ի, «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի, «Նաիրի Ինֆրասթրաքչը Բեփիթել Լիմիթեդ» ՓԲԸ-ի կողմից բերված պատասխանի հիմնավորումներ նշել է հետևյալը.

«Դատարանը մերժել էր դատափաստաթղթաբանական փորձաքննություն նշանակելու մասին որոշումը և հաստատել էր «Բեյ-Էս-Էմ-Էյ» ՓԲԸ-ի պահանջը: Դատարանը փորձաքննության նշանակումը մերժել էր այն պատճառաբանությամբ, որ ըստ էության վիճարկվել է փաստաթղթի իսկությունը, որի պարագայում փաստաթուղթը ներկայացնող պետք է ապացուցի դրա իսկական լինելը, իսկ գործին մասնակցող մյուս անձինք, չունենալով համապատասխան ապացուցման պարտականություն, չեն կարող այդ փաստը պարզելուն ուղղված փորձաքննություն նշանակելու միջնորդություն ներկայացնել: Վերաքննիչ բողոքարկման արդյունքում Վերաքննիչ դատարանն իրավացիորեն եզրահանգել է, որ «... օրենսդիրը նման միջնորդություն ներկայացնելու իրավունք ունեցող անձանց շրջանակի վերաբերյալ որևէ սահմանափակում չի սահմանել, ուստի, եթե գործին մասնակցող անձանցից որևէ մեկը ներկայացրել է փորձաքննություն նշանակելու միջնորդություն, դատարանը այն չի կարող մերժել այն պատճառաբանությամբ, որ նման միջնորդություն ներկայացնելու իրավասություն ունի միայն փորձաքննությամբ պարզման ենթակա փաստերի ապացուցման պարտականություն կրող կողմը» և որ «... տվյալ դեպքում պահանջի հիմնավորվածությունը պարզելու համար անհրաժեշտ է նշանակել փորձաքննություն»: Քննարկվող փորձաքննությամբ կարող է հաստատվել պարտապանի անունից տրված լիազորագիրը «հետին ամսաթվով» կազմված լինելու, կամ ընդհուպ՝ կեղծ լինելու հանգամանքը: Երկու դեպքն էլ կնշանակեն, որ պայմանագիրը, որի հիման վրա ներկայացված է դրամական պահանջ, կնքված չի եղել պարտապանի կողմից, ուստի չի կարող նրա համար պարտականություններ առաջացնել: Այս առումով հատկանշական է, որ բողոք բերած անձը փորձում է լիազորություն չունեցող անձի կողմից պայմանագիր կնքելու հետևանքը նույնացնել այդ պայմանագրի վիճարկելիության և դրա հետևանքների հետ: Մինչդեռ, լիազորություն չունեցող անձի կողմից գործարք կնքելու հետևանքը ոչ թե նման գործարքի անվավերությունն է, այլ այն, որ այդ գործարքը կնքված չի համարվում այն անձի կողմից, որի անունից գործել է լիազորություն չունեցող անձը, այլ կնքված է համարվում լիազորություն չունեցող անձի անունից և ի շահ նրա: Պարզ ասած՝ եթե որևէ ընկերության կողմից լիազորություն չունեցող անձ գործարք կնքի այդ ընկերության անունից, ապա նման գործարքը ընկերության համար իրավական հետևանքներ չի առաջացնի: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 319-րդ հոդվածով սահմանված հետևանքը կիրառելի է տվյալ դեպքում հատկապես նաև այն

պատճառով, որ ծառայությունների մատուցման պայմանագրով որպես պատվիրատու «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ից բացի (որի անունից հանդես է եկել ենթադրաբար լիազորություն չունեցող Վալերի Մեջլումյանը) նշվել է նաև հենց Վալերի Մեջլումյանը, ուստի պայմանագիրն ամբողջությամբ պետք է համարվի վերջինիս անունից և ի շահ նրա կնքված: Իսկ եթե «Քեյ-Ես-Էմ-Էյ» ՓԲԸ-ի պահանջը դիտարկվի ոչ թե որպես պայմանագրից բխող, այլ որպես անհիմն հարստացման վերադարձման պահանջ, այդ պարագայում պահանջը պետք է հիմնավորվեր բոլորովին այլ փաստակազմով, ներառյալ՝ առանց հանձնարարության, ի շահ ուրիշ գործողությունների բարեխղճության և իրավաչափության վավերապայմաններով: Մինչդեռ նման հիմնավորում «Քեյ-Ես-Էմ-Էյ» ՓԲԸ-ի կողմից երբևէ չի ներկայացնել սույն գործի շրջանակներում:

Հիմք ընդունելով վերը շարադրված հիմնավորումները՝ խնդրել են վճռաբեկ բողոքը մերժել»:

3. Վճռաբեկ դատարանը որպես վճռաբեկ բողոքների քննության համար նշանակություն ունեցող փաստեր նշել է հետևյալը.

«1. 2016 թվականի սեպտեմբերի 30-ին Банк ВТБ (ПАО) ընկերության (որպես՝ Վարկատու և Գործակալ), VTB Bank (France) SA ընկերության (որպես՝ Երկրորդ Վարկատու), «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության (որպես՝ Հայաստանյան Գործակալ) (մի կողմից) և «Թեդոլտ» ՓԲ ընկերության (որպես՝ Փոխառու), TEGHOUT INVESTMENTS LIMITED ընկերության, «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերության, «Վալլեքս ԷՖ.Էմ. Էստ.» ՍՊ ընկերություն (ООО «Валлекс Ф.М.Эст.») և «Բեյգ Մեթրլա» ՓԲ ընկերության (որպես՝ Երաշխավորներ) (մյուս կողմից) միջև կնքվել է մինչև 300.000.000 ԱՄՆ դոլար գումարով Գլխավոր փոխատվության պայմանագիր (այսուհետ՝ 30.09.2016 թվականին կնքված Գլխավոր փոխատվության պայմանագիր):

2. ՎՏԲ Բանկ ՀԲԸ (Банк ВТБ (ПАО) ընկերության և «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերության միջև 30.09.2016 թվականին կնքվել է անշարժ գույքի հաջորդող գրավի պայմանագիր (այսուհետ՝ 30.09.2016 թվականին կնքված անշարժ գույքի հաջորդող գրավի պայմանագիր):

3. «ՎՏԲ Բանկ ՀԲԸ (Банк ВТБ (ПАО) ընկերության և «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերության միջև 30.09.2016 թվականին կնքվել է շարժական գույքի հաջորդող գրավի պայմանագիր (այսուհետ՝ 30.09.2016 թվականին կնքված շարժական գույքի հաջորդող գրավի պայմանագիր):

4. Թիվ ԵԴ/31505/02/19 քաղաքացիական գործի շրջանակներում քննվում է Վալերի Ջանիբեկի Մեջլումյանի հայցադիմումն ընդդեմ «ՎՏԲ Բանկ» ՀԲԸ-ի, «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի, երրորդ անձինք՝ «Թեդոլտ» ՓԲԸ-ի, «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի, «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի՝ բաժնետոմսերի հաջորդող գրավի պայմանագիրը դադարած համարելու և գրավի իրավունքի դադարումը գրանցելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

5. Թիվ ԵԴ/27276/02/19 քաղաքացիական գործով, ըստ հայցի «Վալլեքս ԷՖ.Էմ.Էստ.» ՍՊԸ-ի ընդդեմ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի՝ Բանկի, Ընկերության և «Թեդոլտ» ՓԲԸ-ի միջև 16.01.2012 թվականին կնքված թիվ «201 Օ» երաշխավորության պայմանագրով սահմանված երաշխավորությունը դադարած համարելու պահանջի մասին, վճռաբեկ դատարանի 09.12.2020 թվականի որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

6. 2018 թվականի հոկտեմբերի 16-ի նամակ-համաձայնագրի համաձայն՝ «Սիգնիչըր Լիթիգեյշըն» ՍՊ գործընկերությունը պարտավորվել է հանդես գալ «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերության և Վալերի Մեջլումյանի անունից Լոնդոնի միջազգային արբիտրաժային դատարանում, որը ներառում է արբիտրաժային հայցի նախապատրաստում և ներկայացում Լոնդոնի միջազգային արբիտրաժային դատարան՝ արբիտրաժային գործընթացը սկսելու համար: Նշված նամակ-համաձայնագիրը կնքվել է «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերության անունից տնօրեն Վալերի Մեջլումյանի, Վալերի Մեջլումյանի և «Սիգնիչըր Լիթիգեյշըն» ՍՊ գործընկերության անունից Ջոշ Վոնգի կողմից:

7. 31.08.2019թ. թիվ 007018 հաշիվ-ապրանքագրի համաձայն՝ վճարման ենթակա գումարի ընդհանուր թիվը կազմում է 231.558,23 \$-ում ստերլինգ:

8. 30.09.2019թ. թիվ 007046 հաշիվ-ապրանքագրի համաձայն՝ վճարման ենթակա գումարի ընդհանուր թիվը կազմում է 220.085,91 \$-ում ստերլինգ:

9. «Քեյ-Ես-Էմ-Էյ» ՓԲ ընկերության և «Սիգնիչըր Լիթիգեյշըն» ՍՊ գործընկերության միջև 2020 թվականի հունվարի 13-ին կնքվել է «Հիջման մասին» համաձայնագիր, համաձայն որի «Սիգնիչըր Լիթիգեյշըն» ՍՊ գործընկերությունը 13.01.2020թ. դրությամբ ունի պահանջներ «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերության նկատմամբ՝ համաձայն «Սիգնիչըր Լիթիգեյշըն» ՍՊ գործընկերության և «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերության միջև 16.10.2018թ. 451.644,14 \$-ում ստերլինգ գումարի չափով պարտավորագրի: Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Սիգնիչըր Լիթիգեյշըն» ՍՊ գործընկերությունը զիջել է «Քեյ-Ես-Էմ-Էյ» ՓԲ ընկերությանը 451.644,14 \$-ում ստերլինգ գումարի չափով պահանջի նկատմամբ իր բոլոր իրավունքները և սեփականության իրավունքը:

10. 19.09.2018թ. լիազորագրի համաձայն՝ «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերության տնօրեն Լուսինե Մեջլումյանը լիազորել է Վալերի Մեջլումյանին, Ընկերության անունից և փոխարեն հանդես գալ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության, մասնավորապես՝ Անգլիայի պետական մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց առջև և Ընկերության շահերը ներկայացնելու ու պաշտպանելու:

նպատակով, ի թիվս այլնի, ստորագրել իրավական օգնություն ստանալու և /կամ/ Լոնդոնի Միջազգային Արբիտրաժային դատարանում Ընկերության շահերը ներկայացնելու վերաբերյալ պայմանագրեր, համաձայնագրեր կամ այլ համարժեք փաստաթղթեր «Սիզնիչըր Լիթիգեյշն» ՍՊ գործընկերության, «Բոյես Շիլլեր Ֆլեքսներ» ընկերության, ինչպես նաև Մեծ Բրիտանիայի և /կամ/ Անգլիական իրավունքին համապատասխան գործունեության ծավալող մասնագիտացված այլ կազմակերպությունների հետ, նրանց տալ համապատասխան ծառայությունների մատուցման հանձնարարականներ, պարտադիր կատարման ցուցումներ, վերահսկել ծառայությունների մատուցման ընթացքը (հատոր 35-րդ, գ.թ.127):

11. Դատարանը մերժել է «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի փորձաքննությունն նշանակելու մասին միջնորդությունը, որին միացել է նաև «ՎՏԲ Բանկ» ՀԲԸ-ն:

12. 2018 թվականի հոկտեմբերի 16-ի նամակ-համաձայնագրի համաձայն՝ «Սիզնիչըր Լիթիգեյշն» ՍՊ գործընկերությունը պարտավորվել է հանդես գալ «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերության և Վալերի Մեջլումյանի անունից Լոնդոնի միջազգային արբիտրաժային դատարանում, որը ներառում է արբիտրաժային հայցի նախապատրաստում և ներկայացում Լոնդոնի միջազգային արբիտրաժային դատարան՝ արբիտրաժային գործընթացը սկսելու համար: Նշված նամակ-համաձայնագիրը կնքվել է «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերության անունից տնօրեն Վալերի Մեջլումյանի, Վալերի Մեջլումյանի և «Սիզնիչըր Լիթիգեյշն» ՍՊ գործընկերության անունից Ջոշ Վոնգի կողմից:

13. 31.08.2019թ. թիվ 007018 հաշիվ-ապրանքագրի համաձայն՝ վճարման ենթակա գումարի ընդհանուր թիվը կազմում է 231.558,23 \$ նուստ ստերլինգ:

14. 30.09.2019թ. թիվ 007046 հաշիվ-ապրանքագրի համաձայն՝ վճարման ենթակա գումարի ընդհանուր թիվը կազմում է 220.085,91 \$ նուստ ստերլինգ:

15. «Քեյ-Էս-Էմ-Էյ» ՓԲ ընկերության և «Սիզնիչըր Լիթիգեյշն» ՍՊ գործընկերության միջև 2020 թվականի հունվարի 13-ին կնքվել է «Չիջման մասին» համաձայնագիր, համաձայն որի «Սիզնիչըր Լիթիգեյշն» ՍՊ գործընկերությունը 13.01.2020թ. դրությամբ ունի պահանջներ «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերության նկատմամբ՝ համաձայն «Սիզնիչըր Լիթիգեյշն» ՍՊ գործընկերության և «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերության միջև 16.10.2018թ. 451.644,14 \$ նուստ ստերլինգ գումարի չափով պարտավորագրի: Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Սիզնիչըր Լիթիգեյշն» ՍՊ գործընկերությունը զիջել է «Քեյ-Էս-Էմ-Էյ» ՓԲ ընկերությանը 451.644,14 \$ նուստ ստերլինգ գումարի չափով պահանջի նկատմամբ իր բոլոր իրավունքները և սեփականության իրավունքը:

16. 19.09.2018թ. լիազորագրի համաձայն՝ «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերության տնօրեն Լուսինե Մեջլումյանը լիազորել է Վալերի Մեջլումյանին, Ընկերության անունից և փոխարեն հանդես գալ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության, մասնավորապես՝ Անգլիայի պետական մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց առջև և Ընկերության շահերը ներկայացնելու ու պաշտպանելու նպատակով, ի թիվս այլնի, ստորագրել իրավական օգնություն ստանալու և /կամ/ Լոնդոնի Միջազգային Արբիտրաժային դատարանում Ընկերության շահերը ներկայացնելու վերաբերյալ պայմանագրեր, համաձայնագրեր կամ այլ համարժեք փաստաթղթեր «Սիզնիչըր Լիթիգեյշն» ՍՊ գործընկերության, «Բոյես Շիլլեր Ֆլեքսներ» ընկերության, ինչպես նաև Մեծ Բրիտանիայի և /կամ/ Անգլիական իրավունքին համապատասխան գործունեության ծավալող մասնագիտացված այլ կազմակերպությունների հետ, նրանց տալ համապատասխան ծառայությունների մատուցման հանձնարարականներ, պարտադիր կատարման ցուցումներ, վերահսկել ծառայությունների մատուցման ընթացքը (հատոր 35-րդ, գ.թ.127):

17. «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության և «Թեդուտ» ՓԲ ընկերության միջև 22.11.2011թ.-ին կնքվել է թիվ 201 Վարկային համաձայնագիրը:

Համաձայն նշված համաձայնագրի 1.1 կետի՝ սույն Համաձայնագրի նպատակներով ստորև նշված տերմիններն ունեն հետևյալ նշանակությունը՝

Հիմնական պարտք-համաձայնագրի գործողության ցանկացած ամսաթվի դրությամբ տրամադրված և չմարված, այդ թվում՝ պայմանագրով սահմանված ժամկետում չմարված, վարկառուի կողմից վարկի գումարը: Առաջին տոկոսային ժամանակաշրջան - տոկոսների հաշվեգրման ժամանակահատվածն է, որը սկսվում է վարկի տրամադրման պահից և ավարտվում վարկերի տրամադրման ժամկետի ավարտին: Հետագա տոկոսային ժամանակաշրջաններն ավարտվում են նախորդ տոկոսային ժամանակաշրջանի ավարտի ամսաթվից երեք ամիս հետո:

Համաձայն նշված համաձայնագրի 2. կետի՝ վարկատուն պարտավորվում է բացել Վարկային գիծ և Վարկառուին տրամադրել Վարկեր Համաձայնագրում նշված չափով և պայմաններով, իսկ Վարկառուն պարտավորվում է վերադարձնել Վարկերը, վճարել Վարկերի տոկոսները և կատարել Համաձայնագրով նախատեսված այլ պարտավորությունները:

Համաձայնագրի 3.1. կետի համաձայն՝ վարկային գծի տրամադրման սահմանաչափ է սահմանվել 115,852,000.00 ԱՄՆ դոլարը:

Վարկառուի կողմից վարկային գծի օգտագործումը Պայմանագրում նշված այլ նպատակներից բացի չի թույլատրվում: Վարկի հաշվին չի կարող վճարվել տոկոսները, միջնորդավճարները և Վարկառուի ծախսերը, ըստ համաձայնագրի:

18. «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության և «Թեդուտ» ՓԲ ընկերության միջև 22.11.2011թ.-ին կնքվել է թիվ 202 Վարկային համաձայնագիրը:

Համաձայն նշված համաձայնագրի 1.1 կետի՝ սույն Համաձայնագրի նպատակներով ստորև նշված տերմիններն ունեն հետևյալ նշանակությունը՝

Հիմնական պարտք-համաձայնագրի գործողության ցանկացած ամսաթվի դրությամբ տրամադրված և չմարված, այդ թվում՝ պայմանագրով սահմանված ժամկետում չմարված, վարկառուի կողմից վարկի գումարը:

Առաջին տոկոսային ժամանակաշրջան-տոկոսների հաշվեգրման ժամանակահատվածն է, որը սկսվում է վարկի տրամադրման պահից և ավարտվում վարկերի տրամադրման ժամկետի ավարտին: Հետագա տոկոսային ժամանակաշրջաններն ավարտվում են նախորդ տոկոսային ժամանակաշրջանի ավարտի ամսաթվից երեք ամիս հետո:

Համաձայնագրի 2.1 կետի համաձայն՝ վարկատուն պարտավորվում է բացել Վարկային գիծ և Վարկառուին տրամադրել Վարկեր Համաձայնագրում նշված չափով և պայմաններով, իսկ Վարկառուն պարտավորվում է վերադարձնել Վարկերը, վճարել Վարկերի տոկոսները և կատարել Համաձայնագրի 3.1 կետով սահմանված է վարկային գծի տրամադրման սահմանաչափը՝ 74,700,000.00 ԱՄՆ դոլար:

Վարկառուի կողմից վարկային գծի օգտագործումը Պայմանագրում նշված այլ նպատակներից բացի չի թույլատրվում: Վարկի հաշվին չի կարող վճարվել տոկոսները, միջնորդավճարները և Վարկառուի ծախսերը, ըստ համաձայնագրի:

19. «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության և «Թեդուտ» ՓԲ ընկերության միջև 22.11.2011թ.-ին կնքվել է թիվ 203 Վարկային համաձայնագիր:

Համաձայն նշված համաձայնագրի 1.1 կետի՝ սույն Համաձայնագրի նպատակներով ստորև նշված տերմիններն ունեն հետևյալ նշանակությունը՝

Հիմնական պարտք-համաձայնագրի գործողության ցանկացած ամսաթվի դրությամբ տրամադրված և չմարված, այդ թվում՝ պայմանագրով սահմանված ժամկետում չմարված, վարկառուի կողմից վարկի գումարը:

Առաջին տոկոսային ժամանակաշրջան-տոկոսների հաշվեգրման ժամանակահատվածն է, որը սկսվում է վարկի տրամադրման պահից և ավարտվում վարկերի տրամադրման ժամկետի ավարտին: Հետագա տոկոսային ժամանակաշրջաններն ավարտվում են նախորդ տոկոսային ժամանակաշրջանի ավարտի ամսաթվից երեք ամիս հետո:

Վարկառուի կողմից վարկային գծի օգտագործումը Պայմանագրում նշված այլ նպատակներից բացի չի թույլատրվում: Վարկի հաշվին չի կարող վճարվել տոկոսները, միջնորդավճարները և Վարկառուի ծախսերը, ըստ համաձայնագրի:

20. Վարկառու՝ «Թեդուտ» ՓԲԸ-ի, Երաշխավորներ «Թեդուտ Ինվեսթմենթս Լիմիթիդ»-ի, «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի, «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ի, «Վալլեքս ԷՖ. Էմ. Էստ» ՍՊԸ-ի, Ֆինանսավորման Կողմերի վարկային գործակալ «ՎՏԲ Բանկ» ՀԲԸ-ի, Ֆինանսավորման Կողմերի ապահովման գործակալ և Համապարտ Պարտատեր՝ «ՎՏԲ Բանկ» ՀԲԸ-ի և Ֆինանսավորման Կողմերի Հայկական ապահովման գործակալ՝ «ՎՏԲ Բանկ (Հայաստան)» ՓԲԸ-ի միջև 30.09.2016 թվականին կնքվել է 300.000.000 ԱՄՆ դոլար գումարով Վարկային գծի պայմանագիր: Համաձայն պայմանագրի՝

«1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ.

1.1. Սահմանումներ ...

«Ֆինանսավորման Կողմ նշանակում է. Գործակալը, Ապահովման գործակալը, Հայկական Ապահովման գործակալը կամ Վարկատուն: / ... /:

«Վերաֆինանսավորման Վարկային Գծի Պայմանագիր»՝ նշանակում է Վերաֆինանսավորման Վարկային Գծի Պայմանագիր 1-ը, Վերաֆինանսավորման Վարկային Գծի Պայմանագիր 2-ը և Վերաֆինանսավորման Վարկային Գծի Պայմանագիր 3-ը:

«Վերաֆինանսավորման Վարկային Գծի Պայմանագիր 1» նշանակում է՝ Վարկառուի և «ՎՏԲ Բանկ (Հայաստան)» ՓԲ ընկերության միջև 22.11.2011 թվականին կնքված թիվ 201 ժամկետային Վարկառության պայմանագիրը՝ 19.12.2012 թվականի, 29.03.2013 թվականի 28.06.2013 թվականի, 09.07.2013 թվականի, 29.10.2013 թվականի և 21.11.2013 թվականի փոփոխություններով:

«Վերաֆինանսավորման Վարկային Գծի Պայմանագիր 2» նշանակում է՝ Վարկառուի և «ՎՏԲ Բանկ (Հայաստան)» ՓԲ ընկերության միջև 22.11.2011 թվականին կնքված թիվ 202 ժամկետային Վարկառության պայմանագիրը՝ 19.12.2012 թվականի, 29.03.2013 թվականի, 09.07.2013 թվականի, 28.06.2013 թվականի, 29.10.2013 թվականի, 21.11.2013 թվականի և 02.09.2014 թվականի փոփոխություններով:

«Վերաֆինանսավորման Վարկային Գծի Պայմանագիր 3» նշանակում է՝ Վարկառուի և «ՎՏԲ Բանկ (Հայաստան)» ՓԲ ընկերության միջև 22.11.2011 թվականին կնքված թիվ 203 ժամկետային Վարկառության պայմանագիրը՝ 19.12.2012 թվականի, 29.03.2013 թվականի, 28.06.2013 թվականի, 09.07.2013 թվականի, 29.10.2013 թվականի և 21.11.2013 թվականի փոփոխություններով:

2. ՎԱՐԿԱՑԻՆ ԳԻԾ

2.1. Համաձայն սույն Պայմանագրի պայմանների, Վարկատուները Վարկառուին տրամադրում են՝

(a) դոլարով ժամկետային վարկային գիծ՝ Ա. Վարկային Գծով Ընդհանուր Պարտավորության ընդհանուր գումարի չափով, և

(b) դոլարով ժամկետային վարկային գիծ, Բ. Վարկային Գծով Ընդհանուր Պարտավորության ընդհանուր գումարի չափով:

3. ՆՊԱՏԱԿԸ

3.1. Նպատակը

(a) Վարկառուն պետք է կիրառի Ա. Վարկային Գծով ստացած բոլոր Վարկառու միջոցները

Վերաֆինանսավորման Վարկային Գծի Պայմանագրերով չվճարված բոլոր մայր գումարների մարումը ֆինանսավորելու համար (երկրնթերցումներից խուսափելու համար՝ նման մարումը չի ներառելու Վերաֆինանսավորման Վարկային Գծի Պայմանագրերի առաջին տոկոսային ժամանակահատվածի համար վճարման ենթակա տոկոսները):

(b) Վարկառուն պետք է կիրառի Բ. Վարկային Գծով ստացած բոլոր Վարկառու միջոցները Սուբորդինացված Վարկառության Պայմանագրերով չվճարված բոլոր գումարների մարումը ֆինանսավորելու համար, որպեսզի ԱՓԶ-ն հնարավորություն ունենա մարել ԱՓԲ Վարկային Գծի Պայմանագրեր՝ ՎՏԲ-Ֆրանսիա պայմանագրերով բոլոր չվճարված մայր գումարները:

21. «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության և «Թեդուտ» ՓԲ ընկերության միջև 22.11.2011թ. կնքվել են թիվ 201, 202, 203 վարկային պայմանագրերը, որոնք հետագայում փոփոխվել են լրացուցիչ համաձայնագրերով:

2011թ.-ի Վարկային պայմանագրերի կողմերը 31.10.2016թ.-ին կնքել են համապատասխան պայմանագրերին կից (թվով երեք) լրացուցիչ համաձայնագրեր (այսուհետ՝ Լրացուցիչ համաձայնագրեր), որոնցով կարգավորել են 2016թ.-ի Վարկային գծի պայմանագրի ազդեցությունը 2011թ.-ի Վարկային պայմանագրերի վրա:

Լրացուցիչ համաձայնագրերի նախաբանում սահմանված է, որ Վարկառուն մտադրվում է ՎՏԲ Բանկ ՀԲԸ-ի կողմից տրամադրվող վարկային միջոցների հաշվին մարել պարտավորությունները Հիմնական պարտքի գծով, և «Վարկային համաձայնագրով Հիմնական պարտքի գծով պարտավորությունների վաղաժամկետ լրիվ մարման արդյունքում անհրաժեշտություն կառաջանա կարգավորելու Վարկառուի կողմից Վարկային համաձայնագրով տոկոսների և միջնորդավճարների գծով պարտքի մարման հետագա հարցը»:

5-րդ կետում սահմանված է, որ Վարկառուի պարտքի չափը տոկոսների և միջնորդավճարների գծով կազմում է 37,277,060.23 ԱՄՆ դոլար, 33,615,184.83 ԱՄՆ դոլար և 35,675,784.65 ԱՄՆ դոլար: Ընդ որում՝ սահմանված է, որ այդ գումարները ներառում են հաշվարկված և չվճարված տոկոսները Առաջին տոկոսային ժամանակաշրջանի համար, չվճարված տոկոսները Հաջորդող տոկոսային ժամանակաշրջանի համար:

Լոնդոնի Միջազգային Արբիտրաժային Դատարանի 04.10.2019թ. որոշման համաձայն՝ «Արմենիան Զափրո Փրոգրամ» ՓԲ ընկերությունը պարտավորվել է «ՆԱԻՐԻ ԻՆՖՐԱՍՏՐԱԿՏՐ ԶԵՓԻԹԵԼ ԼԻՄԻԹԵԴ» ՍՊ ընկերությանը տասնչորս օրվա ընթացքում վճարել 104.978,10 եվրոյի չափով գումար, որպես իրավաբանական ծառայությունների ծախսերի փոխհատուցում:

22. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԴ/0080/16/20 գործով 07.09.2020թ. կայացված որոշմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում ճանաչվել է Լոնդոնի Միջազգային Արբիտրաժային Դատարանի 04.10.2019թ. թիվ 184100 որոշումը: Նշած որոշումը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ, որի վերաբերյալ գործը քննող դատավորի կողմից կատարվել է համապատասխան նշում:

23. «Արմենիան Զափրո Փրոգրամ» ՓԲ ընկերության, «ՆԱԻՐԻ ԻՆՖՐԱՍՏՐԱԿՏՐ ԶԵՓԻԹԵԼ ԼԻՄԻԹԵԴ» ՍՊ ընկերության և Վալերի Մեջլումյանի միջև 20.07.2011թ. կնքվել է Օպցիոն համաձայնագիր/փոփոխված 01.03.2017թ. համաձայնագրով/, համաձայն որի /2.1 և 2.2 կետեր/ «Արմենիան Զափրո Փրոգրամ» ՓԲ ընկերությունը «ՆԱԻՐԻ ԻՆՖՐԱՍՏՐԱԿՏՐ ԶԵՓԻԹԵԼ ԼԻՄԻԹԵԴ» ՍՊ ընկերությանը տրամադրել է օպցիոն՝ վերջինիս պահանջի դեպքում ձեռք բերել «Թեդուտ Ինվեսթմենթս Լիմիթեդ» ընկերության Բ դասի 498 բաժնետոմսեր՝ 38.650.000 ԱՄՆ դոլարով /Օպցիոնի գինը՝ սահմանված Օպցիոնի համաձայնագրի 3-րդ կետով /01.03.2017թ. համաձայնագրի փոփոխությամբ//:

24. 20.09.2019թ. Թիմաթի Ջ Ալլենի և Անաստասիա Մայլագինայի փորձագիտական եզրակացության համաձայն՝ «ՆԱԻՐԻ ԻՆՖՐԱՍՏՐԱԿՏՐ ԶԵՓԻԹԵԼ ԼԻՄԻԹԵԴ» ՍՊ ընկերության վնասը կազմում է 38.650.000 ԱՄՆ դոլար գումար:

25. Անկախ աուդիտորի աուդիտորական եզրակացությամբ հաստատված 31.12.2018թ. ավարտված տարվա «ՎՏԲ Բանկ» ՀԲԸ համախմբված ֆինանսական հաշվետվության համաձայն՝ «Թեդուտ Ինվեսթմենթս Լիմիթեդ» ընկերության արժեքը նշված է 22 միլիարդ ռուբլի»:

4. Վճռաբեկ դատարանը որպես պատճառաբանություններ և եզրահանգում նշել է հետևյալը.

«Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20.1-րդ հոդվածի 1-ին մասի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքների քննության ընթացքում վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ.

1. սնանկության վարույթում պարտավորության կետանցով պատճառված վնասի դրամական պահանջի գրանցման իրավական հարցին.

2. լիազորագրի հիման վրա կնքված պայմանագրի իրավական հետևանքների հարցին, եթե

լիազորագիրը ստորագրվել է դրա տրման օրվանից տարբերվող ամսաթվով:

3. սնանկության վարույթում պահանջի գրանցման կասեցման իրավական հարցին, եթե վիճարկվում է պարտավորության կատարման ապահովման միջոցներից մեկը.

4. պարտավորությունը դադարելու իրավական հարցին այն դեպքում, երբ այդ պարտավորության կատարման ապահովման երաշխավորությունը դատական կարգով դադարած է ճանաչվել դրա նորացման հիմքով:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի (գործող խմբագրություն առ 03.03.2020 թվական) (այսուհետ՝ «Օրենք») 46-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ եթե իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում հրապարակումից հետո՝ յոթ օրվա ընթացքում, կառավարիչը, պարտապանը և պարտատերերը գրավոր առարկություն են ներկայացնում պահանջների նախնական ցուցակի առաջնահերթության կամ որևէ պարտատիրոջ պահանջի վերաբերյալ, ապա դատավորը առարկությունն ստանալուց հետո՝ 15 օրվա ընթացքում, հրավիրում է դատական նիստ, որի տեղի և ժամանակի մասին կառավարիչին, պարտապանին և պարտատերերին ծանուցում է իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլով՝ նիստից առնվազն երեք օր առաջ տրվող հայտարարությամբ կամ ծանուցագիր ուղարկելու միջոցով:

Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն առարկությունների քննարկման արդյունքում դատարանը որոշում է պահանջի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը, ապահովվածությունը և որոշում է կայացնում պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սնանկության գործի վարույթը առանձին պարտատերերի պահանջների մասով կարող է կասեցվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ կասեցման հիմքերի առկայության դեպքում, եթե այդ իրավակարգավորումները կիրառելի են սնանկության վարույթում առանձին պահանջների քննության նկատմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե՝ անհնարին է տվյալ գործի քննությունը մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ հարցով կամ գործով եզրափակիչ ակտ կայացնելը. (...):

Սույն սնանկության գործով Դատարանի 20.11.2020 թվականի «Պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին» որոշմամբ «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված միջնորդությունը՝ «Քեյ-Ես-Էմ-Էյ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված պահանջի մասով դատաձեռագրաբանական փորձաքննություն նշանակելու վերաբերյալ մերժվել է: «ՎՏԲ Բանկ» ՀԲԸ-ի կողմից ներկայացված պահանջի քննությունը կասեցվել է մինչև թիվ ԵԴ/31505/02/19 քաղաքացիական գործով եզրափակիչ դատական ակտ կայացնելը: Դատարանի որոշմամբ «ՆԱԻՐԻ ԻՆՖՐԱՍՏՐԱԿՏՐԱԿՏՐ ԲԵՓԻԹԵԼ ԼԻՄԻԹԵԴ» ՍՊԸ-ի և «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված պահանջների հաստատումը մերժվել է:

Դատարանի վերոնշյալ որոշման դեմ ի թիվս այլոց վերաքննիչ բողոք են ներկայացրել նաև «ՎՏԲ Բանկ» ՀԲԸ-ն, «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն և «ՆԱԻՐԻ ԻՆՖՐԱՍՏՐԱԿՏՐ ԲԵՓԻԹԵԼ ԼԻՄԻԹԵԴ» ՍՊԸ-ն:

Վերաքննիչ դատարանը 04.03.2021 թվականի որոշմամբ անդրադառնալով «ՎՏԲ Բանկ» ՀԲԸ-ի վերաքննիչ բողոքին՝ արձանագրել է, որ հաշվի առնելով այն, որ սույն գործով քննության են ենթակա այնպիսի պահանջներ, որոնցով պարտապանը հանդիսանում է մեկը, ուստի պարտատերերից յուրաքանչյուրի պահանջի բավարարումը ուղղակիորեն կարող է էական լինել նաև մյուս պարտատերերի համար, ուստի Դատարանը պետք է ամեն կերպ փորձեր պարզել պահանջի հիմնավորվածությունը, առաջնահերթությունը և միայն դրանից հետո այն գրանցեր պահանջների ցուցակում, այդ թվում՝ Դատարանը կարող էր նշված հանգամանքների պարզման համար նշանակել փորձաքննություն, մինչդեռ Դատարանը ներկայացված միջնորդությունը մերժել է, դրանով իսկ կասկածի տակ դնելով «Քեյ-Ես-Էմ-Էյ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված պահանջի անվիճելիությունը և հիմնավորվածությունը, գտել է, որ տվյալ դեպքում պահանջի հիմնավորվածությունը պարզելու համար անհրաժեշտ է նշանակել փորձաքննություն, որից հետո միայն հնարավոր կլինի հանգել հետևության, որ Վալերի Մեջլումյանին տրված լիազորագրով վերջինս իրավաչափորեն ունեցել է իրավունք պարտապանի անունից «Սիգնիչըր Լիթիգեյշըն» ՍՊ գործընկերության հետ ստորագրելու համաձայնագիր՝ դրանով իսկ ընկերության համար մատուցված ծառայությունների դիմաց վարձավճար վճարելու պարտականություն առաջացնել:

Անդրադառնալով «ՎՏԲ Հանրային բանկ» ՓԲԸ-ի վերաքննիչ բողոքին, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ թիվ ԵԴ/31505/02/19 քաղաքացիական գործով հայցի առարկան բաժնետոմսերի հաջորդող գրավի պայմանագիրը դադարած համարելու և գրավի իրավունքի դադարումը գրանցելուն պարտավորեցնելու պահանջն է, որը որևէ անհնարինություն չի կարող առաջացնել սույն գործով պահանջի քննության համար: Ավելին՝ հիմնական պարտավորությունը հանդիսանում է 300.000.000 ԱՄՆ դոլար գումարով Գլխավոր փոխատվության պայմանագրի հիման վրա ծագած պարտավորությունը, իսկ հաջորդող գրավի պայմանագիրը կնքվել է ի ապահովումն նշված պարտավորության, ուստի հիմնական պարտավորության առկայության պայմաններում ապահովում սահմանող պայմանագիրը դադարած համարելը չի կարող խոչընդոտել կամ վերացնել հիմնական պարտավորությունը: Բացի այդ՝ բացի հաջորդող գրավի պայմանագրից, ի ապահովումն Գլխավոր փոխատվության

պայմանագրի՝ կնքվել են նաև այլ գրավի և երաշխավորության պայմանագրեր, հետևաբար սույն պարագայում ապահովման միջոցներից մեկը հանդիսացող պայմանագրի դադարած համարելն անգամ չի հանգեցնում պարտավորության դադարեցման, չի վերացնում մյուս ապահովման միջոցները և չի խոչընդոտում սույն պահանջի քննությանը: Ընդ որում, պարտապանը չի վիճարկում պարտավորության բացակայությունն, այլ ընդամենը վիճարկում է տվյալ պարտավորության ապահովման միջոցներից մեկի դադարած լինելու հանգամանքը, ուստի գործի վարույթը պահանջի քննության մասով, ենթակա չէր կասեցման: Ելնելով վերոգրյալից՝ Վերաքննիչ դատարանը գտել է, որ «ՎՏԲ Հանրային բանկ» ՓԲԸ-ի պահանջի քննությունը կասեցման ենթակա չէր:

Վերաքննիչ դատարանը միաժամանակ անդրադառնալով «ՆԱԻՐԻ ԻՆՖՐԱՍԹՐԱԶՉՐ ԶԵՓԻԹԵԼ ԼԻՄԻԹԵԴ» ՍՊԸ-ի վերաքննիչ բողոքին՝ նշել է, որ արտադատական կարգով ներկայացված փորձագիտական եզրակացությունները պետք է դատարանի կողմից հետազոտվեն որպես գրավոր ապացույցներ՝ մյուս ապացույցների հետ համադրման արդյունքում կատարելով փաստի հաստատման վերաբերյալ դատողություններ և միայն այդ դեպքում հնարավոր կլինի հանգել փաստի հաստատման համար բավարար կամ ոչ բավարար ապացույցներ ներկայացված լինելու վերաբերյալ հետևության:

Տվյալ դեպքում Դատարանը գնահատման առարկա դարձնելով «ՆԱԻՐԻ ԻՆՖՐԱՍԹՐԱԶՉՐ ԶԵՓԻԹԵԼ ԼԻՄԻԹԵԴ» ՍՊԸ-ի կողմից դատարան ներկայացրած 20.09.2019 թվականի Թիմոթի Զ Ալլենի և Անաստասիյա Մայուլգինայի փորձագիտական եզրակացությունը և 23.09.2020 թվականին տրված փորձագետ Անաստասիա Մայուլգինայի եզրակացությունը, նշել է, որ դրանք չեն կարող համարվել թույլատրելի ապացույցներ, քանի որ սույն գործով չի պահանջվել եզրակացություններ տրված փորձագետների կողմից դատական նիստի ընթացքում դատարանի արջև ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար քրեական պատասխանատվության մասին նախազգուշացված լինելու և դրանք հաստատելու դատավարական կարգը, ուստի դրանք սույն գործով որևէ փաստ ապացուցելու հիմքում չեն կարող դրվել:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը հիմնավոր համարելով Դատարանի այն հետևությունները, որ ներկայացված եզրակացությունները որպես այդպիսին չեն կարող համարվել թույլատրելի ապացույց, միևնույն ժամանակ նշել է, որ այդ եզրակացությունները ենթակա են հետազոտման որպես գրավոր ապացույցներ՝ մյուս ապացույցների հետ համադրման արդյունքում, ինչը, սակայն, Դատարանը չի իրականացրել:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է.

Սույն գործի փաստերի համաձայն՝ ներկայացված պահանջների վերաբերյալ առկա են ինչպես ավարտված, այնպես էլ ընթացքում գտնվող քաղաքացիական գործեր Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության դատարաններում, ինչպես նաև միջազգային առևտրային արբիտրաժում, որպիսի հանգամանքն առկա է եղել ինչպես սնանկության դատարանում պահանջների դեմ ներկայացված առարկության քննության, այնպես էլ վերաքննիչ դատարանում վերաքննիչ բողոքի քննության ընթացքում: Այսպես՝ թիվ ԵԴ/31505/02/19 քաղաքացիական գործն ըստ հայրի Վալերի Զանիբեկի Մեջլումյանի հայցն ընդդեմ «ՎՏԲ բանկ» ՀԲԸ-ի, «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի, երրորդ անձինք՝ «Թեղուտ» ՓԲԸ-ի, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի, «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի՝ բաժնետոմսերի հաջորդող գրավի պայմանագիրը դադարած համարելու և գրավի իրավունքի դադարումը գրանցելուն պարտավորեցնելու պահանջների մասին, ԵԴ/34197/02/19 քաղաքացիական գործը գրավի առարկայի իրացմանն ուղղված գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու և «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի 100 տոկոս բաժնետոմսերի նկատմամբ հայցվորի սեփականության իրավունքը գրանցելուն «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ին պարտավորեցնելու պահանջի մասին, թիվ ԵԴ/27276/02/19 քաղաքացիական գործը երաշխավորության պայմանագրով սահմանված երաշխավորության պարտավորություններից երաշխավորին ամբողջությամբ ազատելու պահանջի մասին, Լոնդոնի միջազգային արբիտրաժային դատարանի վարույթում, № 194169 արբիտրաժային գործը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն նախկինում քննված քաղաքացիական, սնանկության կամ վարչական գործով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտով հաստատված գործի քննության համար նշանակություն ունեցող փաստերը գործին մասնակցող նույն անձանց մասնակցությամբ այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում: Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել նշված հոդվածի իրավակարգավորումները սնանկության վարույթում կիրառելու հարցի վերաբերյալ:

Ըստ այդմ էլ սնանկության դատարանը նախադատելի համարելով օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով հաստատված հանգամանքները, իրավական գնահատականներ է տվել ներկայացված պահանջների հիմքերին, իսկ դեռևս չավարտված և ընթացքի մեջ գտնվող գործերով վերլուծելով ներկայացված պահանջները և դրանց հիմքում դրված փաստական և իրավական հիմքերը, կասեցրել է առանձին պահանջների գրանցումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այլ դատարանի վարույթում գտնվող գործի ելքն ուղղակիորեն ազդելու է ներկայացված պահանջի չափի և համապատասխան հերթում գրանցելու հարցի վրա:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ սնանկության վարույթում պահանջ ներկայացրած անձինք ևս պարտապանին համահավասար կարող են ներկայացնել

առարկություններ յուրաքանչյուր պահանջի առնչությամբ՝ վկայակոչելով նաև օրինական ուժի մեջ մտած այնպիսի դատական ակտերով հաստատված հանգամանքներ, որոնցով իրենք տվյալ գործին մասնակցող անձ չեն հանդիսացել, սակայն այդ հանգամանքները էական նշանակություն ունեն ներկայացված պահանջի գրանցման հարցի քննարկման համար:

Տվյալ դեպքում օրինական ուժի մտած ԵՄԴ/2776/02/19 վճռով երաշխավորի պարտավորությունները դադարած են համարվել այն պարտավորության նորացմամբ, որի ապահովման համար կնքվել էր երաշխավորության պայմանագիրը:

Այս համատեքստում Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում բողոք բերած անձանց փաստարկները և վկայակոչած նախադեպային դատական ակտերը՝ դատական նախադատելիության և իրավական որոշակիության վերաբերյալ:

Մասնավորապես ՀՀ վճռաբեկ դատարանն իր կողմից կայացված նախադեպային որոշմամբ սահմանել է, որ նախադատելիության ինստիտուտը կարևոր նշանակություն ունի դատական խնայողության սկզբունքի ապահովման և դատական ակտերի միջև անհարթահարելի հակասությունների կանխարգելման առումով: Մասնավորապես՝ այն մի կողմից կոչված է պարզեցնելու խախտված իրավունքները վերականգնելու դատավարական կարգը՝ ազատելով կողմերին նույն փաստը կրկին ապացուցելու պարտականությունից, մյուս կողմից, կոչված է բացառելու միևնույն փաստերի տարբեր, հակասական գնահատումը, որը կարող է հանգեցնել իրավական որոշակիության սկզբունքի խախտման (*տե՛ս Մանյա Մանուկյանն ընդդեմ Աշտարակի քաղաքապետարանի թիվ ԱՐԱԴ/0209/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

Տվյալ դեպքում օրինական ուժի մեջ մտած վճռով երաշխավորության դադարման հիմքը եղել է բացառապես պարտավորության դադարելը նորացմամբ:

Փաստաթղթի իսկության վերաբերյալ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ այդ հարցի հետ կապված իրավական գնահատականները և դրա հետևանքները կախված են քաղաքացիաիրավական հետևանքներ առաջացնող փաստաթղթի բնույթից: Այն դեպքում, երբ հարցը վերաբերում է գործարքին, առաջ է գալիս վերջինիս վավերության/անվավերության հարցը, որպիսի հարցադրում կարող է չառաջանալ այլ փաստաթղթերի իսկության վիճարկման դեպքում:

Սույն գործով պահանջի դեմ առարկության հիմքում դրված է եղել գործարքի կնքման համար տրված լիազորագիրը հետին թվով ստորագրված լինելու հանգամանքը, որի իսկությունն է վիճարկել առարկություն ներկայացնողը: Այս դեպքում պետք է նկատել, որ պատշաճ լիազորության չունենալու պայմաններում գործարքը կարող է վիճարկվել դատական կարգով, իսկ լիազորագրի իսկությունն ընդամենը կարող է դրվել գործարքի անվավերության պահանջի հիմքում, քանի որ լիազորագրի իսկությունն այս իրավահարաբերության համար ինքնին չունի այլ իրավական հետևանք: Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է որ Վերաքննիչ դատարանի կողմից Դատարանին վերագրվել է դատավարական խախտում, որն իրականում ձևական է, քանի որ գործարքը վիճարկված չլինելու պայմաններում Վերաքննիչ դատարանի դիտարկումներն ու եզրահանգումները մասնկության դատարանի կողմից թույլ տված դատավարական իրավունքի խախտումների մասին չէին կարող դատական ակտի բեկանման հիմք հանդիսանալ՝ գործի ելքի վրա ազդեցություն չունենալու պատճառով, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ (...) դատարանի ըստ էության ճիշտ դատական ակտը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր ապացույց թույլատրելու մասին միջնորդությունն արվում է ապացույցի ներկայացմամբ և այն փաստի վկայակոչմամբ, որը գործին մասնակցող անձը ցանկանում է ապացուցել:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ դատական փորձաքննության դատավարական ձևի առանձնահատկությունը պայմանավորված է նրանով, որ այն իրականացվում է քաղաքացիադատավարական օրենքով սահմանված կարգով՝ փորձագետի կողմից, ով դատարանի կողմից նախկին օրենսգրքի 60-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն նախազգուշացվում է ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար քրեական պատասխանատվության մասին: Դատարանը փորձագետից ստորագրություն է վերցնում նախազգուշացման մասին, որը կցվում է դատական նիստի արձանագրությանը: Առանց այդ դատավարական ընթացակարգի պահպանման՝ հատուկ մասնագիտական գիտելիքների տիրապետող անձի կողմից տրված մասնագիտական եզրակացությունը չի կարող ընդունվել և գնահատվել որպես փորձագետի եզրակացություն: Ուստի, այդպիսի փորձաքննության արդյունքը դատարանը չի կարող ընդունել որպես փորձագիտական եզրակացություն (*տե՛ս հայցի Աշոտ Բարսեղյանի ընդդեմ Լիլիթ Մնացականյանի, Տիգրան Պողոսյանի թիվ ԵՄԴ/0341/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 10.04.2020 թվականի որոշումը*)»:

Վերաքննիչ դատարանը, կիրառելով ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումը՝ փորձագիտական եզրակացությունը որոշ դեպքերում որպես գրավոր ապացույց դիտելու և գնահատելու հնարավորության հարցում, անտեսել է այն հանգամանքը, որ սույն գործի փաստերից ելնելով, միայն այդ ապացույցը չէր կարող բավարար լինել ներկայացված

պահանջը հաստատելու համար, հատկապես այն պայմաններում, երբ օպցիոնի պայմանագրից երևում է հանդիպակաց պարտավորության առկայություն և այդ հարցերի վերաբերյալ առկա են դատական վեճեր՝ ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ Լոնդոնի միջազգային արբիտրաժում: Այսինքն՝ այն պայմաններում, երբ պահանջի վերաբերյալ առկա է նյութաիրավական վեճ և այն վերաբերում է ոչ թե պահանջի հիմքում դրված պարտավորությանը, այլ դրա կետանցով պայմանավորված գույքի կորստին /վնաս/, պահանջը կարող է գրանցվել համապատասխան վնասի հատուցման վերաբերյալ դատական ակտի ուժի մեջ մտնելուց հետո, կամ վնասի առկայությունը որպես հանրաճանաչ հանգամանք դիտելու և դրա չափի վերաբերյալ պատշաճ, թույլատրելի և վերաբերելի ապացույցի առկայության պայմաններում:

Տվյալ դեպքում դրամական պահանջի հիմքում դրված է օպցիոնի պայմանագրով նախատեսված պայմանի չկատարումը, որի կետանցը դեռևս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ և 1058-րդ հոդվածների իմաստով վնաս դիտելու համար անհրաժեշտ է գույքի կորստի և/կամ բաց թողած օգուտի փաստի առկայությունը, որպիսի հանգամանքը չի հաստատվել ներկայացված պահանջի հիմքում դրված ապացույցներով:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանն իրավացիորեն է մերժել «ՆԱԻՐԻ ԻՆՖՐԱՍԹՐԱԶՉՐ ԶԵՓԻԹԵԼ ԼԻՄԻԹԵԴ» ՍՊԸ-ի և «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված պահանջների հաստատումը, իսկ «ՎՏԲ Բանկ» ՀԲԸ-ի կողմից ներկայացված պահանջի քննությունը իրավացիորեն կասեցրել է՝ մինչև թիվ ԵԴ/31505/02/19 քաղաքացիական գործով եզրափակիչ դատական ակտ կայացնելը:

Վերը նշված պատճառաբանությունների լույսի ներքո ամբողջությամբ հերքվում են վճռաբեկ բողոքների պատասխանների փաստարկները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ միջանկյալ դատական ակտերի դեմ ներկայացված բողոքներով պետական տուրք չի գանձվում:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Դատարանի «Պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին» 20.11.2020 թվականի որոշումը միջանկյալ դատական ակտ է՝ նկատի ունենալով, որ վերջինս թվարկված չէ եզրափակիչ դատական ակտերի ցանկում: Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածը՝ միջանկյալ դատական ակտ պետք է համարել նաև Վերաքննիչ դատարանի 04.03.2021 թվականի որոշումը: Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ վարույթի հետ կապված պետական տուրք ենթակա չէ վճարման, հետևաբար պետական տուրքի մասով դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված»:

Վճռաբեկ դատարանի դատավոր Գ. Հակոբյան, համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերում Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կողմից արտահայտված կարծիքի հետ, շարադրում եմ հատուկ կարծիքս դրա վերաբերյալ:

Այսպես՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքում պետք է նշվեն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքը և դրա հիմնավորումը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի իմաստով՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, եթե առնվազն մեկ այլ գործով ստորադաս դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտում միևնույն նորմը կիրառվել է կամ չի կիրառվել հակասող մեկնաբանությամբ, բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է Վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը, դատարանի կիրառած նյութական կամ դատավարական իրավունքի նորմի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ նույն հոդվածի իմաստով՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, եթե բողոքարկվող դատական ակտը կայացնելիս դատարանը թույլ է տվել նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն եռթյունը:

Տվյալ դեպքում, կարծում եմ, որ բողոք բերած անձինք վճռաբեկ բողոքում չեն նշել վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքը և դրա հիմնավորումը, որի պայմաններում Վճռաբեկ դատարանը, 26.05.2021 թվականին որոշում կայացնելով ներկայացված վճռաբեկ բողոքներն այլ հիմքերով վերադարձնելու մասին, պարտավոր էր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին մասով, վճռաբեկ բողոքները վերադարձնել դրանք նաև նույն օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի պահանջներին չհամապատասխանելու պատճառաբանությամբ: Մինչդեռ Վճռաբեկ դատարանը նման հիմքով վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշում չի կայացրել և դրա փոխարեն որոշում է կայացրել կրկին անգամ ներկայացված վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու մասին՝ խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասը: **Ընդ որում նաև հենց դրանով է պայմանավորված եղել իմ կողմից վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցին դեմ քվեարկելը և վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու մասին որոշումները չստորագրելը:**

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ նաև կարծում եմ, որ նման պայմաններում Վճռաբեկ դատարանն ինչպես չէր կարող վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորել վճռաբեկ բողոքում չնշված՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով՝ նշելով, թե իբրև Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20.1-րդ հոդվածի 1-ին մասի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն եռթյունը, այնպես էլ չէր կարող եզրահանգում կատարել այն մասին, որ «վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար»:

Վերոգրյալը համարում եմ բավարար չանդրադառնալու համար Վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշման մեջ որպես նման եզրահանգման գալու համար նշված պատճառաբանություններին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հայտնում եմ իմ անհամաձայնությունը Վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշման վերաբերյալ:

Դատավոր՝

Գ. Հակոբյան

Պաշտոնական հրապարակման օրը՝ 28 նոյեմբերի 2023 թվական: